

2011-
2012

ԲԱՆԲԵՐ
ВЕСТНИК
BULLETIN



ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ուսումնամեթոդական հոդվածներ 8-9.1

ЕРЕВАНСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ
КОНСЕРВАТОРИИ ИМЕНИ КОМИТАСА
учебно-методические статьи 8-9.1

OF YEREVAN STATE CONSERVATORY
AFTER KOMITAS
teaching methodological articles 8-9.1

2011-
2012

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМЕНИ КОМИТАСА
YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԹԹՈՂԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ
8-9.1/2011-2012

ВЕСТНИК ЕРЕВАНСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ
КОНСЕРВАТОРИИ ИМЕНИ КОМИТАСА
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ СТАТЬИ
8-9.1/2011-2012

BULLETIN OF YEREVAN STATE
CONSERVATORY AFTER KOMITAS
TEACHING METHODOLOGICAL ARTICLES
8-9.1/2011-2012

**Պարբերականը հաստատված է երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի գիտական խորհրդում**

**Լույս է տեսնում տարեկան երկու անգամ
Հիմնադրվել է 2004 թվականին**

Խմբագրական խորհուրդ. Ճախագահ՝ Շ. Գ. Շահինյան (պրոֆեսոր, ԵՊԿ ռեկտոր, գիտական խորհրդի), Ս. Գ. Սարաջյան (պրոֆեսոր, ԵՊԿ հրատարակչական խորհրդի Ճախագահ), Ռ. Բ. Ամիրխանյան (ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր), Ա. Ա. Սարյան (ՀՀ վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր), Մ. Ռ. Նավոյան (ՀՀ վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր), Ի. Լ. Ջոլոտովա (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր), Լ.Վ. Երնջական (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր), Գ. Գ. Սմբատյան (ՀՀ վաստակավոր գործիչ, պրոֆեսոր), Է. Զ. Թադևոսյան (ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր), Դ. Գ. Ղազարյան (ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր), Ն. Ֆ. Ավետիսյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր), Ա. Վ. Բաբախանյան (պրոֆեսոր), Ա. Ս. Բերբերյան (պրոֆեսոր), Ի. Մ. Յավրյան (պրոֆեսոր), Ա. Վ. Կոլոսարյան (պրոֆեսոր), Ա. Ս. Գյուլբուրադյան (պրոֆեսոր):

Գրախոսներ. Պրոֆեսորներ Ա. Ա. Սարյան (ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու), Շ. Գ. Ափոյան (արվեստագիտության թեկնածու, Մովսես Խորենացու շքանշանակիր), Է. Ս. Գասպարյան, Ա. Ս. Բերբերյան, Յու. Վ. Յուզբաշյան (մանկավարժական գիտությունների դոկտոր), Ա. Վ. Կոլոսարյան, Գ. Ց. Սմբատյան, Մ. Ա. Կոկժան (արվեստագիտության թեկնածու), Ա. Ս. Կոստյան (ՀՀ վաստակավոր արտիստ), Մ. Ի. Հովսեփյան, Ե. Դ. Երզնկյան (ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ), Ս. Ց. Վարդազարյան (ՀՀ ժողովրդական արտիստ), Ա. Գ. Բուդաղյան (ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու), Ա. Գ. Հակոբյան, Ա. Ս. Գյուլբուրադյան, Ա. ԵՎ. Ղազարյան, Ն. Ֆ. Ավետիսյան (արվեստագիտության թեկնածու), Գ. Գ. Հովունց (ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ), Ա. Գ. Սարաջյան, Ա. Ա. Մարտիրոսյան, Ա. Ա. Ներսիսյան, Ա. Ռ. Գրիգորյան:

Պոեզնոմներ Լ. Ա. Մաքսևսյան (արվեստագիտության թեկնածու), Լ. Վ. Եփրեմյան (արվեստագիտության թեկնածու), Ծ. Գ. Մովսիսյան (արվեստագիտության թեկնածու), Մ. Մ. Սարգսյան, Ժ. Ա. Քոչինյան, Լ. Զ. Սահակյան (արվեստագիտության թեկնածու), Մ. Ա. Հովհաննիսյան, Ժ. Գ. Բաղդասարյան, Գ. Ա. Հովհաննիսյան, Ա. Վ. Աճեմյան, Գ. Գ. Պետրոսյան, Ա. Ռ. Իսրայելյան, Մ. Վ. Մելիք-Ստեփանյան, Լ. Գ. Ասրիկա:

Դասախոսներ Օ. Յու. Նուրիջանյան (արվեստագիտության թեկնածու), Ս. Ա. Շերյանյան, /Տես նաև համապատասխան հոդվածների Տեղեկատվությունը:

Հիմնադիրներ՝ պրոֆեսոր, հրատարակչական խորհրդի Ճախագահ Ս. Գ. Սարաջյան,
«ԵՊԿ հրատարակչության» տնօրեն-հրատարակիչ, երաժշտագետ Գ. Կ. Շաղոյան
Կազմող և պատասխանատու խմբագիր՝ Գ. Կ. Շաղոյան

ԲԱՆԱԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ուսումնամեթո-
դական հոլովածներ 8-9.1/2011-2012. - Երև. ԵՊԿ հրատարակչություն., 2013. - 364 էջ:

Սույն պարբերականը հանդիսանում է կոնսերվատորիայի դասախոսների նախնինում արվելներով հրատարակվող և հաջորդական համարը շարունակական է առկա՝ Բանբեր Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի: Այն ամփոփում է դասախոսների ուսումնամեթոդական հոլովածները և նախատեսված է երաժշտական բուհերի դասախոսների և ուսանողների համար, նպատակ ունի մանրաթանկու ուսումնական գործընթացի նաև առանձնահատուկ կատարողական արվեստի միջոցների և երաժշտագիտական մտքին վերաբերող:

ISSN 1829-4057

- © «ԵՊԿ հրատարակչություն» 2013,
- © "Издательство ЕГК" 2013,
- © "YSC Publishing House" 2013

Կազմողի կողմից

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան 90-ամյա գործունեության ընթացքում բազմաթիվ գրքերի և նոտային գրականության հրատարակությունների հեղինակ է հանդիսացել իր գիտական ներուժի՝ պրոֆեսոր-երախտավորների շնորհիվ: 2004 թ. հունվարի 28-ին, հիմք ընդունելով կոնսերվատորիայի կանոնադրության 2-րդ գլխի 10-րդ կետի գ) ենթակետը և Գիտական խորհրդի թիվ 1 որոշմամբ ստեղծվեց գիտական հրատարակումներ իրականացնող ստորաբաժինը՝ «ԵՊԿ հրատարակչություն»ը և անմիջապես էլ հիմնադրվեց նաև տարեկան ժողովածու: Այն 7 տարի շարունակ սպասված, հատկապես երաժշտական ուսումնամեթոդական և գիտամեթոդական մտքի արգասիքը հանդիսացող հրատարակություն է, մասնավորապես կատարողական արվեստի ասպարեզում: Դասավանդման վերլուծական միտքը այս տարիների ընթացքում է իր գրավոր արտահայտությունն զտել որպես շարունակական պարբերական: Այն 8-րդ գրքից սկսած վերանվանվեց Բանբեր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի՝ որպես պարբերական դասախոսների ուսումնամեթոդական և գիտամեթոդական հոդվածների համար: Պարբերաբար լույս է տեսնում տարին երկու անգամ: Կազմակերպական խնդիրների և փոփոխությունների պատճառով համապատասխան բոլի պահանջների սույն պարբերականը հրատարակվում է որպես 8-9/2011-2012 թվականների միացյալ, մեկի փոխարեն տարին երկու անգամ հրատարակություն: 2004-ից մինչև այժմ այն մեծապես նպաստում է դասախոսների փորձի փոխանակմանը՝ 175 ուսումնամեթոդական աշխատանքներով, երաժշտական բուհերի համար նախատեսված, այսինքն՝ ներառված են ոչ միայն կոնսերվատորիայի, այլ նաև իս. Արվյանի անվ. Գայկական պետական մանկավարժական համալսարանի երաժիշտ դասախոսների մի քանի հոդվածներ:

Գ. Կ. ՇԱԳՈՅԱՆ

*Հիմնադիր-հրատարակիչ,
կազմող և պատասխանատու խմբագիր, երաժշտագետ՝*

ՀՏԳ 786.2:372.8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ԱՄԲԻՈՆ
КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО
CHAIR OF GENERAL PIANO

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԱՎԹՅԱՆ

*Դաշնակահար,
Երևանի Կոմիտասի անվան
պեդագոգական կոնսերվատորիայի դոցենտ*

**ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ՆՎԱԳԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

***«Մանկավարժն առաջին
հերթին երաժշտության
ուսուցիչ պետք է լինի»:
Հ. Գ. ՆԵՅՅԱՌԻՁ***

Երաժշտությունը, ինչպես արվեստի մյուս ճյուղերը, արտացոլում է կյանքը: Երաժշտություն լսելը նշանակում է ընդհանրացված երաժշտական կերպարների մեջ լսել կյանքի այս կամ այն երևույթի անդրադարձը: Երաժշտություն հասկանալը նպաստում է զգացումների բարձր կուլտուրայի զարգացմանը: Այդ պատճառով երաժշտության հետ առնչվելը, այն ճշմարիտ գնահատողներ դաստիարակելը, երաժշտությունը գիտակցաբար լսելու և հասկանալու ունակությամբ բազմակողմանի անհատականություն ձևավորելը հանդիսանում է երաժշտական մանկավարժության արդի հիմնական խնդիրը: Հոգեբանության և մանկավարժության ժամանակակից նվաճումները հաստատագրել են երեխաների երաժշտական կրթության կարևորությունը ոչ միայն գեղագիտական, այլև մտավոր զարգացման համար: Նշանակում է, երաժշտությամբ զործնականորեն զբաղվող երեխան մտածում, զգում, զարգանում է այլ կերպ, քան երաժշտություն միայն լսող և երաժշտության մասին միայն խոսող երեխան:

Հոգեբան Ա. Մասլոուն գրել է. «Երեխային պետք է սովորեցնենք լինել ստեղծագործող անհատականություն, որն ի վիճակի կլինի ընկալելու նորությունները, կարողանա հանպատրաստից ստեղծագործել: Այսօր, մեզ անհրաժեշտ է այլ որակի՝ բավական ուժեղ ու տոկուն զգացմունքով մարդ, որպեսզի համարձակ մուտք գործի ժամանակակից իրականություն և ստեղծագործորեն մոտենա խընդրին» (1. էջ 205):

Երաժշտություն շատ երեխաներ են սովորում, սակայն քչերն են հետազայում մասնագետ դառնում: Այդ պատճառով, երաժշտական ուսումնական հաստատություն մուտք գործող բոլոր սովորողներն, առանց բացառության, պետք է ընկղմվեն ստեղծագործական մթնոլորտ: Անհրաժեշտ է, որ հենց սկզբից մանկավարժն աշակերտի գիտակցության մեջ հաստատի, որ այդ ուսումը արվեստի հանդեպ «կրքոտ» սեր է պահանջում: Կ. Ս. Ստանիսլավսկին արդարացիորեն հաստատում է, որ հենց այդպիսի սերն է ծնում եռանդ, կամք, ձևավորում, օգնում է հաղթահարել երաժշտական կրթության ընթացքում ծագած դժվարությունները, կենտրոնացնել ուշադրությունը, առաջ է բերում «ստեղծագործական այն հանգստությունը», առանց որի հնարավոր չէ ներթափանցել ստեղծագործության էության մեջ և տիրապետել արվեստի արտահայտչամիջոցներին: Մանկավարժի խնդիրն է սաների մոտ ամեն կերպ խթանել ստեղծագործական ներուժի զարգացման հրաշալի ընթացքը: Միշտ պետք է հիշել, որ մանկավարժները սովորեցնում են ոչ միայն գործիքով նվագել, այլև լայն առումով՝ երաժշտություն:

XX դարի այնպիսի երաժշտական գործիչներ, պրոֆեսորներ ու կոմպոզիտորներ, ինչպիսիք են Կառլ Օրֆը, Ջոլտան Կոդայը, Կառլ-Ադոլֆ Սարտինսենը, Դմիտրի Կաբալևսկին և ուրիշներ, շատ ժամանակ են նվիրել երեխաների երաժշտական դաստիարակության հարցերին: Նրանք մտածել ու ստեղծել են ինքնատիպ մեթոդական համակարգեր, որոնց նպատակն է դաստիարակել երաժշտություն սիրող, հասկացող ու իսկապես պատկերացում կազմող երիտասարդներ: Այդ մեթոդի էությունը կատարողականության ստեղծագործական ձևերի զարգացումն է. լսողությամբ նվագելը, նվագակցությունը, իմպրովիզացիան: Սովորողների գեղագիտական դաստիարակությունը ձևավորվում է երաժշտական բազմա-

զան տպավորությունների համապարփակ հիմքի վրա, երաժշտական տարբեր դասընթացներն ամբողջությամբ կազմում են գեղարվեստական կուռ ցիկլ: Երաժշտական մանկավարժական երկացանկում ժողովրդական երգերի մշակումների կամ ժողովրդական երգերի ոգով ու ավանդույթներով գրված երաժշտության օգտագործումը այդ մեթոդի բնորոշ առանձնահատկությունն է: Այս առումով հետաքրքրական է այն փաստը, որ Հայաստանում ականավոր երաժիշտ-մանկավարժներ Գ. Վ. Սարաջևն ու Վ. Վ. Ումր-Շատը մույնպես ստեղծեցին մեթոդական ժողովածու՝ «Դաշնամուրային նվագի ձեռնարկ»ը (*«Школа игры на фортепиано»*), որը ներառում է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ և ժողովրդական մեղեդիների մշակումներ:

Անվիճելի է, որ երաժշտական դաստիարակությունը չի առնչվում միայն աճող սերնդի կատարողական արվեստին: Առաջին հերթին այն բնատուր երաժշտաստեղծագործական ներուժի առավելագույն զարգացումն է: Երաժշտական հենց այդպիսի դաստիարակության միջոցով լիարժեք բացահայտվում են մարդու հուզական, մտավոր և բարոյական հատկանիշները:

Դաշնամուր կամ որևէ այլ գործիքով նվագել սովորեցնելն ունի մանկավարժի ու աշակերտի անհատական շփման առանձնահատկություն: Աշակերտի անհատականության ձևավորման մեջ դժվար է գերազնահատել մանկավարժի դերը: Մասնագիտության ուսուցիչը, ըստ Հ. Գ. Նեյհաուզի, պետք է աշակերտին փոխանցի գիտելիքների ամբողջ համակարգը. *«Ուսուցման հատկապես նախնական աստիճանում գտնվող սովորողի համար մանկավարժը պետք է միաժամանակ լինի երաժշտության պատմաբան, տեսաբան, սոլֆեջջոյի, հարմոնիայի, պոլիֆոնիայի ու դաշնամուրի դասատու»* (2. էջ 202): Հետևաբար, մանկավարժից պահանջվում է աշակերտին իրական արվեստի ոլորտ ներգրավելու, դասարանում իրական գեղարվեստական մթնոլորտ ստեղծելու պատասխանատու գործը: Մանկավարժը, Ս. Ի. Սավչինսկու արտահայտությամբ, պետք է սիրի աշակերտին, գրավի նրա վստահությունը, ճանաչի, կարողանա ազդեցություն ունենալ:

Ուսուցումը սկսվում է ներքին լսողության պատկերացումը դաստիարակելով: Պետք չէ ապացուցել, թե յուրաքանչյուր երաժշտի և

հատկապես դաշնակահարի համար որքան կարևոր է լսողությամբ նվագելու և տեղում տոնայնական անցումներ (տրանսպոզիցիա) կատարելու հմտությունը: Լսողությամբ նվագելու փորձը զարգացնում և ամրապնդում է հիշողությունն ու ներքին լսողությունը: Այդ կերպ աշակերտը դաշնամուրով նվագելիս երաժշտության ոլորտում ավելի ազատ է զգում և չի շփոթվում, եթե կատարման ընթացքում որևէ անհաջողություն է լինում: Լսողությամբ նվագելն՝ իմպրովիզացիոն արվեստի մախադրյալն է: Մանկավարժների մեծ մասը դաշնամուր նվագել սովորեցնելը սկսում են լսողությամբ կարճ մեղեդիների ու դարձվածքների տրանսպոզիցիաների ընտրությունից: Ցավոք, հետագայում այդպիսի գործընթացն ընդհատվում է, ու այդ հմտությունը «մարում է»: Մանկավարժներին հայտնի է, որ ուսուցանվող գրականության աճող բարդությամբ զուգահեռ, լսողությամբ նվագելու և մոտային տեքստ կարդալու ունակությունները հետ են մնում տեխնիկական զարգացման հմտությունից: Բացառություն են կազմում բնատուր վառ տվյալներ ունեցող մի քանի աշակերտ: Նոտային տեքստը վատ կարդացող աշակերտը դժվարանում է երաժշտությանը ինքնուրույն ծանոթանալ, սահմանափակում է իր տեսադաշտը: Այդ պատճառով, երաժշտության բնագավառում առաջին իսկ քայլերից անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել թերթից ընթերցմանը: Մասնագետները խորհուրդ են տալիս կոփել մոտային նշանների արագ ճեակցիան, այն է՝ առաջարկել մոտաներով նվագել, առանց ստեղնաշարին մայելու, այսինքն՝ զարգացնել ամուր տեսաշարժողական կապերը (մոտաստեղնաշար)՝ մպաստելով տարածական արագ և ճշգրիտ կողմնորոշմանը: Կարևոր է՝ նվագի ընթացքը կանխելով, տեքստի մեծ հատվածներն ընդգրկելու կարողությունը: Խորհուրդ է տրվում օգտագործել բառային տեքստի տեխնոլոգիան, որի ընթացքում աչքը մեկ տողով և ավելի առաջ է ընկնում:

Սովորողների ստեղծագործական տվյալների բազմակողմանի զարգացումը մպատակահարմար է շարունակել ուսման ամբողջ ընթացքում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է առաջնորդվել յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրություններով ու հնարավորություններով:

Դաշնամուրային նվագի ուսուցման ընթացքի հիմքը ստեղծա-

գործությունը լավ սովորելն է: Տարբեր ստեղծագործությունների ծանոթանալով ընդլայնվում է երաժշտական տեսադաշտը, աշակերտները ծանոթանում են երաժշտական խոսքի, նրա արտահայտիչ հնչողության, կառուցվածքի հետ, ձեռք են բերում կատարողական առաջին ունակությունները կամ զարգացնում արդեն գոյություն ունեցողները, կատարելագործում են երաժշտական հիշողությունը, կատարողական ուշադրությունն ու երաժշտական ձևի զգացողությունը:

Ժանրի, ձևի, ոճի առումով բազմազան երաժշտական նյութն ուսումնասիրելուց առաջ աշակերտը պետք է ուսումնասիրի ստեղծագործությունը, որպեսզի ամբողջական պատկերացում ունենա նրա բնույթի ու կառուցվածքի մասին: Որպեսզի ստեղծագործությունը լինի հասկանալի ու կարողանա աշակերտին «բորբոքել», ուսուցիչը ոչ թե պետք է նվագի մեղմ, խուլ, այլ՝ բնույթին համապատասխան ու անհրաժեշտ տեմպով: Բնույթի, կառուցվածքային ընդհանուր պատկերացման մասին գաղափար կազմելուց հետո սկսում է ստեղծագործությունը մանրակրկիտ վերլուծելու և սովորելու փուլը: Այս ընթացքը խլում է ժամանակի ու աշխատանքի այն մեծ մասը, որն աշակերտը հատկացնում է տվյալ ստեղծագործությունը տիրապետելու համար: Որոշիչ ու պատասխանատու այդ փուլի հիմնական բովանդակությունը կազմում է աշխատանքն ըստ մասերի, դրանցից յուրաքանչյուրի տեխնիկական յուրացումն ու գեղարվեստական մշակումը: Ամբողջը ժամանակավորապես հետին պլան է մղվում, հաջորդաբար քողարկվում է այս կամ այն տարրով, սակայն, ստեղծագործությունը սովորելու և ճիշտ սերտելու դեպքում «ամբողջը» միշտ պետք է զգացվի որպես երկրորդական ֆոն: Հակառակ դեպքում կկորչի տարրերին ուղղված աշխատանքի չափանիշը: Նոտային տեքստի հանգամանալի ուսումնասիրումը աշակերտին հնարավորություն է տալիս խորամուխ լինել ստեղծագործության բովանդակության և երաժշտական կերպարի տիպական առանձնահատկություններին: Ստեղծագործությունը սերտելու ընթացքում, ըստ Կ. Ն. Իգումնովի, աշակերտը պետք է «անվերջ լսի երաժշտությունը»: Սա այն պարտադիր պայմանն է, առանց որի անհնար է թափանցել ստեղծագործության բովանդակության մեջ: Միայն ինքն իրեն ուշադիր լսելով աշակերտը կհասնի դաշնամու-

րային հնչյունի անհրաժեշտ որակին ու բազմազանությամբ, այսինքն նա պետք է աշխատի երաժշտական արտահայտչականության ամենաեական կողմերից մեկի վրա, առանց որի ամհնար է կատարման բովանդակության բացահայտումը: Աշխատանքի մեթոդում աշակերտի հաճախ հանդիպող մեծ սխալներից մեկն այն է, երբ ստեղծագործությունը բազմակի ու մեխանիկորեն նվագում է սկզբից մինչև վերջ: Այդ ժամաակ նա մտքով շեղվում, կտրվում է, դժվար է կենտրոնանում ստեղծագործության բովանդակության և այս կամ այն կատարողական խնդիրների վրա: Ստեղծագործական էության մասին խոսք անգամ լինել չի կարող: Արդյունքում, դժվար հատվածներն այդպես էլ չեն կարող ստացվել (դրանց վրա սովորողի ուշադրությունը հատուկ ուղղված չի եղել), իսկ դյուրին հատվածներն այնքան են ծանծրացնում, որ աշակերտի համար գեղարվեստական իմաստը կորչում է: Ի վերջո, ստեղծագործության հետաքրքրությունը կորչում է մինչև այն պահը, երբ դրա կատարումը վերջնականապես սովորել է: Ահա թե ինչու, երբ աշակերտը ամբողջությամբ է ծանոթանում ստեղծագործությանը, խորհուրդ է տրվում տվյալ կատարման համար առանձնացնել առավել դժվար հատվածները և հատուկ անդրադառնալ դրանց յուրացմանը: Ստեղծագործության վրա աշխատելու ընթացքում լսողական պատկերացումների, մկանային զգացողությունների, հետևաբար նաև շարժողական հմտությունների միջև ծագում են անհրաժեշտ պայմանական կապեր: Այս կամ այն ունակությունների ընտրությունն ի վերջո պայմանավորված է դրանց գեղարվեստական միտվածությամբ, այսինքն այն պետք է առավելագույնս համապատասխանի գեղարվեստական նշանակությանը: Հսկելով և ստուգելով այս կամ այն շարժումները, միջոցները, սովորողը դրանք անցկացնում է իր գիտակցության հսկողության միջով, դրանով նա հասնում է այսպես կոչված կատարողական հմտությունների մեքենայացմանը, ինչը թեթևացնում է կատարողական ընթացքը, նվագողին ազատում տեխնիկային մանրազնին հետևելուց և թույլ է տալիս ուշադրությունը բևեռել գեղարվեստական խնդիրներին: Ամենօրյա պարապմունքները, յուրաքանչյուր ուշադիր դիտարկած հատվածը նպաստում են գեղարվեստական և տեխնիկական մտադրությունների կատարելագործմանը, ստեղծագործության մտահղացման մեջ նո-

րության են ներմուծում, ճշտում ու խորացնում են ամբողջի մասին նախկին պատկերացումները: Երաժշտական ստեղծագործությունները մասերի բաժանելու սկզբունքը աշխատանքի ժամանակ հանգեցնում է կենտրոնացման. նախկինում աշակերտն առանց անհրաժեշտ ուշադրության նվազում էր ամբողջ մանրանվագը, իսկ այժմ՝ առանձին մի մասը: Եվ այստեղ կարևոր է փոխել աշխատանքի բնույթը և ուշադրությունն ուղղել հնարավոր խնդրի հաղթահարմանը:

Որպեսզի աշակերտի մեջ ամրանա ամբողջի և նրա մասերի զգացողությունը, մանկավարժն առաջին հերթին ստեղծագործությունը պետք է ճիշտ բաժանի մասերի, ընդ որում պետք է բաժանել ստեղծագործության օրգանական մասերը, այլ ոչ պատահական հատվածները՝ աշակերտի ուշադրությունը բեռնելով կատարման այս կամ այն մանրամասին, որն ամբողջությամբ կնպաստի երաժշտական կերպարի բացահայտմանը: Ստեղծագործության առանձին բաղկացուցիչ մասերին ուշադրության կենտրոնացումը նման է ռենտգենյան սարքավորման օգնությամբ դիտարկմանը:

Մեծ նշանակություն ունի աշակերտի պատկերացման ստեղծագործական զարգացումը: Այն ուղղակիորեն կապված է մանկավարժի ու աշակերտի աշխատանքի մեթոդի, ինչպես նաև վերջինիս ուշադրության դաստիարակման հետ:

Ուշադրությունը հաճախ նմանեցնում են լույսին. ցրված ուշադրության, ինչպես նաև ցրված լույսի ժամանակ, մեծ տարածքը թույլ է լուսավորվում, կենտրոնացած ուշադրությունը նման է ռեֆլեկտորի, երբ նույն այդ լույսը կենտրոնացվում է ոչ մեծ տարածքի վրա՝ վառ լուսավորելով յուրաքանչյուր տարրը: Ստեղծագործական ջիղով օժտված մարդկանց բնորոշ է ուշադրության բացառիկ կենտրոնացում:

Պատկերացումը կարելի է զարգացնել, այն էլ զագալիորեն:

Օրինակ, Կ. Ս. Ստանիսլավսկին մշակել է «խայծերի» մի ամբողջ համակարգ, որոնք խթանում են պատկերացման աշխատանքը, օգնում են աշակերտին հստակեցնել, մասնատել սեփական պատկերացումները: Էականում այդպիսի «խայծերից» են նաև կերպարային պատկերացումները, կատարվող ստեղծագործությունների մտացածին ծրագրերը, որոնց օգնությամբ են դիմում երաժիշտանակավարժները (3.): Նոտային սիմվոլիկայում հեղինակային մըտ-

քի, զգացումի ու կերպարի անշարժությունը կատարողը պետք է կենդանացմի իր պատկերացման ջերմությամբ, որը սովորելու ընթացքում ստացել է իր ուսուցչից:

Գիտությունն ապացուցում է, որ պատկերացմանն առնչվող բոլոր հասկացությունները կառուցվում են հիշողության մեջ պահպանված ու անցյալի ընկալումներից ստացած նյութի վրա: Նշանակում է՝ հիշողությունը երևակայության շտեմարանն է: Երևակայության ուժեղ և թույլ լինելը կախված է այդ «շտեմարան»ում պահվող կերպարների հարուստ և աղքատ պաշարից:

Ինչքան ցածր է երաժշտագեղարվեստական մակարդակը, այսինքն՝ լսողության, հիշողության, պատկերացման, ինտելեկտի տվյալները, ինչպես նաև աշակերտի տեխնիկական ընդունակությունները, այնքան մրա և ուսուցչի համար մեծ ու առավել բարդ խնդիր կլինի գեղարվեստական կերպարի արտահայտումը, անգամ, եթե լավ տիրապետում է տեխնիկական կատարմանը: Շատ ավելի դժվար կլինի նրանից ստանալ գեղարվեստական բավարարվածություն, հետաքրքրություն, հուզիչ և գերող կատարում: Նման դեպքերում մանկավարժին մնում է հաջող մետաֆորներով, բանաստեղծական կերպարներով, բնության ու կյանքի երևույթների նմանություններով արթնացնել աշակերտի երևակայությունը:

Դ. Դ. Շոստակովիչի «Գարնանային վալսը» բոլորովին այլ կերպ կհնչի, եթե սովորողին հուշես, որ առաջին ակկորդները տանիքից թափվող կաթիլներ են, հետո՝ ոչ մեծ առվակներ, որոնք լցվում են ավելի խոշորների մեջ: Կուլմինացիայում՝ գարնանային ջերմ արևից բնությունը բուռն զարթոնք է ապրում:

Մանկավարժը համեմատություններից պետք է կարողանա օգտվել: Վառ և ռելիեֆային արտահայտչամիջոցը հաճախ համեմատությամբ գործում բնույթ է տալիս: Օրինակ՝ Դ. Շոստակովիչի «*Adagio*»-ի միջին մասի առաջին ֆրագմ աշակերտը կարող է թավջութակի հընչողություն պատկերացնել, իսկ երկրորդը՝ ջութակի: Իհարկե, դա չի արվում, որպեսզի աշակերտին առաջարկվի ամհնար խնդիր, բնական է, որ դրանից հետո դաշնամուրը չէր կարող հնչել թավջութակի կամ ջութակի նման: Բայց այդ համադրություններն ի վիճակի են արթնացնել աշակերտի երևակայությունը և նպաստում են դաշնամուրային ինքնատիպ հնչողության որոնումներին, որոնք կարող են

հիշեցնել այդ գործիքների հնչողությունը:

Պակաս կարևոր չէ անհրաժեշտ համեմատություն ու կերպար փնտրելը: Նախաձեռնող պատկերացում ունեցող աշակերտին հենց կյանքն է տալիս անհրաժեշտ նյութը. կարդացած պատմվածքը, դիտած ներկայացումը, լսած կոնցերտը. այս ամենը նպաստում է աշակերտի երևակայության աշխատանքին:

Կատարողն այնքան պետք է մերձենա ստեղծած կերպարին, հետևաբար ունկնդիրներին այն ներկայացնի այնպիսի եռանդով, համոզումով և անկաշկանդությամբ, ասես շարադրում է սեփական մտքերն ու գաղափարները:

Տվյալ փուլի համար աշակերտի ընդունակություններին և նրա գեղարվեստական ու տեխնիկական զարգացմանը համապատասխան նվագացանկն ընտրելիս ուսուցչի համար, բնականաբար, ելակետ պետք է լինի այդ ստեղծագործությունների երաժշտական բովանդակությունը, դրանց գեղարվեստական կերպարների վառ հստակությունն ու մատչելիությունը:

Բովանդակության կերպարային ընկալմանը շատ անգամ օգնում է մանրամասն ծրագրային անվանումը, այն միանգամից աշակերտին կողմնորոշում է երաժշտության բնույթի առումով, օրինակ՝ «Քայլերգ», «Թախծոտ երգ», «Օրորոցային» և այլն:

Ուսման ընթացքում նախատեսված է աշակերտին ծանոթացնել գեղարվեստական տարբեր ոճերին ու ազգային դպրոցների երաժշտական ստեղծագործություններին, ինչը նպաստում է նրա գեղարվեստական ճաշակի և ոճի զգացողության զարգացմանը: Գեղարվեստական ստեղծագործության հետ աշխատանքի ընթացքում մանկավարժը չպետք է մոռանա հիմնական խնդիրներից մեկը, այն է՝ առավել բարդ գեղարվեստական խնդիրներն ինքնուրույն լուծելու ընդունակությունը, այսինքն՝ զարգացնել աշակերտի սեփական նախաձեռնությունը: Այն նպաստում է առանձին ստեղծագործությունների որակյալ և ինքնուրույն ուսումնասիրմանը:

Նկարիչները բազմիցս գրել են, որ «նայել» և «տեսնել» բառերը հոմանիշներ չեն, որ կտավին պատկերված բոլոր առարկաները կարելի է պարզ տեսնել և, միևնույն ժամանակ, կտավը, որպես արվեստի գործ չտեսնել: Երաժիշտները նույնպես մատնանշում են, որ ստեղծագործությունը լսել՝ դեռ չի նշանակում երաժշտությունը լը-

սել իբրև արվեստի գործ:

Երաժշտական ստեղծագործության հետ աշխատելիս աշակերտի մոտ պետք է զարգացնել արտահայտիչ, հյութեղ, ճկուն, դինամիկ, բազմակերպ ու գեղեցիկ հնչողության արտաբերման ունակություններ: Բնական է, որ չպետք է լինի հնչյունի գալթակողություն՝ հանուն հնչյունի: Հնչյունը միայն իմաստ է ստանում, երբ արտահայտիչ է և օգտագործվում է երաժշտական բովանդակություն արտահայտելու համար: Այդ պատճառով, հնչյունին, ինչպես նաև երաժշտական ամբողջ ստեղծագործությանն առնչվող աշխատանքը միայն տեխնիկական չէ: Այստեղ ակտիվ մասնակցում են կատարողի հուզական ու մտավոր ընդունակությունները:

Իրական, գեղարվեստական արտահայտչականությունը չի կարող փոփոխվել, ինչպես հաճախ է լինում, երբ առանձին ֆրագմենտ կոկիկ «դասավորված են» և նրան տալիս են չափազանց քաղցր սենտիմենտալ երանգ:

Նման վատ ճաշակի դեմ լավագույն միջոց է ծառայում կառուցվածքի խոշոր բաժինների մեկոդիկ գծերի լայն ընդգրկմանն անընդհատ ձգտումը: Օգտակար է գիտակցել առանձին կառուցվածքների առավել նշանակալի հնչյունները՝ ինտոնացիոն կետերը, որոնք ասես ծգողության կետեր լինեն, դրանք դեպի իրենց են բերում կենտրոնական այն հանգույցները, որոնց վրա կառուցվում է ամեն ինչ:

Պակաս կարևոր չէ զգալ և փոխանցել «շնչառության» պահերը՝ առանձին ֆրագմենտի միջև առկա ցեզուրաները: Կատարողը ունկընդրի հետ պետք է կարողանա երաժշտական լեզվով խոսել, որպեսզի ստեղծվի այնպիսի պատկերացում, ասես հենց կատարողն է գրել այդ մանրամվազը և նա ունկնդրին շարադրում է սեփական զգացումներն ու մտքերը:

Օրինակ, Պ. Ի. Չայկովսկու երաժշտությանը բնորոշ է երաժշտական խոսքի ինտոնացիոն արտահայտչականությունը: Նրա յուրաքանչյուր ինտոնացիան լի է բովանդակությամբ. այն արտահայտող նրբանկատ կատարողը ստեղծում է բազմաթիվ երանգներով լի հարուստ, բազմակողմանի կերպար: Պետք չէ շփոթել նման երանգները զուտ արտաքին փոփոխությունների (դինամիկայում, արտիկուլյացիայում և այլն) հետ, դրանք մանկավարժներից ոմանք հաճախ խորհուրդ են տալիս իրենց աշակերտներին, որպեսզի նրանց նվա-

գը միակերպ ու ձանձրալի չլինի: Սովորողը հնչերանգներն իրականացնում է, բայց կատարումը միայն տուժում է, վառ չի ստացվում, այլ դառնում է անբնական:

Սա տեղի է ունենում այն պատճառով, որ տրված ցուցումների իրագործումը մակերեսային է, իսկ դրանց անհրաժեշտությունն աշակերտը անհրաժեշտ չափով չի զգացել: Նման երանգների նշումը ոչ այնքան երաժշտության էությունը բացահայտելու մեջ է, որքան կատարման բովանդակության բացակայությունը սքողելու:

Այսպիսի երևույթներից խուսափելու համար կարևոր է բացահայտել դինամիկ նշումների իմաստը՝ ելնելով երաժշտության բովանդակությունից և բարձրացնել ամբողջի կամ առանձին հատվածի ստեղծագործական ընկալման ակտիվությունը: Այդ դեպքում անհրաժեշտ նրբերանգը կլինի բնական, իսկ կատարումը՝ ավելի վառ:

Ներկայացնեն միայն մեկ օրինակ: Աշակերտը Պ. Ի. Չայկովսկու «Ձմեռադիկների» միջին մասը ստատիկ ու միակերպ է նվագում: Համապատասխան դիտողությունից և ավելի արտահայտիչ նվագելու առաջարկից հետո աշակերտը փորձում է իր թերությունները հաղթահարել դինամիկայի ընդգծված վերարտադրմամբ՝ շեշտն առաջին տակտում և *crescendo*՝ երկրորդում: Բայց կատարումը ավելի կոպիտ է դառնում: Այս դեպքում անհրաժեշտ է խոսել երաժշտության բնույթի մասին, ուշադրություն դարձնել վալսայնության տարրերին, մեղեդու երգայնությանը, առաջարկել տասնվեցերորդական նոտաները կատարել թեթև քամու նման, դրանից հետո նա կընդգծի պասսաժի վերջում գոյություն ունեցող և աննկատ մնացած շտրիխը, և այս ամենը հաճախ բավական է, որպեսզի կատարումը փոխվի և դառնա ավելի լավ, առավել կենդանի ու ակտիվ: Այսինքն, դինամիկայի մասին ոչ մի խոսք չասելով և կատարման գեղարվեստական խնդրի վառ և համոզիչ բացահայտմամբ, մանկավարժը արագ ուղղում է դինամիկայի ոլորտում առկա թերությունները: Սա հատկապես կարևոր է ոճական կարգի որևէ դինամիկ օրինաչափությունների մասին եզրահանգումներ կատարելու համար: Օրինակ՝ աշխատանքի ընթացքում պետք է բացատրել Լ. վան Բեթհովենի երաժշտությանը բնորոշ հակադիր դինամիկայի սկզբունքը: Վերջինս վառ արտահայտվում է հենց նրա 1-ին Սոնատում: Սովորաբար գլխավոր պարտիայի մի մասում նշված *p* և *f* փոխարինում են

crescendo-ով: Այդ դեպքում աշակերտին պետք է ապացուցել, թե ինչքան արտահայտիչ են հեղինակային նրբերանգները (սեփական ցուցադրությամբ) և պատմել բեթհովենյան դինամիկայի սկզբունքների մասին:

Հատկապես դասական ոճի ստեղծագործություններում հակադրությունների համահավասարեցումը աշակերտական կատարմամբ հաճախակի հանդիպող երևույթ է: Աշխատելիս, երաժշտական ստեղծագործությունում հարկավոր է գտնել երաժշտական կերպարը, առավել լիարժեք ընդգծելով կատարողական մանրամասները:

Դասարանական պարապմունքը պետք է աշխատանք լինի ուժերի ներածին չափով, երաժշտությունը և դրա մարմնավորված կերպարը պետք է լսվի դաշնամուրային նվագում: Չպետք է սահմանափակվել կերպարի, բովանդակության, տրամադրության, գաղափարի, պոեզիայի մասին պատմություններով, այլ սեփական արտահայտությունների ու հնչյունի, ֆրազի, նրբերանգի ներշնչման, կատարյալ դաշնամուրային նվագով հասնել որոշակի կերպարային մարմնավորմանը: Դասավանդումը պետք է ստեղծագործական լինի, մանկավարժն աշխատանքում պետք է խուսափի շտամպներից, աշխատի հասկանալ իր աշակերտի անհատականությունը, նրա հոգևոր աշխարհը և ըստ դրա ընտրել ազդելու այս կամ այն մեթոդները: Մանկավարժը պետք է ավելի շատ բազմազանություն և հնարամտություն դրսևորի:

Կատարողական արվեստի հիմքում ակտիվ ստեղծագործական գործունեությունն է, որը ցնծության ու բավարարվածության զգացում է բերում, այն կանխատեսում է հափշտակվելու և ցանկանալու հատկության դաստիարակում, արտացոլում է մյուսներին կատարողական մտահղացումներ մարմնավորելու և հաղորդելու կենսական պահանջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Маслоу А.*, Задачи на будущее., Litton Education Publishing., 1968.
2. *Нейгауз Г. Г.*, Искусство фортепианной игры., М.: Музыка., 1961.
3. *Станиславский К. С.*, Работа актера над собой., том 3., М.: Искусство., 1935.

РЕЗЮМЕ

В методической работе доцента ЕРК Светланы Арташесовны Давтян "Развитие творческого начала в процессе обучения игре на фортепиано" обосновывается актуальность данной проблемы, раскрывается теоретическое и практическое значение творческого подхода в процессе музыкального обучения. Работа представляет интерес для фортепианных отделений музыкальных учреждений и приобретает особую значимость для контингента отделений общего фортепиано в силу специфики процесса обучения игре на втором инструменте.

SUMMARY

Svetlana A. Davtyan, Docent of YSC, - "The Development of Creativity in the Process of Learning to Play the Piano".

In the article the theoretical and practical meaning of the creative approach in the process of musical education is revealed. It is one of the most topical issues of modern music art. The work can be of interest for piano departments of musical institutions and may acquire a particular importance for staffs of departments of general piano due to the specificity of the process of learning to play the second instrument.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նրևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ընդհանուր դաշնամուրի ամբիոնի վարիչ, դաշնակահարուհի, դոցենտ Սվետլանա Արտաշեսի Դավթյանի «Դաշնամուրային նվագի ուսուցման ընթացքում արեղծագործական հիմունքների զարգացումը» ուսումնամեթոդական հոդվածը ընթերցվել է ընդհանուր դաշնամուրի ամբիոնի 2010 թ. նոյեմբերի 26-ին կայացած համերգից հետո Կոնսերվատորիայի ուսանողների խորհրդակցության ժամանակ, որտեղ ելույթ են ունեցել գրախոսներ՝ պրոֆեսորներ Էլենուրա Սամսոնի Գապարյանը, ինչպես նաև հրավիրված՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, Մոսկու Խորենացու շրանչանակիր Շուշանիկ Հարությունի Ափոյանը: Նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են մի շարք հոդվածների բովանդակությունը 30. 06. 2011 թ. ամբիոնի նիստով երաժշտավորել հրապարակման առյժ ժողովածուում:

УДК 786.2:372.8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՍՈՒՐԱԶԻՆ ՍՄԲՈՆ
КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО
CHAIR OF GENERAL PIANO

НАИРА МИХАЙЛОВНА АБРАМЯН

*Пианистка,
доцент Ереванской государственной
консерватории и.м.Комитаса*

**РАЗВИТИЕ ХУДОЖЕСТВЕННО-ОБРАЗНОГО
МЫШЛЕНИЯ НА МАТЕРИАЛЕ ФОРТЕПИАННОЙ
ПЕДАГОГИКИ**

Основным направлением работы современного вуза является подготовка специалистов такого уровня, при котором знание своего предмета не является достаточным признаком квалификации педагога. Задача педагога состоит не в передаче информации, а в "трансформации знания в акт размышления над ним". Экспериментальные исследования показали, что структура знаний педагога определяет структуру знаний учащихся. Это справедливо и по отношению к индивидуальному исполнительскому классу, в частности, к классу фортепиано. Овладение опытом поиска нового скажется на стиле мышления как самого студента, так и в процессе его будущей деятельности на его учениках. Лучшие педагоги-пианисты всегда искали пути наиболее эффективного развития самостоятельности, творческих способностей учащегося. Вместе с тем, достижения современной психологии мышления открывают новые пути совершенствования существующей методики.

Развитие исполнительского музыкального мышления происходит в условиях, когда изучение музыкального произведения с точки зрения раскрытия его содержания и создания исполни-

тельской трактовки представляет для учащегося-пианиста систематическое и планомерное решение указанных проблем.

Проблема исполнительского музыкального мышления как сфера творческой деятельности привлекает внимание не только музыкантов, педагогов, методистов, но также философов и психологов. А. Н. Сохор в отношении изучения проблемы музыкального мышления пишет: *"Музыкальное мышление... - сложное явление, требующее комплексного подхода к себе. Оно должно быть изучено одновременно с трех точек зрения: как пример обнаружения общих закономерностей любого человеческого мышления, как один из видов художественного мышления и как проявление специфических свойств музыки, ее имманентных особенностей"* (1. С. 59).

Возникая на основе практики, мышление тесно связано с чувственными формами познания. Но недостаточность средств, которыми они располагают, обуславливает объективную необходимость перехода к иной ступени познания - мышлению. *"Мышление соотносит данные ощущений и восприятий - сопоставляет, сравнивает, различает, раскрывает отношения, и через отношения между непосредственно чувственно данными свойствами вещей и явлений раскрывает новые, непосредственно чувственно не данные, абстрактные их свойства"*, - писал С. Л. Рубинштейн. *"В действительности существует единый процесс познания, который по необходимости начинается с чувственного и с такой же необходимостью выходит за его пределы - в абстрактное мышление"* (2. С. 340).

Бесконечная разносторонность связей человека с окружающей действительностью обуславливает появление разнообразных видов мышления, в которых различно проявляется соотношение двух форм познания - чувственных и логических. П. В. Копнин выделяет четыре группы видов мышления: *"общественное и индивидуальное, эмпирическое и теоретическое, эмоциональное и рациональное, научное и художественно-образное"* (3. С. 470).

Другим важным моментом для выяснения содержания поня-

тия "исполнительское музыкальное мышление" является связь общего мышления с языком и речью. Любой вид мышления невозможен без языка. В этом обнаруживается социальная, общественно-историческая сущность человеческого мышления.

Музыкальный язык М. Г. Арановский рассматривает как одну из разновидностей *"кодирующей системы, предназначенной для передачи особой информации"* (4. С. 90). Формирование музыкальной исполнительской "мысли" связано с процессом ее материализации в формах специфического языка.

Итак, с точки зрения раскрытия содержания исполнительского музыкального мышления для нас важна характеристика общего мышления как процесса обобщенного и опосредованного отражения, для которого характерна диалектическая связь чувственных и рациональных форм познания, связь с языком, речью, являющимися материальной оболочкой духовного содержания любого мышления. Исполнительское музыкальное мышление, как разновидность художественного мышления, может быть охарактеризовано как разновидность образного отражения действительности, для которой характерно отражение существенного, обобщенного, закономерного в чувственно конкретной форме, наполненной деталями непосредственного, индивидуального облика. Вместе с тем, это образность особого рода. Она не отражает конкретно-предметного содержания и не имеет прямого аналога в действительности, хотя порой для глубокого постижения используются жизненные ассоциации, переводящие язык эмоций на язык конкретно-предметного мира. Исполнительское музыкальное мышление в наименьшей мере, по сравнению с другими разновидностями художественного мышления, прибегает к понятийному мышлению, но тем не менее являет собой единство интеллектуальной и эмоциональной сферы, направленное на выполнение творческих задач.

Наиболее близко исполнительское музыкальное мышление по своей специфике стоит к музыкальному мышлению. Однако и здесь есть свои отличия. Обоим характерна звуковая форма выражения содержания. Но продукт музыкального мышления лишь

потенциально звуковой, в то время как продукт исполнительского музыкального мышления невозможен без звучания. Эта особенность влечет за собой проблему соотношения нотного текста и исполнительской интерпретации или объективного и субъективного в познании и воплощении. Таким образом, исполнительское музыкальное мышление - это процесс постижения авторского замысла и отбора исполнительских средств для адекватного его воплощения в исполнительском звучании, а также выражение своего отношения к воплощаемым чувствам, мыслям, идеям.

Вопрос о развитии исполнительского музыкального мышления возникает в процессе работы над произведением, его образно-эмоциональным содержанием. Здесь можно выделить более частные вопросы. Это - непосредственное восприятие как предпосылка и как результат развития исполнительского музыкального мышления, теоретическая оснащенность исполнителя и аналитические приемы изучения произведения как необходимое условие развития исполнительского музыкального мышления, исполнительское воображение и фантазия - важный компонент исполнительского музыкального мышления и другое. Одни педагоги считают, что формирование исполнительского музыкального мышления должно начинаться вместе с начальным обучением ученика игре на фортепиано. *"Работа над художественным образом должна начинаться одновременно с первоначальным обучением игре на фортепиано и усвоением нотной грамоты. Я этим хочу сказать, что если ребенок сможет воспроизвести какую-нибудь простейшую мелодию, необходимо убедиться, чтобы это первичное "исполнение" было выразительно, то есть чтобы характер исполнения точно соответствовал характеру ("содержанию") данной мелодии..."*, - пишет Г. Г. Нейгауз (5. С. 318).

Имея в виду начальный этап обучения, педагоги указывали на первенствующую роль в процессе развития исполнителя эмоциональной отзывчивости на музыку. И не случайно Нейгауз рекомендовал в начале обучения ребенка использовать народные

мелодии, которые даже "среднеодаренный ребенок" исполняет "воодушевленно". Г. П. Прокофьев в своей работе четко проводит мысль о том, что *"эмоциональная отзывчивость на музыку в процессе развития исполнителя имеет первенствующее значение"* (6. С. 479).

Вопросы исполнительского музыкального мышления освещались педагогами и методистами также в контексте проблемы "работа ученика над произведением", являющейся узловым моментом педагогического процесса. Изучение произведения начинается со стадии предварительного ознакомления с ним учащегося. И в этом процессе у учащегося должен сформироваться внутренне слышимый образ, "первичная эмоциональная гипотеза". Первое прочтение произведения должно быть *"эскизным"*, - говорил С. С. Прокофьев. При первом знакомстве следует играть *"от начала до конца"*, - рекомендовал Р. Шуман, *"сначала нужно бегло просмотреть всю часть"*, - считал Г. Бюлов, "про-играть в темпе не заботясь о точности", - таково было мнение Т. Лешетицкого. С. И. Савшинский говорил: *"... ничто не должно раньше времени уводить от непосредственного вслушивания и вживания в музыку, к рассуждению о ней"* (7. С. 187). Таким образом сторонники метода "непосредственного знакомства" с произведением придают особое значение эмоциональному восприятию на первом этапе изучения произведения. Здесь уместно высказывание П. Гогена: *"Сначала эмоция, а потом понимание!"* Это подготовительная стадия, предшествующая настоящей работе над произведением.

Другой точки зрения на содержание деятельности учащегося-исполнителя на первом этапе работы с произведением придерживаются А. Б. Гольденвейзер, Л. В. Николаев, К. Леймер, В. Гизекинг, А. Корто. Они выдвигают в качестве метода знакомства с произведением предварительный "умственный просмотр произведения". По мнению этих педагогов предварительная умственная работа с текстом уже сразу дает ученику определенное направление мысли, активизирует его мышление. Таким образом, для развития исполнительского музыкального

мышления значение первой стадии работы с произведением педагога и методисты видят в том, что в воображении учащегося должен зародиться внутренне слышимый музыкально-художественный образ, эмоционально-образное представление поэтического смысла нотной записи. Пути же могут быть различны - от чувств к размышлениям или от анализа текста к переживанию его как осмысленной структуры. При этом благоприятным условием для развития исполнительского музыкального мышления является проявление учащимися активного отношения к исполняемому.

Следующий этап - особая умственная активность. Это анализ музыкального сочинения, продумывание нотного текста во всех его деталях. Далее, как бы глубоко и детально музыкант не анализировал нотный текст, без способности к художественному воображению и эмоциональному "сопереживанию" музыки он не сможет передать в живом звучании содержание произведения. *"Музыкант должен обладать не только природной способностью эмоциональной отзывчивости на музыку, но и развивать в себе эти качества на основе все более тонкого понимания звуковой выразительности музыкального языка"* (5. С. 318).

Педагоги и методисты подчеркивают, что исполнительское музыкальное мышление может развиваться в условиях, когда работа над произведением подчинена сознательному построению исполнительской концепции, глубокому аналитическому изучению всех данных, связанных с изучаемым произведением, одухотворению его с помощью особого механизма - мозга - ассоциаций, аналогий, воображения. Ставя целью развитие исполнительского музыкального мышления, педагог должен стремиться к созданию условий для возникновения у учащегося внутренних представлений, предвосхищающих воплощение. Важно также наладить характер взаимодействия учителя и ученика.

А. Шнабель говорил, что роль педагога состоит в том, чтобы "открыть двери", а не в том, чтобы в них "проталкивать" учеников. В то же время можно наблюдать в практике отдельных педагогов излишнюю активность, парализующую деятельность са-

мого ученика и порождаящую его пассивность. А. Корто, например, говорил: *"Не забудьте, что следует все объяснить, но не утомляйте ученика"* (8. С. 230). Эта излишняя активность преподавателя не может свидетельствовать об активизации деятельности учащегося. Нельзя согласиться с высказыванием педагога и методиста Б. Л. Кременштейна: *"Учить - значит сообщать точные знания"* (9. С. 264-295). Для того, чтобы ответить что же должен представлять собой путь развития исполнительского музыкального мышления, необходимо обратиться к психологии мышления, выяснить закономерности его развития, условия, в которых оно развивается.

Одним из первых психологических учений об умственной деятельности было учение ассоцианистов, господствовавших в психологии XVII века. Согласно этому учению, структура умственной деятельности рассматривалась в чувственных образах и связях между ними (ассоциациях). Основные положения ассоцианистов были подвергнуты сомнению группой учеников Вундта под руководством Кюльне, так называемая "вюрцебургская школа". В истории психологии исследования этой школы считаются началом экспериментальных исследований мышления. Позитивные результаты - впервые была выделена роль задания как важной детерминанты мышления. Они показали несводимость мышления к памяти. Теоретическое осмысление экспериментов вюрцебургских ученых дал Зельц. Он выделил задачу - как основной, начальный элемент, а цель в качестве детерминанты. С обнаружением цели процесс мышления завершается.

Другой точки зрения по этому вопросу придерживались бихевиористы. По их мнению, главным принципом обучения являлась тренировка. Бихевиористы применили метод преодоления "препятствий", который отражает структуру мышления животного и распространили его на обучение человека.

Гештальд-психологи ограничили предмет психологического исследования мышления процессом продуктивного мышления. Они впервые эмпирически указали на проблемную ситуацию, которая стала в дальнейшем экспериментальной ситуацией в ис-

следованиях мышления. Именно гештальд-психология сформировала проблему образования нового в психике человека как специфическую проблему психологии мышления. Экспериментальные исследования закономерностей мышления были развернуты в 50-х годах XX века под руководством А. Н. Леонтьева и С. Л. Рубинштейна. Была поставлена задача раскрыть мышление прежде всего как продуктивный процесс, способный приводить к новым знаниям. Экспериментальные исследования С. Л. Рубинштейна и его сотрудников рассматривают анализ и синтез как основные стороны мыслительной деятельности. Одним из звеньев исследований мышления является исследование его продуктивности. А она может развиваться только в условиях открытия нового пути, нового способа. В исследованиях закономерности продуктивного мышления большое внимание уделяется природе подсознательного, интуиции.

В традиционной дидактике развитие мышления не выделялось как основная цель школы, поэтому задача состояла в накоплении большого объема систематизированных знаний. Позднее главной задачей становится целенаправленное развитие мыслительных способностей. В процессе обучения учащийся должен овладеть системой приемов и методов анализа и систематизации знаний. Сформулированное Л. С. Выготским основополагающее положение о ведущей роли обучения в умственном развитии обусловило поиски психологами условий активизации мыслительной деятельности учащегося. Многими исследователями стали разрабатываться психологические основы проблемного обучения, которые являются эффективным методом развития учащегося. При его использовании осуществляется управление мыслительной деятельностью. Применение проблемного метода требует создания и организации различных типов проблемных ситуаций. Учитывая возможности учащегося используются различные уровни проблемности, определяемые степенью самостоятельности учащегося в постановке и решении проблем. Эта теория применима также в классе фортепиано с целью развития исполнительского музыкального мышления.

Таким образом, музыкальное постижение и воплощение осуществляются, в первую очередь, с помощью музыкального языка, исполнительских средств. По сравнению с другими разновидностями художественного мышления, исполнительское музыкальное мышление в наименьшей мере прибегает к понятийному мышлению. Вместе с тем, оно являет собой единство интеллектуальной и эмоциональной сферы, направленное на выполнение творческих задач. Продукт исполнительского музыкального мышления невозможен без звучания. Эта особенность влечет за собой проблему соотношения нотного текста и исполнительской интерпретации. С точки зрения психологической теории продуктивного мышления исполнительское мышление имеет место тогда, когда в процессе изучения произведения учащийся открывает новые, ранее не известные ему стороны музыкального образа, либо новый образ, а также ранее не известные пути достижения художественного результата. Проблемное обучение как метод, создающий условия для развития продуктивных сторон мышления, должен рассматриваться как целая система действий педагога, организующего обучение по типу проблемного обучения. Применение этой системы в классе фортепиано с целью развития исполнительского музыкального мышления учащегося является наиболее эффективным путем, поскольку у учащегося формируется определенный стиль мышления и приобретаются умения ставить и решать музыкально-исполнительские задачи.

ПРИМЕЧАНИЯ

1. *Сохор А. Н.*, Социальная обусловленность музыкального мышления и восприятия., /Проблемы музыкального мышления., М.: Музыка., 1974.
2. *Рубинштейн С. Л.*, Принципы и пути развития психологии., М.: Издательство АН СССР., 1958.
3. Проблемы мышления в современной науке., под редакцией П. В. Копнина и М. Б. Вольницкого., М.: Мысль., 1964.
4. *Арановский М. Г.*, Мышление, язык, семантика., /Проблемы музыкального мышления., М.: Музыка., 1974.
5. *Нейгауз Г. Г.*, Об искусстве фортепианной игры., М.: Музгиз., 1964.

6. Прокофьев Г. П., Формирование музыканта - исполнителя - пианиста., М.: Издательство АПН РСФСР., 1956.
7. Савшинский С. И., Работа пианиста над музыкальным произведением., М.-Л.: Музыка., 1964.
8. Корто А., О фортепианном искусстве., М.: Музыка., 1965.
9. Кременштейн Б. Л., О педагогике Г. Г. Нейгауза., /Вопросы фортепианной педагогики., М.: Музыка., вып.3., 1971.

ԱՄՓՈՓՈՒՄ

Եղի ղոցենյու Նաիրա Միրայելի Արրահամյանի «Դաշնամուրային մանկավարժության նյութերով գեղարվեստական կերպարային մտածողության զարգացումը» ուսումնամեթոդական աշխատանքում բացահայտվում է երաժշտական կատարողական մտածողության հիմնական դիրքը, որպես երաժշտամանկավարժների սրելծագործական գործունեության ոլորտ: Հոյվածագիրը անդրադառնում է նաև մտածողության հոգեբանությանը պարզաբանում է դրա զարգացման օրինաչափությունը, պայմանները որոնցում այն զարգանում է: Երաժշտական կատարողական մտածողությունը մտավոր և զգացումային ոլորտի միասնությունն է, ուղղված սրելծագործական խնդիրներ լուծելու: Աշխատանքը երաժշտական քուիերի դաշնամուրային ամբիոններին է ուղղված:

SUMMARY

Naira M. Abrahamyan, Docent of YSC, - "The Development of Imagery Thinking With the Materials of Piano Education".

In the article the problems of music-performing thinking are viewed as a fruitful area for music teachers' creative activity. The psychology of thinking, its regular development and needed conditions are reviewed. The music-performing thinking is the unity of mental and emotional spheres aimed at resolving creative problems. The investigation will be useful for the piano chairs of universities.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երեանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ընդհանուր դաշնամուրի ամբիոնի, դաշնակահարուհի, ղոցենյու Նաիրա Միրայելի Արրահամյանի «Դաշնամուրային մանկավարժության նյութերով գեղարվեստական կերպարային մտածողության զարգացումը» ուսումնամեթոդական հոյվածը ըներբցվել է ընդհանուր դաշնամուրի ամբիոնի 2010 թ. նոյեմբերի 26-ին կայացած համերգի տպավորություններից հետո տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ՝ երկրեն ունեցել զրախոսներ՝ ղոցենյուներ Ժաննա Անյունի Զոյիյանը, Մարիելյուս Արշակի Հովհաննիսյանը նշելով աշխատանքի կարեւորությունը, քննարկել և որոշել են 15. 09. 2011թ. ամբիոնի նիստում երաշխավորել հրապարակման սույն ժողովածուում:

УДК 786.2:372.8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԵՍԱՊԻՐԱԶԻՆ ՍՄԻՐՆ
КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО
CHAIR OF GENERAL PIANO

ՆԱԻՐԱ ՄԻԽԱՅԼՈՎՆԱ ԱԲՐԱՄՅԱՆ

*Пианистка,
доцент Ереванской государственной
консерватории им.Комитаса*

**ВОПРОСЫ ТЕОРИИ И МЕТОДИКИ
ПРЕПОДАВАНИЯ В КЛАССЕ ОБЩЕГО ФОРТЕПИАНО
В МУЗЫКАЛЬНЫХ ВУЗАХ**

*идля студентовмне имеющих н ч льной
профессион льной подготовкий*

Ни один из музыкальных инструментов не получил столь широкого распространения, как фортепиано. Это обусловлено значением фортепиано как наиболее универсального по своим выразительным и репертуарным возможностям инструмента. Очевидны также и преимущества обучения игре на фортепиано в процессе становления учащегося музыканта. При этом задача педагога должна быть шире, нежели просто обучение игре на фортепиано. Определенный контингент студентов, поступающих в музыкальные вузы на разные факультеты, исключая фортепианный, не имеет специальной музыкальной подготовки. На протяжении четырех, а на некоторых факультетах и вовсе двух, лет нужно дать полноценную подготовку тем, кто делает первые шаги на пути к овладению инструментом и преодолевает немалые трудности, связанные с поздним началом специального обучения. Лишенные преимуществ восприимчивости детского возраста, а также по причинам физиологического свойства (частично утрачена эластичность рук), студенты с трудом приобщаются к игре на фортепиано. Другая проблема - это жестко ограничен-

ный лимит времени. С целью ускорить процесс формирования пианистических умений и навыков зачастую все творческие силы студентов направляются на выработку комплекса игровых приемов и освоение минимума обязательной программы. Основное внимание при этом уделяется технологической стороне фортепианного обучения и на второй план отходят проблемы, связанные с музыкальным развитием, исходный уровень которого у взрослых учащихся, как правило, невысок. В сущности, занятия сводятся к освоению предусмотренного программой учебно-педагогического репертуара. Содержательная сторона учебного процесса обедняется. Пассивная работа вскоре снижает интерес студента к занятиям.

В результате учащиеся овладевают весьма скромным репертуаром и минимальным запасом специальных знаний. В этой связи появляется необходимость обеспечить наибольшую эффективность процесса обучения музыке взрослых людей.

Оптимальный результат в обучении музыке, начинающийся в период учебы в вузе, может быть достигнут при соблюдении интенсивного накопления слухового опыта; максимального использования специфических особенностей психики взрослых учащихся - развитого интеллекта и осознанной профессиональной заинтересованности. Это приведет к эффективному музыкальному развитию студентов.

Ж. Ж. Руссо видел один из источников познания в самостоятельном активном приобретении знаний.

И. Г. Песталоцци выдвинул задачу овладения основами наук в качестве фактора, влияющего на совершенствование умственных способностей. Он первый установил зависимость психического развития личности от обучения и их связь. А. Дистерверг в своем труде "Руководство к образованию немецких учителей" представил целостную концепцию развивающего обучения. Ее основные положения сформулированы в виде тридцати трех конкретных правил и рекомендаций. Вот некоторые из них: *"обучение должно быть согласовано с человеческой природой и законами ее развития..."*, *"начинай обучение исходя из уровня развития ученика и продолжай его последовательно без пропусков и*

основательно!..", "один и тот же предмет иначе преподается мальчику, чем юноше...", "плохой учитель сообщает истину, хороший - учит ее находить..." и т.д. (1. С. 136 - 158).

К. Д. Ушинский основывался на том, что рассудок развивается только в действительных реальных знаниях и придавал большое значение активизации мышления.

Позднее, П. П. Блонским была выделена другая особенность: мышление не сводится к воспроизведению знаний. Человек *"начинает думать там, где привычка или прежние знания оказываются недостаточны"*.

Существует мнение, согласно которому с повышением возраста понижается способность к обучению. Однако Э. Торндайк и его соавторы в итоге экспериментов пришли к выводу о наличии значительных интеллектуальных ресурсов у молодых людей, о широких возможностях их развития.

Под руководством выдающегося психолога Б. Г. Ананьева было проведено комплексное прослеживание свойств мышления, внимания, памяти и других интеллектуальных функций в возрасте от 18 до 40 лет, в результате чего был сделан следующий вывод: *"...в студенческом возрасте имеются наибольшие возможности развития; именно в этом возрастном диапазоне расположены интенсивные периоды, которыми еще недостаточно воспользовались при обучении"*.

При всем несходстве практических путей формирования музыканта, подлинных воспитателей всегда отличает их нацеленность на развитие психического фактора. Французский пианист и педагог А. Корто пишет: *"Для того, чтобы развить психические качества, которые являются прежде всего проявлением индивидуальности и вкуса человека, педагогика не может опереться ни на что другое, как на обогащение общей культуры, развитие способности воображения и аналитических способностей, которые позволяют передавать эмоции и ощущения, вызванные музыкой."* По его мнению, в педагогической деятельности *"не существует хороших или плохих систем. Есть лишь хорошие или плохие педагоги"* (2. С. 5). Придавая большую роль качеству усвоения, способности

анализировать, сравнивать и обобщать, приходиться к выводам в процессе познавательной деятельности, Л. А. Баренбойм констатирует: *"...овладение учащимися знаниями и навыками само по себе еще не влечет за собой развития их музыкального мышления и творческой инициативы... обучение... может стимулировать развитие творческой личности в том случае, если специально направлено к той цели и, следовательно, если методы занятий ориентированы не на механическую тренировку, а на развитие мыслительных и творческих способностей"* (3. С. 124).

В. И. Сафонов, А. Н. Есипова, Н. С. Зверев рассматривали осознанность на любой стадии работы и собственные усилия учащегося как основу формирования ясных художественных намерений и самостоятельности их воплощения. Характерен содержащийся в незаконченном труде А. Н. Есиповой "Фортепианное искусство" лаконичный ответ на вопрос: как работать - "главное - обдуманно!"

Деятельность плеяды замечательных музыкантов, стоявших у истоков российской фортепианной школы XX века, - Ф. М. Блуменфельда, К. Н. Игумнова, А. Б. Гольденвейзера, Г. Г. Нейгауза, Л. В. Николаева, С. Е. Фейнберга, их учеников и последователей, наконец, наиболее опытных и талантливых пианистов - педагогов нынешнего поколения, убедительно показывает высокую действенность средств, нацеленных на задачи развития, помогающих сформировать у учащихся, говоря словами Г. Г. Нейгауза, *"самостоятельность мышления, методов работы, самопознания и умения добиваться цели"* (5. С. 192). Так Л. В. Николаев, обращая внимание на беспочвенность и неосуществимость стремления иных педагогов "пройти с учащимися решительно все, что только можно, так, чтобы учащийся был снабжен знаниями на все случаи жизни и избавлен от необходимости приобретать знания собственной головой", отметил: *"Учитель должен дать ученику основные общие положения, опираясь на которые последний сможет пойти по своему художественному пути самостоятельно, не нуждаясь в помощи"* (6. С. 11).

Принципы и методы обучения, которым следовали маститые

музыканты, безусловно, предоставляют богатый материал для обобщений широкого порядка, выходящий за рамки индивидуального опыта, и продолжают оставаться предметом специального изучения.

В специальной педагогической литературе понятие "музыкальное развитие" прежде всего связывают с взаимодействием процессов, ведущих к формированию профессионального мышления. И. Гофман пишет: *"...музыкальное мышление, важность которого столь очевидна, не может быть развито каким-либо прямым путем. Оно является одним из побочных следствий общего расширения музыкального кругозора. Оно всегда пропорционально росту других музыкальных способностей. Оно - результат эластичности ума, приобретаемой или развиваемой неуклонной, неослабной работой..."* (7. С. 58).

Б. Л. Яворский положил в основу своей методической системы идею: *"профессиональное обучение базировать на воспитании музыкального мышления, методом развития всех художественных и интеллектуальных данных..."* (8. С. 126).

Качественная характеристика музыкального развития зависит от уровня понимания, переживания и оценки музыкальных явлений. Речь, следовательно, идет о воспитании умения проследить совершающиеся в музыке интонационные процессы, переживать и усваивать содержание музыки через восприятие и осмысление ее звуковых структур. Необходимо уяснить некоторые закономерности музыкального мышления как специфической области единого человеческого мышления.

Специфику общения человека с искусством составляет художественное образное начало. Эмоции - лишь исходный пункт, лишь первоначальная стадия в обобщении жизненных явлений. Только мышление упорядочивает эмоции, связывает их в стройную систему, придает им целенаправленность.

Содержание художественной деятельности представляет собой сложное сплетение переживания и работы мысли. Этими важнейшими факторами определяется творчество в различных видах искусства. Искусство музыки - это *"прежде всего искусство интонации, а вне интонации только комбинация зву-*

ков" (9. С. 275). Интонация, несущая выразительно-смысловую и конструктивную нагрузку, сохраняет значение первоосновы в структуре и процессах музыкального мышления. Музыкальное мышление и неразрывно связанное с ним восприятие зависят от эмоционально-чувственного фактора. Вместе с тем, в музыке все элементы, все ее выразительные средства - мелодия, гармония, ритм, динамика и т.д. - пронизаны логикой. Там, где эмоции не осмыслены, не организованы логикой, там нет по сути и произведения искусства.

Строящаяся на основе логических закономерностей музыкальная форма в своем развитии несет определенное музыкальное содержание. Музыкальная логика реализует свои возможности на интонационном, образном и концепционном уровнях. Мысль участвует в зарождении и кристаллизации художественной идеи, совершает операции по отбору, комбинированию, сопоставлению и разворачиванию звукового материала, "создает" эмоционально-образную драматургию произведения.

Полноценное формирование музыканта, его развитие выдвигают в качестве насущной задачи прежде всего воспитание слуха и музыкального интеллекта. Из каких источников черпает профессиональное мышление основания для своего развития? Мышление непосредственно связано со знаниями. По мнению А. М. Матюшкина, *"знание есть исходный толчок, основное средство и конечный результат мышления"* (10.). Очень важна также слуховая направленность процессов музыкального развития, вытекающая из самой природы нашего искусства.

Понимание музыки, умение разобраться в нотном тексте, инициативу, творческую активность, самостоятельность - все это видный методист в области обучения игре на фортепиано М. Э. Фейгин связывает с накоплением, расширением музыкального опыта. Он пишет: *"По моему убеждению, это умение усваивать и накапливать музыкальные впечатления путем активного слушания, переживания и самостоятельного чтения музыки. Иными словами, все зависит от музыкального развития и связанного с ним духовного обогащения личности"* (11. С. 4).

Таким образом, важнейшими психологическими предпосылка-

ми успешного музыкального развития являются: ясное видение цели, настойчивая воля к ее достижению, сосредоточенное на ней внимание, особенности мышления.

Изучение мыслительной деятельности в психологии связывают с рассмотрением тех мотивов, по которым она возникает. Мотивы и их важнейшая сторона - познавательные интересы - выступают как фактор, определяющий направленность и активность памяти, внимания, мышления, а значит, и эффективность процесса усвоения информации. На почве осознанных интересов расширяется духовный кругозор взрослого, обогащается его интеллект, получает дальнейшее развитие творческая инициатива.

В ходе обучения важно понимание преподавателем своего студента, умение поддержать его положительные интересы к учебной работе. Степень эффективности занятий со студентом будет зависеть от того, насколько укрепили в нем интерес к будущей профессии.

Эффективное построение учебного процесса предполагает соразмерность методов преподавания с возрастными особенностями учащихся. Почти все существующие методы применимы на разных ступенях возрастного развития. Необходимо определить как соотносятся между собой известные способы в конкретной педагогической ситуации, определяемой уровнем подготовки учащихся, условиями и целями их обучения. Эта специфика ситуации обуславливает превалирование одних форм и методов работы над другими.

Анализ ситуации обучения в классе общего фортепиано в вузе, где студенты делают первые шаги на пути к овладению инструментом, позволил выделить важнейшие направления деятельности педагога:

1. Всемерное обогащение музыкально-слухового опыта учащихся.
2. Последовательное формирование профессионально-интеллектуальных качеств.
3. Систематическое вовлечение в выполнение самостоятельных творческих работ.

Базой для формирования профессионального мышления ста-

новится общее умственное развитие взрослого человека. Работая с ним, педагог получает возможность в большей мере апеллировать к его сознанию, подводить ученика к познанию закономерностей музыки путем обобщений. Использование анализа и обобщений выступает в данном случае как центральная педагогическая проблема, возвышающаяся над остальными и приобретающая методологическое значение. В работе со студентом педагог получает возможность на сравнительно простом материале углублять его профессиональные знания, широко ставить перед учащимся общие и сложные проблемы, касающиеся отношения к тексту, способа работы, овладения техническими навыками. Таким образом изучение одного произведения оказывается более результативным, движет взрослого вперед интенсивнее, музыкально развивает больше, чем ребенка.

Преподавателю необходимо учитывать возможности своего воспитанника и ставить перед ним посильные на каждом этапе развития задачи, иначе у него появится отрицательная установка. Это обстоятельство особенно важно в занятиях со взрослым, который вполне отдает себе отчет в том, как мало он умеет.

Преподавателю необходимо научить студента мыслить, анализировать свои достижения и ошибки, оценивать результаты своих действий. Активные методы педагогического воздействия окажутся действенными, если они будут служить прежде всего воспитанию музыкального интеллекта. Для этого преподавателю необходимо обратить внимание на:

- всемерное обогащение музыкально-слухового опыта учащегося, вовлечение его в процесс активного ознакомления с широким кругом музыкальных явлений, создание условий для освоения возможно большего репертуара;
- пополнение запаса профессиональных знаний и выработку умения применять их в практической деятельности;
- формирование у учащегося навыков аналитического осмысления и обобщения музыкальных явлений;
- воспитание слухового внимания; умения слушать (и слышать) свое исполнение, контролировать и оценивать его как бы со стороны;

- фиксацию в ходе работы конкретных качественных сдвигов и количественных накоплений самим учащимся;
- выявление в педагогических указаниях существенных признаков явления, вариантности этого явления в других произведениях;
- сочетание непосредственного руководства с предоставлением студенту инициативы, стимулируя проявления его самостоятельности, будь то ориентация в новом для него материале, создание собственного исполнительского плана или поиск необходимых средств воплощения.

Педагогика и психология исходят из признания ведущей роли обучения в развитии. Развивающее внимание обучение опосредствуется содержанием последнего, его структурой, способом педагогического воздействия, "внутренними условиями", в частности, возрастными особенностями учащегося. Работы дидактов пронизывает мысль о необходимости придать учебному труду творческий характер.

Достижение конечной цели - воспитание творчески самостоятельного, всесторонне подготовленного музыканта - во многом зависит от того, как решаются преподавателем проблемы сопряженные с духовным обогащением личности: с расширением общего и специального кругозора учащегося, с развитием у него культуры чувств, с формированием профессионально-интеллектуальных качеств, активизацией творческой работы мышления и воображения.

ПРИМЕЧАНИЯ

1. *Дистервег А.*, Избранные педагогические сочинения., М.: Госучпедгиз., 1956.
2. *Корто А.*, Рациональные принципы фортепианной техники., Предисловие., М.: Музыка., 1969.
3. *Баренбойм Л. А.*, Фортепианно-педагогические принципы Ф. М. Блуменфельда., /Вопросы фортепианной педагогики и исполнительства., Л.: Музыка., 1969.
4. *Беркман Т. Л.*, А. Н. Есипова., М.: Музгиз., 1948.
5. *Нейгауз Г. Г.*, Об искусстве фортепианной игры., М.: Музыка., 1967.
6. *Николаев Л.*, Из бесед с учениками., /Выдающиеся пианисты-педагоги о

- фортепианном искусстве., М-Л.: Музыка., 1966.
7. *Гофман И.*, Фортепианная игра. Ответы на вопросы о фортепианной игре., М.: Музгиз., 1961.
 8. *Гольденвейзер Н. М.*, Яворский и музыкальное воспитание детей., /Б. Яворский., Статьи, воспоминания, переписка., Том 1., М.: Советский композитор., 1972.
 9. *Асафьев Б. В.*, Музыкальная форма как процесс., Кн.1-2., Л., 1963.
 10. *Матюшкин А. М.*, Психология мышления., М.: Прогресс., 1965.
 11. *Фейгин М. Э.*, Музыкальный опыт учащегося., /Вопросы фортепианной педагогики., Вып. 3., М.: Музыка., 1971.

ԱՄՓՈՓՈՒՄ

ԵՊԿ դոցենտ Նաիրա Միրալյեի Արախամյանի «Դասավանդման տեսություն և մեթոդիկայի հարցերը բարձրագույն երաժշտական հաստատություններում ընդհանուր դաշնամուրի դասաբանում» ուսումնամեթոդական հոդվածը լուսաբանում է ժամանակակից երաժշտական կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: Հեղափոխությունում ուսանողներին, որոնք չունեն սկզբնական մասնագիտական պատրաստվածություն՝ ցուցում են ուղեցույցներ, խորհուրդներ: Հեղինակը մեջբերում է Ժ. Ժ. Ռուսոյի Ի. Գ. Պլատարսի, Կ. Դ. Ուշինսկու և այլոց ասույթները, սկզբունքները և մեթոդները, որոնք հայտնի են պրագմատիկական քննադատական համակարգերում և խորհուրդներ դասախոսներին մեծահասակների պատրաստմանը վերջնական նպատակին հասնելու համար՝ դաստիարակել ինքնուրույն երաժիշտ:

SUMMARY

Naira M. Abrahamyan, Docent of YSC, - "Issues of Teaching Theory and Methods in General Piano Classes of Higher Musical Institutions".

The article focuses on one of the most important problems of modern musical education. J. J. Rousseau, I. G. Pestalozzi, K. D. Ushinski and other outstanding composers are cited the teaching principles and methods of which are themselves a subject of research. In the work some advice and tips are given to lecturers to educate the aged people as independent creative musicians, as well as to students who don't have primary professional education.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊԿ ընդհանուր դաշնամուրի ամբիոնի դասախոս, դաշնակահարուհի, դոցենտ Նաիրա Միրալյեի Արախամյանի «Երաժշտական քննադատական և մեթոդիկայի հարցերը» ուսումնամեթոդական հոդվածը ընթերցվել է ընդհանուր դաշնամուրի ամբիոնի 2010 թ. նոյեմբերի 26-ին կայացած համաժողովի փակվող բաժնի ժամանակ՝ ելույթ են ունեցել գրախոսներ՝ դոցենտներ Ժամնա Անյունի Բուխինյան, Մարիելյուս Արշակի Հովհաննիսյանը և Ներսիս Մանուկյանի կարևորությունը, քննարկվել է նաև շարք հոդվածների քվեում 15. 09. 2011 թ. ամբիոնի նիստով երաժիշտությունը հրապարակման սույն ժողովածուում:

ՀՏԳ 378:786.2:372.8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՍՄԲՈՆ
КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО
CHAIR OF GENERAL PIANO

ՄԱՐԻՆԱ ԷԴՈՒԱՐԳԻ ՄԱՐՏԻԿՅԱՆ

*Դաշնակահարուհի,
Երևանի Կոմիտասի անվան
պեպրական կոնսերվատորիայի դասախոս*

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.
ՈԳԵՇՆՉՎԱԾ ԱՐՎԵՍՏ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆԸ

Բազմաթիվ հոդվածներ են գրվել Ալեքսանդր Գրիգորի Զարու-թյունյանի գործունեության մասին տարբեր գիտական հրատարակություններում և մամուլում: Ա. Գ. Զարությունյանը հիամալի դաշնակահար էր: Նրա դաշնամուրային կատարումներն աչքի են ընկել կատարողական տաղանդի բարձր մակարդակով, արտիստականությամբ և ոգեշնչվածությամբ:

XX դարի երկրորդ կեսին հայ կոմպոզիտորներից մի քանիսն էին միայն կարողանում կատարել իրենց դաշնամուրային ստեղծագործությունները: Շատ քչերն էին համարձակվում բեմ դուրս գալ: Նրանց նեղ շրջանակի կոմպոզիտոր-դաշնակահարներից էր Ա. Գ. Զարությունյանը: Նրա դաշնամուրային կատարման ինքնատիպությունը բացահայտվում է բոլոր մանրուքներում: Նրա կատարումը առանձնանում է ծայրի մաքրությամբ, մեղեդային գծի հստակությամբ: Նա կատարել է ոչ միայն իր ստեղծագործությունները, այլև հեղինակային մեկնաբանումներ, որոնք իրենց գեղարվեստական արժանիքներով և կատարման որակով բարձրարժեք են համարվում:

Ա. Գ. Զարությունյանի երաժշտությունն իր գլխավոր ստեղծագործական մոտեցումներով ընկալվում է հարմոնիայով, աշխարհընկալմամբ, կյանքի իր հասկացությամբ և ընդունմամբ՝ վեր հանելով հեղինակի հավատը ստեղծագործական ուժերի, արժեքի, երեվակայության ու խիզախումների նկատմամբ:

Կոմպոզիտորի արվեստը զարգացել է ազգային երաժշտության ինտոնացիաներից: Այն կատարում են ինչպես մասնագետ երաժիշտները, այնպես էլ տարբեր տարիքի սկսնակները, հարստացնելով նոր սերնդի հոգևոր ու հաստատուն գիտակցությունը մշակույթի նկատմամբ՝ ստեղծագործողի կոմպոզիտորական ձգտումների իրագործման ամբողջականության մեջ՝ հանուն այն բանի, որ հետագայում պետք է դառնա անհատական մեկնաբանման առարկա, նույնիսկ սկսնակ կատարողների կողմից: Մեր ժամանակներում հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ներառումն ուսումնական ծրագրերում դառնում է իրապես անհրաժեշտություն: *«Ազգային երաժշտությունն, անկասկած, պետք է հնչի: Անհրաժեշտ է ըստեղծել նրա կատարման ավանդույթները»* (1. էջ 13):

Ա. Գ. Հարությունյանն սկզբնական երաժշտական կրթությունն ստացել է հարազատ Երևանում՝ հայտնի դաշնակահարուհի Օլգա Հայրապետի Բաբայանի դասարանում:

Նրա հետագա երաժշտական կրթությունը շարունակվել է Կ. Ն. Իգումնովի դասարանում, երբ անվանի երաժիշտ-մանկավարժը Հայրենական պատերազմի տարիներին գտնվում էր Երևանում ու դասավանդում կոնսերվատորիայում*: Եվ միանգամայն բնական էր, որ *«հայրենական և ռուսական դաշնամուրային դպրոցների փոխադարձ համալրման և խառնաշփոթի ժամանակահատվածում ծնվեց Ալեքսանդր Հարությունյան երևույթը՝ որպես կոմպոզիտոր և դաշնակահար»* (2. էջ 117): Այստեղ կարևոր է հիշել կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության երկու ոլորտների նշանակության մասին, որում մեկ ոլորտը սնուցում և ազդեցություն է գործում մյուսի վրա՝ արտահայտչամիջոցների մի ամբողջ համադրությամբ: Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա, քանի որ մանատիպ երկու գեղարվեստական սկզբնաղբյուրների փոխազդեցությանը մենք հաճախ ենք հանդիպում բոլոր «կատարող» կոմպոզիտորների մոտ, որոնց ստեղծագործական գործունեության ոլորտներից մեկը, որպես կանոն, ազդեցություն է ունենում մյուսի վրա:

XXI դարաշրջանի առաջին տասնամյակում հրատարակվել են մեծանուն կոմպոզիտորի դաշնամուրային պիեսների «Վեց տրա-

* Կ. Ն. Իգումնովի հետ պարապմունքները շարունակվեցին մեկ տարի:

մադրություն» և «Մանկական ալբոմ» ցիկլերը:

Անդրադառնալով 2-րդ ժողովածուին, որտեղ Ա. Գ. Հարությունյանը հիմք է ընդունել հետևյալ մոտեցումը՝ երաժշտական նվագագույն միջոցներով արտացոլել երեխայի ներաշխարհը. նա այդ խնդիրը հիմնալի է լուծել: Հեղինակը մարմնավորում է իր սեփական մոտեցումը շրջապատող իրականության տարբեր դրսևորումների նկատմամբ՝ բացառապես փխրուն «կոմիտասյան» պոետիկ ընկալմամբ: Անկասկած, եթե ուսուցչին հաջողվի աշակերտին գրավել ժողովածուի երաժշտական կերպարներով, ապա հետաքրքրության զարգացումը կտանի նաև ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը, որն անհրաժեշտ է «Մանկական ալբոմ»-ի երաժշտական կերպարային բովանդակության պիեսների արտահայտչամիջոցների բացահայտման համար:

Ա. Գ. Հարությունյանի «Մանկական ալբոմ»-ի պիեսները հագեցած են հեղինակի ստեղծագործական ոգեշնչվածության վառ գծերով: Նրա ժողովածուն բարձր արվեստի ստեղծագործական հերթական փուլն է՝ հայ երաժշտության նահապետի, ստեղծագործող արվեստագետի և հիմնալի դաշնակահարի, որն անցել է կատարողական վարպետության բարձրագույն դպրոցը:

Այն ստեղծագործությունները, որոնք հեղինակը ներառել է «Մանկական ալբոմ» ժողովածուի մեջ, բնորոշվում են իրենց կերպարների առանձնահատկություններով, ձևի հստակությամբ, ազգային ինքնատիպությամբ և երաժշտական լեզվի մատչելիությամբ: Դրանք ունեն ծրագրային բովանդակություն և սերտորեն կապված են երեխաների առօրյա կյանքի, ազգային երաժշտական շարադրման ինքնատիպ իմացության հետ: Երաժշտական լեզվի գունեղության, հակիրճության, պարզության և այդ ստեղծագործությունների առավել կարևոր բովանդակային-կերպարային հատկությունների բացահայտման շնորհիվ դրանք դասվում են հայկական լավագույն մանկական դաշնամուրային պիեսների շարքը, բացելով նոր էջ այդ ժանրի զարգացման ճանապարհին: Ժողովածուի պիեսներում արտացոլված է արտահայտչամիջոցների մի ամբողջ գունային համադրություն՝ ուղղված հեղինակային գեղարվեստական մտափոխացմանը: Դրանցում զուգակցվում են ձևի ամփոփ լինելը և երաժշտության բնական զարգացումը՝ արտահայտչամիջոցների գու-

մեղության կերպարային բազմազանությամբ, կերպարների ցայտուն դիմամիկությամբ, կոմպոզիտորի կողմից գաղափարային գեղարվեստական մտահղացմամբ, որոնք բացահայտում են հայկական երաժշտության Վարպետի մտքի խորության ամենատարբեր սահմանները:

«Մանկական ալբոմ» ժողովածուից որոշ պիեսներ կապված են մեռկլասիցիզմի շրջանի սկզբունքների հետ, որտեղ դաշնամուրն օգտագործված է այլ կերպ. *«որպես հղկված ու ճկուն գործիք, որը բացահայտում է ասոցիացիաների բարդ մեխանիզմ՝ զգացումների դիմամիկ փոխանցումով...»* (4. էջ 366):

Ժողովածուում երգային քնարական պիեսների հետ միասին հանդիպում են այնպիսիները, որոնք տարբերվում են իրենց շարադրանքով, մտքի խորությամբ, տեմբրային գունեղությամբ, իսկ մյուսներին բնորոշ են դաշնամուրային ֆակտուրայի հարվածայն-տոկկատային գծերը, ինչը հատուկ է Ա. Ի. Խաչատրյանի, Ս. Ս. Պրոկոֆևի, Ի. Ֆ. Ստրավինսկու ստեղծագործություններին:

Ալբոմում առկա փոքրածավալ, նրբագեղ ստեղծագործություններն առանձնանում են կերպարայնության բազմազանությամբ. այստեղ կան և՛ պարային («Աշնանային վալս», «Լիրիկական վալս», «Համերգային վալս»), և՛ կատակային («Կատակ», «Ուրախ զբոսանք», «Չարածճի աղջիկ», «Գարնանային տրամադրություն»), և՛ երգային («Պատմություն», «Տխուր երգ») բնույթի պիեսներ:



«Կատակ» պիեսում իրար են հաջորդում ստակկատոները և լիգայով կապված վարընթաց շարժումով իջնող նոտաները, որոնք հաղորդում են երաժշտությանը կատակային բնույթ: Ստակկատոները պետք է կատարել կարճ, կտրուկ: Աջ և ձախ ձեռքերի 16-րդական նոտաների խմբերը պետք է կատարել հավասար ու թեթև, նախապես այն յուրացնելով առանձին ձեռքերով:

Ստորև նշված հատվածում երկու ձեռքի զուգահեռ, վերընթաց շարժումը բերում է տրեյլների կատարմանը, որոնք շեշտված են, սակայն զգուշորեն լուծվում են կարճ ութերորդականների մեջ:



Վերջին տողի առաջին երկու տակտերում աջ և ձախ ձեռքերի հնչյունաշարերը հաջորդում են իրար ընդհանուր լիզայով, որը հիշեցնում է տավղի հնչողությունը: Այդ հնչողությունն ստանա-



լու համար աշակերտը պետք է կարողանա շատ սահուն ու ճկուն կատարել աջից դեպի ձախ ձեռք անցումները, որոնք պետք է անկատ լինեն:

«Աշնանային վալս»ը քնարական պիես է, գրված է *Moderato* տեմպում, 6/8 չափում: Այն իսկապես ստեղծում է պարային տրամադրություն: Պիեսում շատ են ակտերացիայի նշանները և ստեղծագործությունը յուրացնելու փուլում աշակերտը պետք է շատ ուշադիր հետևի դրանց: Այս հատվածում առկա է բարդ ռիթմիկ պատկեր. կետով նոտաները և սինկոպաները ընթանում են զուգահեռաբար, այդ պատճառով աջ և ձախ ձեռքերն առանձին-առանձին պետք է շատ հստակ ու անսխալ կատարեն իրենց նվագաբաժինները:



Հաջորդ հատվածում աջ ձեռքում 16-րդական նոտաները երկար խմբերով կապված են լիզայով, և այն պետք է շատ սահուն ու ամբողջական կատարել, ի տարբերություն ձախ ձեռքի, որը շարունա-

կում է սինկոպաներով կատարումը, ընդ որում արդեն շեշտված:



«Ուրախ զբոսանք» պիեսը շատ ուրախ տրամադրություն է հաղորդում ունկնդրին, քանի որ ամբողջ ստեղծագործությունն ընթանում է ութերորդական ստակկատոներով, հնչյունաշարի անընդհատ վերելքներով ու վայրէջքներով.



«Տխուր երգ» պիեսը գրված է *Andante sostenuto* տեմպում: Այն գուսպ է, երգային, շատ գեղեցիկ մեղեդային գծով: Աջ և ձախ ձեռքերը՝ կատարման առումով համազոր են, ընթանում են ուրույն մեղեդային գծով.



«Քնարական վալս»-ը դասական վալսի բնորոշ նմուշ է, որն աջ ձեռքի սահուն ու գեղեցիկ երաժշտությամբ գրավում է ունկնդրին: Այստեղ կարևորվում է մեղեդու արտահայտիչ ներկայացմունքը, որը շատ քնարական է: Այն ուղեկցվում է ձախ ձեռքի մեղմ, չընդգծվող կատարմամբ, որը հնարավորություն է տալիս աջ ձեռքին ընթանալ ազատ ու անկաշկանդ՝ մինչև ստեղծագործության ավարտը:



«Չարաճճի աղջիկ»-ը գրված է արագ տեմպում: Աջ և ձախ ձեռքերը լրացնում են իրար իրենց երաժշտական գծով: Առկա են ստակկատոներ և արագաշարժ 16-րդականներ, որոնք շատ բնորոշ են այդպիսի կերպար ստեղծելու համար:

Այս հատվածում երկու ձեռքերը պետք է սահուն շարժումներով փոխանցեն մեկը մյուսին 16-րդականների խմբերի իրենց կատարումները, որպեսզի չընդհատվի անընդհատ ու անհանգիստ շարժման տպավորությունը:



Կերպարը ճիշտ մեկնաբանելու համար անհրաժեշտ է շատ վարժ կատարել այդ փոխանցումները, որի համար նախ պետք է պարապել առանձին ձեռքերով և դանդաղ տեմպով, մինչև ստացվի անթերի, այնուհետև աստիճանաբար արագացնել տեմպը: Պետք է ուշադրություն դարձնել ձեռքի ազատությանը, դաստակի և արմունկի հավասար դիրքին: Նույն վարժությունները պետք է փորձել կատարել երկու ձեռքով, հավասար ուժով:

Պիեսի ուրախ տրամադրությունը պահպանվում է մինչև ստեղծագործության ավարտը:

«Պատմություն» պիեսի սկիզբն ընթանում է շատ հանգիստ, չափավոր տեմպում, կարծես ցույց տալով, որ սկսվում է ինչ-որ հետաքրքիր պատմության շարադրանք: Սկիզբը ծավալվում է հանգիստ ու երգային: Որպեսզի մեղեդին հնչի սահուն ու սլացիկ, հարկավոր է ոչ միայն տեխնիկապես հաղթահարել ստեղծագործությունը, այլև զարգացնել երաժշտական մտքի սահունությունը և ճկունությունը:

Նշված հատվածում երաժշտությունը փոքր-ինչ անհանգիստ բնույթ է ստանում, կարծես շարադրվող պատմության մեջ ներկայացնելով ինչ-որ լարված էպիզոդ: Այստեղ բավական բարդ ռիթմիկ պատկեր է, որտեղ ծախ ձեռքը լրացնում է աջին՝ ստեղծելով անհանգիստ զգացողություն:



«Գարնանային տրամադրություն» պիեսը իսկապես ստեղծում է գարնանային տրամադրության զգացողություն, որն արտահայտվում է հատկապես աջ ձեռքի անընդհատ ու անհանգիստ վեր ու վար ընթացող ձայնաշարերով: Երաժշտության մեծ շարադրումը չի դադարում մինչև ստեղծագործության ավարտը:



Պիեսն ավարտվում է երկու ձեռքի սլացիկ, վերընթաց շարժումով և ձայնի դիմամիկ բարձրացումով: Շատ ուշադիր պետք է լինել պեդալավորման հարցում, քանի որ բավական հաճախ է հանդիպում նշված լինելով հեղինակի կողմից:



«Համերգային վալսի» երաժշտությունը, գրված «Իմ ընկերոջ մասին» գեղարվեստական կինոնկարի համար*, կգարդարի ինչպես բարձր դասարանների աշակերտների, այնպես էլ համերգներով հանդես եկող դաշնակահարների նվագացանկը:

Ուսումնասիրելով Ա. Գ. Հարությունյանի՝ նոր սերնդին հասցեագրված պիեսները, համոզվում ես կոմպոզիտորի ստեղծագործական հմարների բազմազանության, կոմպոզիտորական մտածելակերպի ինքնատիպության մեջ, որն ընդունակ է կատարող երաժիշտների, երիտասարդ սերնդին հասցեագրված երաժշտական փոքր ձևերին հաղորդել զգալի նշանակություն: Իհարկե, ապրում ես երջանկության զգացում, որ մենք ժամանակակիցներն ենք հայ երաժշտական արվեստի մեծ ստեղծագործողներից մեկի՝ Ա. Գ. Հարությունյանի և հնարավորություն ունենք հարակցվելու ամենափոքրիկ դաշնակահարներին նվիրված «Մանկական ալբոմ» հիացմունք առաջացնող ժողովածուի հետ:

Անկասկած, այս «Ալբոմը» կդառնա նոր սերնդի երաժշտական կրթության գործնական խթաններից մեկը՝ կարևորագույն, միաժամանակ շատ դժվար խնդիրների լուծման ճանապարհին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Ամբակունյան Ա. Ա.*, Իմ մանկավարժական սկզբունքները, Եր., Գիտություն, 2000 թ.:
2. *Кокжаев М. А.*, Александр Арутюнян., Особенности композиционного стиля., М.: Композитор., 2006 г.
3. *Апоян Ш. А., Золотова И. Л.*, Фортепианная музыка., /Музыкальная культура Советской Армении., М.: Советский композитор., 1985 г.

* Առաջին անգամ հրատարակվել է հեղինակային փոխադրումով:

РЕЗЮМЕ

В методической работе преподавателя ЕГК, пианистки Марины Эдуардовны Мартикян «Александр Арутюнян: вдохновенное искусство для молодежи» путем анализа цикла «Детский альбом» выдающегося композитора исследуются не только образные, художественно-содержательные стороны отдельных и в совокупности произведений, составляющих цикл, но и показано развитие жанра, формы, дается сопоставление всей гаммы выразительных средств и приводятся нотные примеры для подтверждения изложенного. Произведение рекомендуется для прожиздения на кафедре общего фортепиано.

SUMMARY

Marina E. Martikyan, Pedagogue at YSC, Pianist, - "Alexandr Harutyunyan: Inspired Art for the Youth".

The article is dedicated to Alexandr Harutyunyan's cycle "Children's Album". Not only are the imagery and artistic features of the cycle's separate parts and the complete set analyzed, but also the development of the genre, form and the whole range of the expressive means are studied and compared, and in support of the above mentioned musical examples are given. The author recommends to include it in the teaching program of the Chair of General Piano.

ՏԵՐԵՎԱՏՎՈՐՈՒՄ

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ընդհանուր դաշնամուրի ամբիոնի դաշնակահարուհի, դասախոս Մարինա Էդուարդի Մարտիկյանի «Ալեքսանդր Հարությունյան. ոգեշնչված արվեստ պատանեկությանը» ուսումնամեթոդական հոդվածը ընթերցվել է ընդհանուր դաշնամուրի ամբիոնի 2011 թ. փետրվարի 25-ին կայացած «Հայ կոմպոզիտորների սյուիթագործություններ»-ին նվիրված համաժողովի ժամանակ համերգից հետո փոքի ունեցած խորհրդակցության ժամանակ: Արտահայտվել են գրախոսներ, դոցենտ և ամբիոնի վարիչ Սվետլանա Արուստեանի Դավթյանը և երաժշտության փնտրյալ ամբիոնի դասախոս Սուսաննա Վոլոդյայի Աճեմյանը նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են 26.04.2012 ամբիոնի նիստով երաշխավորել հրապարակման առկա ժողովածուում:

ՀՏԳ 378:786.2:372.8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՄԱՔԻՈՆ
КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО
CHAIR OF GENERAL PIANO

ՄԱՐԻՆԱ ԷԴՈՒԱՐԳԻ ՄԱՐՏԻԿՅԱՆ

*Դաշնակահարուհի,
Երևանի Կոմիտասի անվան
պեպրական կոնսերվատորիայի դասախոս*

**ՍԿՍՆԱԿ ԵՐԱԺՇՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Մեր օրերում տեղեկատվական հոսքի ընդարձակման ու ժամանակի մշտական սղության պատճառով բավական բարդ է կազմակերպել երաժիշտ-սովորողի ինքնուրույն տնային աշխատանքը: Հետևաբար այդ աշխատանքի կազմակերպման հարցերը, գոյություն ունեցող իրատեսական մեթոդների ու հնարների օգտագործումը, որոնք թույլ են տալիս խնայել սովորողի ժամանակն ու եռանդը, առաջնային են:

Առաջին հերթին անդրադառնանք արտաքին պայմաններին, որոնք ապահովում են երաժշտի արդյունավետ աշխատանքը:

Դաշնամուրով նվագելը ֆիզիկական աշխատանք է, որը պահանջում է թթվածնի բավական մեծ սպառում: Այդ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի այն տարածքը, որտեղ անցկացվում են պարապմունքները, օդափոխվի և ապահովվի թարմ օդի հոսքը: Շատ կարևոր է նաև սենյակի ջերմաստիճանը: Բժիշկների կարծիքով այն չպետք է գերազանցի 16-18°C: Ավելի ցածր ջերմաստիճանը երաժիշտ-կատարողը հեշտությամբ է տանում քան, օրինակ ավելի քան 20°C, քանի որ պարապմունքների ժամանակ նվագողի մկանները տաքանում են, իսկ բարձր ջերմաստիճանում հաճախակիանում է նրա շնչառությունը, և ուժեղանում են սրտխփոցները՝ հանգեցնելով արագ հոգնածության:

Մեծ նշանակություն ունի գործիքի ստեղծաշարի և նոտաների վրա ընկնող լուսավորությունը: Այն պետք է լինի բավական վառ ու հավասարաչափ բաշխված: Լույսը պետք է ընկնի կողքից, սակայն ցանկալի է, որ այն լինի ձախ կողմից: Ոչ մի դեպքում չի կարելի, որ այն լինի դիմացից:

Շատ կարևոր է գործիքի որակը: Այն պետք է անպայման ճիշտ լարված լինի, ստեղծաշարը չպետք է չափից ավելի պինդ լինի կամ ստեղները սեղմելուց հետո մնան ներքևում: Վատ կարգավորված գործիքով պարապելով՝ սովորողը դառնում է աստիճանաբար անտարբեր՝ հնչյունի արտաբերման, տեմբրային հնչողության նրբությունների նկատմամբ:

Այսպիսով, վերը նշված բոլոր պահանջները շատ կարևոր նշանակություն ունեն ինքնուրույն պարապմունքների ժամանակ: Դրանց ոչ ճիշտ կիրառումը կամ չիմանալը հանգեցնում են աշխատունակության արագ անկման, հոգնածության և ժամանակը անարդյունավետ վատնելուն: Այս մանրութներին ուշադիր ու հոգատար վերաբերմունքը սովորողի հաջող աշխատանքի գրավականն է:

Սովորողի ինքնուրույն աշխատանքը նույնպիսի ուսումնական աշխատանք է, ինչպես կատարողական ունակությունների ձեռքբերումը ամբողջությամբ: Այն միաձուլված է ուսումնառության գործընթացին և անմիջականորեն կապված է նրա հետ:

Ինքնուրույն աշխատանքը հարուստ է մտքերով, նախաձեռնություններով, կամքի ու ստեղծագործական երևակայությամբ:

Որպեսզի բարձրացվի ինքնուրույն աշխատանքի որակը, հարկավոր է հետևողականորեն զարգացնել մտածելակերպը, ինքնահսկողությունը, դժվարությունները հաղթահարելու հմտությունները, ավելի ու ավելի բարդացող առաջադրանքների ինքնուրույն հաղթահարումը, ինչպես նաև հանդես բերել սեփական մոտեցումների՝ այս կամ այն առաջադրանքների կատարման ժամանակ:

Մինչև սովորողին ինքնուրույն աշխատանք հանձնարարելը՝ անհրաժեշտ է նրան բացատրել առաջադրանքի իմաստը, իսկ հետո սովորեցնել գործնական կիրառումը: Հետևաբար, սկզբում պետք է մշակել առաջադրանքը, ճշտել որոշակի խնդիրներ, որոշել աշխատանքների հաջորդականությունը և հենց դասի ժամանակ գործնականորեն ստուգել, թե որքանով նա ըմբռնեց առաջադրանքը և ինչ-

պես է մտադիր կատարել այն:

Այդ վերլուծական աշխատանքի ընթացքում հարկավոր է, որ սովորողը ինքնուրույն կատարի սխալների ուղղումը:

Կարևոր է աշխատանքը կազմակերպել հերթականությամբ, այնպես, որ առաջնահերթ լինի այդ ժամանակահատվածի համար առավել կարևոր խնդիրների հաղթահարումը: Խնդիրները պետք է հաղթահարվեն աստիճանաբար՝ մեկը մյուսից հետո և իհարկե կապված լինեն նախորդ աշխատանքների հետ՝ հենմվելով արդեն ձեռք բերված ունակություններին:

Կատարվող աշխատանքը ներառում է.

1. նոտային տեքստի ճշգրիտ վերարտադրում,
2. ռիթմիկ պատկերների ճշտում,
3. ստեղծագործության կառուցվածքի ըմբռնում,
4. նախորդ բոլոր խնդիրների հետ փոխկապակցվածություն,
5. կատարման համար անհրաժեշտ արտահայտչամիջոցների

ընտրություն:

Բնությունից մարդն օժտված է ինքնուրույնությամբ, ամեն ինչ սեփական ուժերով փորձելու ձգտումով: Իրենց ինքնուրույնությունը պաշտպանելու համար, երեխաները հաճախ ցուցաբերում են մեծ համառություն:

Հաճախելով երաժշտության առաջին դասերին, երեխաների առջև բացվում է միանգամայն նոր ասպարեզ, որտեղ յուրաքանչյուր քայլափոխի ի հայտ են գալիս հետաքրքրական երևույթներ: Շատ կարևոր է, որ երեխան հենց սկզբից կարողանա ստանալ բազմաթիվ «ինչու»-ների պատասխանները, որը նրա ինքնուրույնության զարգացման առաջնահերթ խնդիրն է: Ուսուցիչն աշակերտի դաստիարակում, մտավոր հետաքրքրություն առաջացնում, տալիս է ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի բանալին:

Ինքնուրույն աշխատելու ունակությունների զարգացումը բարեհաջող է անցնում միայն այն դեպքում, եթե աշակերտը հասկանում է, թե ինչ գեղարվեստական նպատակ ունեն ուսուցչի դիտողությունները:

Ինքնուրույն աշխատանքի կարևորագույն պայմաններից է ինքնահսկողության առկայությունը:

Աշակերտների ինքնուրույնության դաստիարակության գործում

օգտակար է, որպեսզի նրանք ժամանակ առ ժամանակ առանց դաստուրի օգնության սովորեն փոքրածավալ ստեղծագործություններ՝ պիեսներ: Այդ ձևով սովորած պիեսները նպատակահարմար է լսել ամբողջ դասարանով:

Շատ կարևոր է իմանալ ծնողների վերաբերմունքը իրենց երեխաների երաժշտական պարապմունքների հանդեպ: Որոշ ծնողներ չափից ավելի խնամակալություն են հանդես բերում և դառնում կրկնուսույցներ, որով և զրկում են երեխային ինքնուրույնությունից: Երբեմն էլ ընդհակառակը՝ երեխաների երաժշտական պարապմունքները ծնողների կողմից անուշադրության են մատնվում: Երբեմն, անհրաժեշտ է ծնողների հետ անցկացնել դաստիարակչական զրույց, ձգտել օգնել, այլ ոչ թե խանգարել երեխայի երաժշտական զարգացումը: Ծնողները պետք է հետևեն, որպեսզի երեխան պարապի և դրա համար ստեղծեն բոլոր անհրաժեշտ պայմանները:

Հաճախ, սովորողները չեն կարողանում ճիշտ ու հավասարաչափ բաշխել իրենց ժամանակը: Իսկ երբ է պարապելու ամենալավ ժամանակը: Շատ ուսուցիչներ կարծում են, որ ամենաարդյունավետ ժամանակը առավոտյան ժամերն են, երբ նկատվում է էներգիայի մեծ վերելք, ուշադրության ու ընկալման թարմություն: Սակայն սովորողները միշտ չէ, որ կարող են օգտագործել այդ ժամերը, քանի որ զբաղված են դպրոցի դասերով: Հետևաբար, նպատակահարմար է երաժշտական գործիքով պարապել այն ժամանակ, երբ դեռ չեն սկսվել տեսական առարկաները: Այդ ժամանակահատվածը բարենպաստ կանդրադառնա երեխայի երաժշտական պարապմունքների վրա, քանի որ նա արվեստի հետ շփման աշխատանքում կունենա ուշադրության առավել կենտրոնացում:

Յուրաքանչյուր հաջորդ տարում տնային աշխատանքը հարկավոր է աստիճանաբար ավելացնել: Օրինակ, եթե առաջին դասարանում աշակերտը պետք է պարապի օրվա ընթացքում մեկ ժամ, ապա հաջորդ տարիներին պետք է ավելացնի այդ ժամը՝ հասցնելով մինչև երկու-երեք ժամի: Դրանք պետք է կազմակերպել ոչ թե միանգամից, այլ աշխատանքը հավասարաչափ բաշխել օրվա ընթացքում: Կենտրոնացված, արդյունավետ պարապմունքները ցածր դասարաններում չեն գերազանցում 30-40', իսկ պատանիների շրջանում՝ 50': Այդ պատճառով հարկավոր է հանգստանալ, այնու-

հետև նորից նստել պարապելու: Սակայն պարապմունքների հաջողությունը պայմանավորված է ոչ թե ծախսված ժամանակով, այլ ուշադրությամբ և կենտրոնացմամբ, ինչպես նաև դասատուի դիտողությունների ճիշտ կատարումով:

Ինչից և ինչպես սկսել ամենօրյա պարապմունքները: Երաժիշտ-կատարողի նվագացանկում համարյա միշտ առկա են կատարման տարբեր փուլերում գտնվող ստեղծագործություններ՝ նոր, արդեն ավարտած և այլն:

Սովորական է դարձել պարապմունքների այն հաջորդականությունը, երբ զամմաներն ու վարժությունները նվագելուց հետո անցում են էտյուդներին և վերջում արդեն տարաբնույթ գեղարվեստական ստեղծագործություններին:

Անկասկած, օրգանիզմի աշխատանքային վիճակին անցնելու և մկանային համակարգի գործունեության կենտրոնացման համար անհրաժեշտ է նախավարժանք, ընդ որում անհրաժեշտ է ոչ միայն ձեռքերի, այլ նաև ամբողջ օրգանիզմի ընդհանուր հոգեբանական-ֆիզիոլոգիական նախապատրաստման, հուզական և նույնիսկ մտավոր գործընթացների յուրատիպ լիցքավորման համար, լսելու, աշխատելու ընթացքում ստեղծագործության բովանդակության մեջ ներթափանցելու, զգացմունքայնության համար:

Շատ երաժիշտ-մանկավարժներ կարծում են, որ զամմաների ու վարժությունների կատարումը պարտադիր է, քանի որ դրանք սովորողի տեխնիկական հմտությունների հիմնական բազան են: Պատմությունից հայտնի է, որ որոշ հայտնի դաշնակահարներ իրենց ամբողջ կյանքի ընթացքում վարժություններ են նվագել, մյուս մասը՝ գերազանցապես երիտասարդ տարիներին, իսկ մի մասն էլ՝ դրանց մեծ նշանակություն չի տվել: Մասնագետների կարծիքով միայն այն դեպքում, երբ սովորողը օժտված է շարժողական ապարատի բացառիկ ընդունակությամբ, կամ ամենօրյա աշխատանքում առկա է բավական լայնածավալ ու տարաբնույթ վիրտուոզ ստեղծագործություն, կարելի է կրճատել զամմաների ու վարժությունների վրա ծախսվող ժամանակը: Այս երկու պարագաների առկայության դեպքում դրանց կատարումը չպետք է շատ ժամանակ զբաղեցնի:

Ոչ պակաս կարևոր է նաև, որ շատ երեխաներ իրենց ամենօրյա աշխատանքը սկսեն ամենաինչև ստեղծագործությունից, որը մեծ

լարում, մասնավորապես ուշադրություն չի պահանջում: Այդպիսի ստեղծագործությունների վրա աշխատելիս նրանք վատնում են իրենց լավագույն ու թարմ ուժերը և հետո միայն անցնում ավելի բարդ ստեղծագործությունների՝ գլխավոր բարդությունների լուծմանը: Ուժերի բաշխման այդպիսի սխալ ու անգիտակից մոտեցման հետևանքով դժվար թե նրանք կարողանան բարեհաջող հաղթահարել իրենց առջև դրված խնդիրները:

Շատերը համարում են, որ պարապմունքները պետք է սկսել նոր ստեղծագործություններով կամ այնպիսիներից, որոնց վրա աշխատելիս շատ դիտողություններ են արվել, իսկ ավարտել անշշան աշխատանք պահանջող ստեղծագործություններով:

Աշխատանքն անարդյունավետ կլինի, եթե սովորելու համար վերցվի ստեղծագործության մեծ հատված կամ ամբողջ ստեղծագործությունը միանգամից: Հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել երաժշտական ֆրագմենտի մեկ-երկու ավելի փոքր հատվածների վրա, որից հետո պետք է աշխատել դրանք իրար հետ կապել: Աշխատելով այս կամ այն հատվածի վրա՝ հարկավոր է այն յուրացնել տեխնիկապես՝ հաշվի առնելով դինամիկ նրբերանգները: Բազմակի կրկնությունը օգտակար է միայն այն դեպքում, քանի դեռ ուշադրությունը չի ցրվել և այն չի վերածվել մեխանիկական աշխատանքի:

Անգիր սովորելիս ցանկալի է նվազել դանդաղ տեմպում, որն օգնում է ավելի արագ ու հիմնովին հիշել նյութը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նախավարժանքը, որպես կանոն անհրաժեշտ է, բայց միշտ չէ, որ պետք է լինեն գամմաներ կամ վարժություններ: Կարելի է սկսել օրինակ քնարական ստեղծագործությունների վրա աշխատանքից, կամ ավելի խոշոր պիեսների հատվածներից, որտեղ դեռ պետք է հասկանալ, թե ինչ է պահանջվում: Դրանից հետո կարելի է անցնել ավելի առաջնային խընդիրների լուծմանը, ինչը պահանջում է ինչպես շարժողական ապարատի, այնպես էլ մտավոր կարողությունների լարում: Այսպիսի աշխատանքը նպատակահարմար է կազմակերպել ավելի հեշտ ու մատչելի ստեղծագործությունների հետ հաջորդաբար, օրինակ՝ վարժությունների ու էտյուդների, կամ այնպիսի ստեղծագործությունների հետ, որտեղ արդեն հաղթահարված են դժվարությունները:

որը և մտավոր աշխատանք չի պահանջվում:

Երաժշտական գործիքով պարապմունքները պահանջում են ուժերի մեծ լարում, ֆիզիկական լավ պատրաստվածություն: Աշխույժ ու եռանդուն լինելու, հոգնածություն չզգալու և տրամադրությունը բարձր պահելու համար հարկավոր է զբաղվել մարմնամարզությամբ, սպորտի տարբեր ձևերով, հակառակ դեպքում պարապմունքներն անարդյունավետ կլինեն: Երաժշտի ֆիզիկական պատրաստվածությունն իր մեջ կարող է ներառել հետևյալ մարզաձևերը՝ վազք, լող, ֆուտբոլ և այլն: Խորհուրդ չի տրվում զբաղվել այնպիսի վարժություններով, որոնք ձեռքերի և ուսերի շրջանում լարվածություն են առաջացնում: Մարմնի ֆիզիկապես լավ վիճակում գտնվելը ճանապարհ է հարթում երաժշտի բարձր զգայական վիճակի համար և պարապմունքների ժամանակ դրական ազդում մտավոր գործընթացի վրա:

Մանկավարժի կարևորագույն խնդիրներից է աշակերտին ինքնուրույն աշխատանքի սովորեցնելը և սեր արթնացնելը: Այնպիսի պատկերացումներ, հատկանիշներ, ինչպիսիք են երևակայությունը, մտածողությունը, խանդավառությունը, աշխատասիրությունը, ակտիվությունը, նախաձեռնությունը, երաժշտությամբ հափշտակված լինելը կօգնեն աշակերտին ավելի հեշտ հաղթահարել ինքնուրույն աշխատանքը: Եռանդով ինքնուրույն աշխատանքը՝ դասատուի հսկողության ներքո հնարավորություն է տալիս զգալիորեն բարելավել ուսուցման գործընթացը: Միևնույն ժամանակ առաջանում է լրացուցիչ ժամանակ մոր մյուս բացատրելու համար, որը նպաստում է սովորողի արագ առաջընթացին, պատասխանատվության զգացողության աճին և ինքնազարգացմանը:

Այսպիսով, աշխատանքի ընդհանուր հիգիենիկ պայմանների պահպանումը, երաժշտական գործիքով ամենօրյա տնային պարապմունքների ճիշտ կազմակերպումը կարևոր գործոններ են, որոնք նպաստում են երաժշտի ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Алексеев А., Методика обучения игре на фортепиано., Москва, 1971.
2. Савшинский С. И., Режим и гигиена работы пианиста., Москва., 1963.
3. Петрушин В. И., Музыкальная психология., Учебное пособие., Москва, 2000.

РЕЗЮМЕ

Преподаватель ЕГК Марина Эдуардовна Мартикян в методической работе "Организация самостоятельной работы начинающего музыканта" представляет тщательный последовательный труд педагога в процессе формирования будущего музыканта путем обучения игре на фортепиано. Рассматриваются формы самостоятельной работы, изучение учебного материала, роль родителей, распределение учащимися времени занятий, режим и гигиена работы пианиста.

SUMMARY

Marina E. Martikyan, Pedagogue of YSC, - "The Organization of the Beginning Musicians' Individual Work".

The article aims at forming a future well-organized student through methods of leaning to play the piano as a part of his individual work. The forms of studying the educational material, parents' roles, the schedule and hygiene issues of the pianist's work are discussed.

ՅԵՐԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Համալսարանի անվ. պետական կոնսերվատորիայի ընդհանուր դաշնամուրի ամբիոնի դասախոս, դաշնակահարուհի՝ Մարինա Էդուարդի Մարտիկյանի «Սկսնակ երաժշտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը» ուսումնամեթոդական հոդվածը ընդերցվել է ընդհանուր դաշնամուրի ամբիոնի 2010 թ. նոյեմբերի 26-ին Կոնդի ունեցած խորհրդակցության ժամանակ՝ ելույթ են ունեցել գրախոսներ՝ Պոգոսյան և սույն ամբիոնի վարիչ՝ Սվետլանա Արուստեակի Դավթյանը և երաժշտության փեսայության ամբիոնի դասախոս Մուսաննա Վոլոդյայի Աճեմյանը նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են 26.04.2012 ամբիոնի նիստով երաշխավորել հրապարակման սույն ժողովածուում:

УДК 784:378

ԻՍՏԳՂԱՅԻՆ-ԶԱԶԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՍՈՐԻՈՂ
КАФЕДРА ЭСТРАДНО-ДЖАЗОВОЙ МУЗЫКИ
CHAIR OF JAZZ-POP MUSIC

НАРИНЭ КАРЛОВНА ЗАРИФЯН
*Композитор,
доцент Ереванской государственной
консерватории им.Комитаса*

**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ
ВОКАЛЬНЫХ ЦИКЛОВ И РОМАНСОВ**

*Музыкальное воспитание - это
не воспитание музыканта,
а прежде всего человека.*

В.А. СУХОМЛИНСКИЙ

Вокальный цикл - это цикл романсов или песен, объединенных общей идеей, а также музыкальным тематизмом. Понятие “вокальный цикл” аналогично поэтическому циклу в литературе (1.). За последние годы среди широких слоев населения возрос интерес к искусству. Но насколько это способствует эстетическому воспитанию, формированию духовных потребностей и интересов? Это проблема, которая в первую очередь касается образовательной системы, потому что именно здесь закладываются основы становления личности. Об отношении человека к искусству можно говорить с позиции трех аспектов: восприятия, постижения, творческой деятельности.

Практика показывает, что комплексное использование различных видов искусства, когда каждый из составляющих комплекс, усиливается за счет своеобразного подхода к окружающей действительности, делает процесс обучения и восприятия более совершенными, увлекательным, интересным, доступным и понят-

ным. При этом, активизируется восприятие, а следовательно, и художественное образование и воспитание. Литература и музыка имеют много общего. Они являются временными видами искусства. Предметом их содержания является объективная жизнь. Они воздействуют на воображение, чувства и волю человека.

Правда, каждый вид искусства имеет свое воспитательное значение, по-разному воспринимается людьми. Чаще всего музыка взаимодействует с искусством слова (в песнях, романах, ариях, вокальных ансамблях, хорах, операх, кантатах, ораториях и т.д.). В таком синтезе и музыка, и слово равнозначны. Поэзия во взаимодействии с музыкой помогает яснее увидеть скрытые в художественных произведениях эстетические ценности. Музыка в своем слиянии с поэзией, с одной стороны, усиливает выразительность поэтического слова, с другой — подчеркивает и то туманное, недосказанное, что есть в поэзии досказывает то, что можно прочесть между строк, дорисовывает внутренний мир, для которого слово является только самой внешней и довольно грубой оболочкой (1.).

Мелодия романа отражает не только общий характер стихотворного образа, но часто является самостоятельным и равноправным компонентом ансамбля. В. А. Васина-Гроссман отмечает, что песенному жанру присуще искусство мелодического обобщения, а искусство детализированного воплощения поэтического слова в музыке является отличительным признаком романа. И в литературе, и в музыке встречаются одинаковые понятия, такие, как ритм, метр, рифма.

При отборе музыкальных произведений для исполнения студентами вокального отделения, необходимо обращение к высокоидейным, художественно полноценным, и в тоже время доступным для восприятия учащимися произведениям, способствующим реализации воспитательных задач, а также пробуждению и формированию духовных потребностей.

Первый вокальный цикл в истории музыки - “К далекой возлюбленной” Л. ван Бетховена (1.). Формы и жанры песен Бетховена разнообразны: от “компанейских” песен до песен-монологов. В песенном творчестве Бетховена проявились и новые, характерные именно для XIX века черты. Наиболее важная - это

появление принципа цикличности. Объединение песен в цикл - новое, характерное именно для XIX века явление. Цикл Бетховена “К далекой возлюбленной” появился в 1816 году, то есть тогда, когда новые романтические течения в музыке выявились уже достаточно явно. В первой половине XIX века жанр был освоен немецкими композиторами-романтиками: Францем Шубертом (“Прекрасная мельничиха”, “Зимний путь”), Робертом Шуманом (“Любовь поэта”, “Любовь и жизнь женщины”).

Позже выдвигаются новые имена мастеров песни: Гуго Вольфа, затем Рихарда Штрауса, Густава Малера, Макса Регера. Вслед за ними к жанру вокального цикла обращаются и другие композиторы, в частности Михаил Глинка (“Прощание с Петербургом”). До середины XIX века все вокальные циклы писались для голоса в сопровождении фортепиано. Первый вокальный цикл с оркестровым сопровождением - “Пять стихотворений Матильды Везендонк” Рихарда Вагнера. В дальнейшем вокальные циклы писали Густав Малер, Кароль Шимановский, Дмитрий Шостакович, Витольд Лютославский (1.).

Первые два десятилетия XX века истории армянской музыки отмечены как период значительного обогащения музыкального творчества новыми жанрами, в том числе и вокальными (романс, кантата, баллада, мелодекламация, детская песня). Развернутые вокальные произведения видных армянских композиторов расширили спектр жанров национальной музыки. Выдающийся композитор, классик армянской музыки Александр Спендиарян своим профессионализмом поднял армянскую камерно-вокальную музыку на уровень достижений европейской и русской классической музыки.

Романос Овакимович Меликян - один из крупнейших деятелей армянской музыкальной культуры, композитор с ярким самобытным дарованием, общепризнанный мастер армянского романса. К 1917-1918 годам относится замечательный цикл романсов “Змрухти” (“Изумруды”), свидетельствующий о творческой зрелости и высоком мастерстве композитора.

В начале 1920-х годов Р. О. Меликян создает цикл “Зар-вар” - еще одно доказательство художественного мастерства композитора (2. С. 83).

После Р. О. Меликяна важную роль в развитии армянского камерно-вокального жанра принадлежит Аро Леонович Степаяну. Из произведений, созданных А. Л. Степаяном, наиболее примечателен цикл романсов на слова Шираза *op. 56*. Хотим также отметить романсы на слова Варужана, Сиаманто и других поэтов. В дальнейшем развитии армянского романса большую роль сыграло творчество композиторов Эдуард Асланович Абрамяна, Роберт Аршакович Атаяна, Адам Гегамович Худояна, Гегуни Оганесовна Читчян и многих других (3.).

Սըրնթաց և ակտիվ զարգացող կերպարից հետո հակադրություն է ստեղծվում: Հանդարտ տեմպը, միմոր տոնայնությունը, *6/8* չափը և *p*-ն ծառայում են քնարական ու փոքր-ինչ թախծոտ թեմայի կերտմանը: Այն հնչում է 1-ին ջութակի նվագաբաժնում, մյուս լարայինները նույնպես ունեն ինքնուրույն գծեր: Համառոտ թեմային անմիջապես հաջորդում է վարիացիոն մշակումը: 2-րդ անգամ այն հընչում է դաշնամուրի նվագաբաժնում, արպեջջոյատիպ ակկորդներով նվագակցության ֆոնի վրա: Թեմային իմիտացիոն ձևով արծազանքում է 1-ին ջութակը, մյուս լարայինները նույնպես մերթ ընդ մերթ արծազանքում են՝ պոլիֆոնիկ տարրեր և ավելի հագեցած բնույթ հաղորդելով կառուցվածքին: 3-րդ անգամ թեման ստանում է պաթետիկ ու բուռն հնչողություն: Այն անցնում է դաշնամուրի, ալտի և թավջութակի ցածր ռեգիստրում, օկտավային կրկնապատկմամբ շեշտված հնչողությամբ, որի հարմոնիկ գծերն են հանդիսանում ջութակների, նաև դաշնամուրի նվագաբաժիններում մանր տևողություններով ֆիգուրացիաները՝ բաշխված անհամաչափ մետրական պատկերով: Վիրտուոզ և բարձրակետային հնչողությունից հետո թեման կրկին փոխում է իր կերպավորումը: Այս անգամ այն անցնում է դաշնամուրի նվագաբաժնում, մաժոր երանգով, թավջութակի տոնիկական ձայնառությամբ հաստատուն բնույթ հաղորդելով:

Զարգացման հաջորդ փուլում թեման անցնում է թավջութակի, ապա՝ 1-ին և 2-րդ ջութակների նվագաբաժիններում, դաշնամուրի ակկորդային նվագակցությամբ, մյուս լարայինները զամնայանման շարժմամբ պարբերաբար լրացնում են ֆակտուրան և նպաստում ընդհանուր զարգացմանը: Կերպարի մաժորային հաստատումից հետո հաջորդող վարիացիայում թեման բոլորովին նոր բնույթ է ստանում: Այս անգամ այն խաղացկոտ պար է (*tempo di valse*), որը հնչում է դաշնամուրի նվագաբաժնում, *3/4* չափով պարային նվագակցությամբ, քրոմատիկ սեկվենցիոն շարժումն էլ փոփոխական բնույթ և ճկունություն է հաղորդում: Լարայինները պասսիվ են և միայն հարմոնիկ ձայնառության դեր են կատարում: Այս վարիացիան ստանում է երկմասանի, ինքնուրույն և համեմատաբար ծա-

վալուն կառուցվածք և նոր շունչ հաղորդում կերպարին:

Հաջորդ վարիացիան սկսում է դաշնամուրի տրիոլային վարընթաց շարժմամբ, նվագակցությամբ և անմիջապես անհանգիստ տրամադրություն ստեղծում: Թեման սկսում է ալտի նվագաբաժնուն և փոխանցվելով 2-րդ, ապա՝ 1-ին ջութակին, մյուս լարայինների պոլիֆոնիկ գծերով և տոնայնական շեղումներով լարված ու անդադար զարգացող կերպար է ստեղծում: Ձարգացման արդյունքում անսպասելի հայտնվում է 1-ին մասի նախանվագի մոտիվը դաշնամուրի նվագաբաժնում, լարայինների արագընթաց պասսաժներով: Օկտավային կրկնապատկումներով, *fff* -ով, *pizz* -ով բարձրակետային հնչողությամբ հաջորդող վարընթաց շարժումից հետո վերջին անգամ հնչում է թեման, ինչպես սկզբում, 1-ին ջութակի նվագաբաժնում՝ ուղեկցվելով մյուս լարայինների ինքնուրույն գծերով, բուռն զարգացումից հետո *pp*-ով համոզիչ ավարտի հասցնելով մասը:

3-րդ մասը (*Allegro vivace*) կրկին հակադրվում է նախորդին. սա աշխույժ ձևով բարդ եռամաս Սկերցո է: Թեթև ու մաժորային պայծառ կերպարն անմիջապես ներկայանում է լարայինների զարկերակ հիշեցնող *pizz* -ների հարմոնիկ ֆոնով, որի վրա դաշնամուրի նվագաբաժնում ալիքաձև շարժմամբ ծավալվում է մեղեդային գիծը: Հատկանշական է նաև չափը՝ 12/8, որում պահվում է անհանգիստ զարկերակը: 2-րդ նախադասության մեջ թեման անցնում է ջութակների և ալտի նվագաբաժիններում, դաշնամուրի հետ ակկորդային նվագակցությամբ: Տեմբրային վարիացիացման ենթարկվելուց բացի թեման այստեղ նաև մեղեդային զարգացում է ստանում՝ դառնալով ավելի ծավալուն և ընդգրկելով տոնայնական նոր ոլորտներ: Սրընթաց շարժմամբ կառուցվածքը, կրկնողության նշանին համաձայն, հնչում է ևս մեկ անգամ՝ այդպիսով ավելի հաստատուն դարձնելով կերպարը: Հաջորդ կառուցվածքում հայտնվում է նոր թեմա՝ փոքր-ինչ թախծոտ ու միմորային երանգով, ավելի քնարական հնչողությամբ հակադրվելով 1-ինին: Թեման անցնում է 1-ին ջութակի նվագաբաժնում և փոխանցվում ալտին՝ մյուս լարայինների կոնտրապոնկտային արձագանքներով և դաշնամուրի ակկորդային նվագակցությամբ: Խրոմատիկ սեկվենցիոն շարժման վրա հիմնվող թեմայից հետո կրկին հնչում է սկզբնական թեման,

այս անգամ 1-ին ջութակի և դաշնամուրի նվագաբաժնում՝ մյուս գործիքների հարմոնիկ ֆոնի վրա ավելի ազդեցիկ ու հաստատուն հնչողություն ստանալով: Լարայինների միջև մեղեդային գծերի հաճախակի փոխանցումները, ապա միաժամանակյա հնչողությունը ուշադրություն է պահանջում կատարողներից՝ հստակ ու ճիշտ վերարտադրելու կառուցվածքի առանձնահատկությունները:

Բարդ եռմասանի ձևի 2-րդ մասը՝ Տրիոն, նոր կերպարային ոլորտ է ստեղծում. ավելի հանդարտ տեմպ, $3/4$ չափում ավելի մեծ տևողություններով շարժում, սակայն թեման որոշակի ինտոնացիոն մանություն ունի սկզբնական թեմայի հետ և կարելի է ասել, որ ծնվում է նրա զարգացումից՝ կարծես որպես նոր կերպավորում: Թեման հնչում է 1-ին ջութակի և ալտի օկտավային, ապա կվարտային կրկնապատումներով, թավջութակի տոնիկական ծայնառության հիմքով: Թեման հնչում է ևս մի քանի անգամ՝ ենթարկվելով տեմբրային ու տոնայնական վարիանտայնության:

Բարդ եռմասանի ձևի 3-րդ մասը վերարտադրում է 1-ինը՝ վերականգնելով ուրախ ու սրընթաց շարժմամբ կերպարը: Որպես վերջաբան, համառոտ կերպով անցկացվում են 2-րդ մասի թեման և կրկին սկզբնական թեման՝ ավարտվելով գործիքների միաժամանակյա հնչողությամբ:

4-րդ մասը (*Allegro moderato*) ստեղծագործության կուռ դրամատուրգիական կառուցվածքի կարևոր օղակներից է՝ ֆինալը, որը նախորդ մասերի թեմաների համրագումարն է և ամփոփումը: Այն սկզբում ունի ֆուգայանման կառուցվածք և կրում է բարոկկո ոճի տարրեր: Սկսում է 1-ին մասի նախանվագի մոտիվով, թավջութակի և դաշնամուրի վճռական ու ազդեցիկ հնչողությամբ: Ցածր ռեգիստրում օկտավային կրկնապատկմամբ և միմորային հնչողությունը խորհրդավոր բնույթ է կրում: Կերպարը զարգացում է ապրում, ֆակտուրան դառնում է ավելի հագեցած ու նպաստում ավելի հանդիսավոր տրամադրության հաստատմանը: Հաջորդում է 2-րդ մասի թեման՝ կրկին պոլիֆոնիկ զարգացմամբ, գործիքային, տոնայնական ու ռիթմիկ վարիացիոն-վարիանտայնության ենթարկվելով: Ապա վերարտադրվում է 1-ին մասի գլխավոր թեման: Որպես զարգացման տարրեր են կիրառվում տրիոլների, մեծ ու փոքր տևողությունների համադրությունը, ակկորդային, օկտավա-

յին կրկնապատկումներով, երբեմն էլ ջարդված ակկորդներով կարծ տևողություններով ֆիգուրացիաների հաջորդումը նվագակցության մեջ, գործիքների տարբեր ֆակտուրային համադրությունը՝ մերթ որպես երկխոսություն, մերթ միահամուռ հնչողությամբ, մերթ պոլիֆոնիկ իմիտացիոն արձագանքներով և բարդ շերտավորումներով:

Վերջին անգամ մշակվելով՝ այն բերում է *tutti* և *fff* հնչողությամբ հանդիսավոր ու սպառիչ եզրափակման:

Արենսկու դաշնամուրային Կվինտետն այն բարդ կամերային ստեղծագործություններից է, որը ուսումնական ծրագրում պետք է կատարեն 3-4-րդ կուրսերում սովորող, լավ պատրաստված և փորձառու ուսանողները: Կվինտետում, բացի ջութակներից կարևոր և թեմատիկ գիծը տանող դեր ունեն մաս ալտն ու թավջութակը, և դրանք կատարողներից պահանջվում է հատուկ հմտություն: Դաշնակահարն էլ պետք է լինի տեխնիկապես ուժեղ՝ այս ստեղծագործության կատարման ժամանակ իրեն առաջադրվող բազմազան բարդությունները հաղթահարելու համար:

«Արենսկին դաշնամուրի հրաշալի գիտակ է, գործիքի բնույթն ու առանձնահատկությունը նրբորեն զգացող, թաքնված հնարավորություններին քաջատեղյակ, գունային հնարավորությունները հմտորեն իրագործող» (1. էջ 48): Կոմպոզիտորի՝ հմուտ դաշնակահար լինելու փաստը լավագույնս անդրադարձել է նրա երկերում և մասնավորապես այս Կվինտետում: Չնայած բարդությամբ, ստեղծագործությունը պետք է շարունակել ընդգրկել անսամբլի դասարանի նվագաջանկում և նպաստել նրա նորանոր կատարումներին:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Цыпин Г. М., А. С. Аренский.*, М.: Музыка., 1966.
2. */История русской музыки.*, Том 3., М.: Музгиз., 1960.
3. *Русская музыкальная литература.*, выпуск 4., Л.:Музыка., 1977.

РЕЗЮМЕ

Методическая работа пианистки, доцента ЕГК Алисы Акоповны Арзуманян "К вопросу интерпретации Фортенианного квинтета А. С. Аренского" рассматривает историю создания и исполнительские особенности произведения. Автор отмечает, что Квинтет написан в 1900 г. и является нововведением в музыкальном искусстве того времени. Особенность еще и в том, что произведение в Ереване впервые было исполнено в декабре 2011 г. студентами класса автора статьи в концерте, организованном заведующей кафедрой, профессором А. С. Берберян.

SUMMARY

Alisa H. Arzumanyan, Docent of YSC, - "On the Interpretation Issue of A. S. Arensky's Piano Quintet".

The article touches upon the composing history and performing peculiarities of Piano Quintet. It was written in 1900 and is a novelty in Music Art of the New Era. It should be mentioned that the composition was first performed in Yerevan only in December 2011 by the students of the author's class in a concert organized by the Head of the Chair, professor A. S. Berberyan.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կամերային անսամբլի ամբիոնի դոցենտ Ալիսա Հակոբի Արզումանյանի «Արենսկու ուրալի և դաշնամուրի Սոնատի առանձնահատկությունների վերլուծությունը» ուսումնասիրողական հոդվածը ամբիոնի 2011 թ. նոյեմբերին «Առաջին անգամ Երևանում» անցկացրած համերգաշարից հետո ամբիոնում տեղի ունեցած խոհրդակցությունում ընթերցվել է: Ելույթ են ունեցել գրախոսներ՝ դոցենտ Գայանե Սիմոնի Հովհաննիսյանը և երաժշտության պատմության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու Օլյա Յուրայի Նուրիջանյանը նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են 16. 10. 2012 թ. ամբիոնի նիստում երաշխավորել հրապարակման սույն ծրագրվածում:

ՀՏԳ- 378:372.8:785.7

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԱՆՍԱՄԲԼԻ ԱՄԲՈՆ
КАМЕРА КАМЕРНОГО АНСАМБЛЯ
CHAIR OF CHAMBER ENSEMBLE

ԱԼԻՍԱ ՀԱԿՈԲԻ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

*Դաշնակահարուհի,
Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի դոցենտ*

**Է. ԳՐԻԳԻ ԶՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՈՒՐԻ ՍՈՆԱՏՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Նորվեգացի կոմպոզիտոր Է. Գրիգը ջութակի և դաշնամուրի սո-
նատները գրել է ստեղծագործական տարբեր շրջաններում: Լինե-
լով նրա վարպետության կայացման տարբեր փուլերի դրսևորում-
ները՝ 3 սոնատներն էլ կամերային անսամբլային արվեստի բարձր-
արժեք նմուշներ են և կատարվել ու կատարվում են աշխարհի
տարբեր երկրներում:

1-ին Սոնատը, *op. 8, F-dur*, Գրիգը գրել է ստեղծագործական վաղ
շրջանում, 1865 թ., Կոպենհագենում: Այն նվիրված է կոմպոզիտորի
ընկերոջը՝ դանիացի գրող Բենիամին Ֆեդդերսոնին: Սոնատը կոչ-
վում է «գարնանային», գրված Դանիայի բնության անմիջական տը-
պավորությունների ներքո և հարում է ժանրային-քնարական ուղու-
տին:

Սոնատի 1-ին մասը (*Allegro con brio*) սկսում է 2 տակտանի մա-
խանվագով. դաշնամուրի երկար տևողությամբ միևնույն ակկորդնե-
րին (*e-moll, a moll*) անսպասելիորեն հաջորդում է ջութակի նվագա-
բաժնում լուսավոր ու հովվերգական թեման, դաշնամուրի հարմո-
նիկ նվագակցության ֆոնի վրա: Մեղեդային գծի ոչ քառակուսի կա-
ռուցվածքը, պոնկտիրային ռիթմը, *6/8* չափում աշխույժ ու խաղաց-
կոտ բնույթը ստեղծում են ակտիվ ու ճկուն կերպար: Գլխավոր
պարտիայում թեման հնչում է ևս մեկ անգամ՝ դաշնամուրի ձևա-

փոխված ու համառոտ անցկացումով: Կապող թեման վերարտադրում է գլխավորի ինտոնացիաները մինոր երանգավորմամբ: Կերպարը ստանում է թախծոտ ու փոքր-ինչ անհամգիստ բնույթ՝ ջութակի և դաշնամուրի պոլիֆոնիկ իմիտացիոն գծերով, հարմոնիկ ֆիգուրացիաների ուղեկցությամբ և կրկին զարգանալով նախապատրաստում է օժանդակ պարտիան: Վերջինս, ընդհանուր կառուցողական սկզբունքի համաձայն, բազմատարր է և ենթարկվում է վարիացիոն զարգացման: Այն սկսում է դաշնամուրի մոտ, հանդարտ ու հայեցողական կերպար ստեղծելով, ապա փոխանցվում է ջութակին՝ դաշնամուրի ակկորդային նվագակցությամբ: Օժանդակ պարտիայում ի հայտ է գալիս նոր մոտիվ՝ կամային, շեշտված հընչյուններով, դաշնամուրի և ջութակի իմիտացիոն արծագանքներով, զուգահեռաբար հարմոնիկ նվագակցության հարստացմամբ և դիապազոնի ընդլայնմամբ զարգացնելով և համարյա անճանաչելիորեն փոխելով սկզբնական կերպարը: Ջութակի *pizz.*-ներով վերընթաց շարժումը և դինամիկ աճը բերում են զարգացման բարձրակետի և հաստատուն ակկորդներով ավարտում էքսպոզիցիան:

Մշակման բաժինն անմիջապես հակադրություն է ստեղծում: Դանդաղ տեմպում՝ (*Andante*), դաշնամուրի նվագաբաժնում հնչում է գլխավոր թեմայի սկզբնական հատվածը՝ համանուն մինորում (*f-moll*): Նրան անմիջապես պատասխանում է ջութակը՝ թեման վերարտադրելով այլ տոնայնությունում, ֆորշլագով ուղեկցվող լամենտոզային ինտոնացիաներով թախծոտ ու փոքր-ինչ դրամատիկ բնույթ հաղորդելով կերպարին: Կրկին անսպասելի վերականգնվում է սկզբնական աշխույժ տեմպն ու հնչում է կապող թեման՝ կրկին վարիացիոն փոփոխության ենթարկվելով: *Pizz.*-ները, կարճ տևողություններով պասսաժներն ու թռիչքները ուղեկցվում են դաշնամուրի ջարդված ակկորդներով ու օկտավների կամային հնչողությամբ: Մշակման բաժինը հիմնականում զարգացնում է գլխավոր թեման, որը հաճախ փոխանցվում է ջութակից դաշնամուրին և հակառակը՝ տարբեր հարմոնիկ ֆիգուրացիաների ուղեկցությամբ կատարողների համար դժվարին դարձնելով նյութի ճշգրիտ ու հետևողական վերարտադրումը:

Ռեպրիզը գրեթե նույնությամբ վերարտադրում է էքսպոզիցիան: 1-ին մասի յուրօրինակ եզրափակում է գլխավոր թեմայի անցկա-

ցումը դանդաղ տեմպում (*Andante*), մինոր սուբդոմինանտայում: Հիշեցնելով եռանդուն կերպարի թախծոտ ու հայեցողական կողմը, գլխավոր տոնայնության հաստատմամբ ավարտվում է 1-ին մասը:

2-րդ մասն (*Allegretto quasi Andantino*) ավելի հանդարտ է ու պարային: Այստեղ կան նորվեգական գեղջկական պարի՝ սպրինգդանսի գծեր: Նախատակտով սկիզբը $3/4$ չափում վալսի տարրեր է հաղորդում թեմային: Ալիքածն շարժմամբ մեղեդային գիծը, ինչպես նախորդ մասում, հաճախ փոխանցվում է մի գործիքից մյուսին: Միջանկյալ կառուցվածքից հետո, շեշտված նոտաներով հաստատուն և ուժգին հնչողությամբ (*ff*) անցնում է պարային կերպարը՝ եզրափակելով եռմասանի ձևի 1-ին մասը, որը հաստատվում է ռեպրիզում: Միջին մասը՝ տրիոն, ինքնատիպ, գեղեցիկ, հովվերգական պատկեր է: Այն ինտոնացիոն մեամություն ունի 1-ինին և ստեղծում է նորվեգական ժողովրդական գործիքների իմիտացիա:

3-րդ մասը կրկին սոնատային ձևում է (*Allegro, molto vivace*), սրընթաց ու վիրտուոզ, ինչպես նաև խիտ ու հետևողական զարգացման սկզբունքների արտահայտմամբ: Փոքրիկ նախանվագը՝ դաշնամուրի դոմինանտային նոնաակկորդի հիման վրա հնչող ջութակի *pizz.*-ները գլխավոր թեմայի ինտոնացիոն նախապատրաստումն են: Կրկին պոնկտիրային ռիթմի, մանր տևողությունների և *pizz.*-ների օգտագործմամբ հնչում է մաժորային պայծառ թեման ջութակի նվագաբաժնում և անկայուն բնույթի կառուցվածքից հետո նրան պատասխանում է դաշնամուրը: Օժանդակ թեման մույնպես աշխույժ է, սակայն ավելի մեղմ, թախծոտ ու պարային տարրերով: Հիմնվելով սեկվենցիոն շարժման ու զարգացման վրա, այն բերում է էքսպոզիցիայի եզրափակիչ թեմային. ջութակի երգային ու քնարական մոտիվին արձագանքում է դաշնամուրը: Որպես զարգացման տարր է ծառայում վերընթաց տեղիաններով էլիպտիկ շարժումը: Ռեպրիզից հետո փոքր կողան (*Presto*) բարձրակետի է հասցնում ֆինալի վիրտուոզ հնչողությունը և մաժորային պայծառ եզրափակում դառնում:

2-րդ Սոնատը՝ *op. 13, G-dur*, ստեղծվել է 1867 թ. և նվիրված է Գրիգի ընկերոջը՝ ջութակահար, կոմպոզիտոր և դիրիժոր Յուհան Սվենդսենին: «Եռանդուն ռիթմերում, մեղեդիների պարզորոշ ուրվագծերում արտացոլվել են նորվեգական բնորոշ կամային գծեր:

Այս Սոնատը սերտորեն կապված է ժողովրդական ավանդույթների՝ նորվեգացի ջութակահարների՝ ֆլետերների արվեստի հետ» (1. էջ 180-181):

1-ին մասը սկսվում է ծավալուն նախանվագով (*Lento doloroso*): Այստեղ իշխում է մինոր տոնայնությունը (*g-moll*): Հանդիսավոր ու դրամատիկ տրամադրությունը, տրիոլները, բարդ ռիթմիկ ֆիգուրացիաները (սեքստոլ, ունդեցիմոլ և այլն) անկանոն հաջորդմամբ բասի ձայնառության վրա դրամատիկ ռեչիտացիա են հիշեցնում: Աշխույժ (*Allegro vivace*) ու կենսուրախ գլխավոր թեման ծնվում է նախանվագի ինտոնացիաներից, միայն թե սա համանուն մաժորում է և ավելի պարային բնույթով ու ռիթմիկ պատկերով: Ինչպես և նախորդ սոնատում, այստեղ ևս գլխավոր պարտիան ունի 3-մասանի կառուցվածք և միջին բաժնից հետո վերարտադրում է գլխավոր թեման ավելի հաստատուն հնչողությամբ, հարմոնիկ հարուստ ֆոնով և լայն դիապազոնի ընդգրկմամբ, դինամիկ ուժգնացմամբ: Օժանդակ թեման ավելի քնարական է (*h-moll*), ավելի թափանցիկ ֆակտուրայով, մեղմ դինամիկայով (*p, pp*) և կրկին ինտոնացիոն նմանություն ունի գլխավորին: Այն կատարում է ջութակը, իսկ դաշնամուրը նվագակցող դեր ունի: Օժանդակ թեմայի զարգացումից ծնվում է նաև եզրափակիչ թեման՝ ավելի մեծ ինտերվալային շարժմամբ ու թռիչքներով, դաշնամուրի տավղանման նվագակցության ֆոնի վրա ավելի արտահայտիչ հնչողությամբ, կերպարն էլ զարգանում է և ապա վարընթաց շարժման հետ աստիճանաբար մարում: Մշակման բաժինը համեմատաբար համառոտ է, քանի որ էքսպոզիցիայի կերպարները շարունակում են զարգանալ նաև ռեպրիզում: Մասն ավարտվում է պայծառ ու լուսավոր կերպարի հաստատումով:

2-րդ մասն (*Allegretto tranquillo*) էլ, ինչպես նախորդ Սոնատը, եռմասանի կառուցվածք ունի, ռեպրիզում սկզբնական կերպարի հաստատմամբ, հանդարտ է ու քնարական: Անշտապ մեղեդին սկսում է դաշնամուրի նվագաբաժնում, ապա փոխանցվում ջութակին՝ տավղանման նվագակցության ֆոնի վրա քնարական ու հովվերգական բնույթ ստանալով: Թեմայի հաջորդ անցկացումը վարիացիոն է. բարդանում է ռիթմիկ պատկերը (սեքստոլ, սեպտոլ), կարճատև տևողությունների ֆիգուրացիաներով շարժումը ջութակի և

դաշնամուրի նվագաբաժիններում հստակ ռիթմիկ վերարտադրում է պահանջում կատարողներից, հատկապես նմանատիպ ֆիգուրացիաների կատարման ժամանակ: Այդպիսի խնդիր կա նաև միջին մասում, որը 1-ին մասից տարբերվում է փոքր-ինչ ավելի անհամ-գիստ բնույթով ու ավելի բարդ կառուցվածքով. խիտ պոլիֆոնիկ գծեր, ֆորշլագների, տրիոլների գերակշռությամբ պաթետիկ տրամադրության հաստատում, մշտապես զարգացող բնույթի առկայություն:

3-րդ մաս (*Allegro animato*)՝ կարելի է զուգահեռ անցկացնել նախորդ սոնատի ֆինալի հետ: Սա նույնպես ծավալուն է, վիրտուոզ բնույթի, սոնատային ձևի տարրերով: Գրիգի ստեղծագործությունների մեկնաբանները այս մասում դիտարկում են բարդ 3-մասանի ձև՝ ռոնդո-սոնատի գծերով: Դաշնամուրի 3/4 չափում ակկորդային պարային նվագակցության ֆոնի վրա սկսում է ջութակի սրընթաց թեման: Գլխավոր թեմային հաջորդում է միջանկյալ կառուցվածք, որը դաշնամուրի նվագաբաժնում մշակում է սկզբնական տրիոլային ինտոնացիաները, իսկ ջութակը վերընթաց *pizz.*-ներով զարգացող կերպար է ստեղծում: Հայտնվում է ևս մեկ թեմա՝ հայեցողական, քնարական ու պարային, որը զարգանում է վերընթաց սեկվենցիոն շարժմամբ:

Բարդ 3-մասանի ձևի միջին մասը մեծ տևողություններով ձայնառությունների վրա ծավալվող մեղեդային գծով հիշեցնում է ժողովրդական գործիքների հնչողություն: Ռեպրիզում նվագակցության մեջ ավելացող ֆորշլագները նույնպես ժողովրդական բնույթ են հաղորդում կերպարին (կսմիթային գործիքների իմիտացիա): Որպես կոդա ևս մեկ անգամ հնչում է միջին մասի թեման՝ *ff*-ով, ջութակի վերընթաց շարժմամբ: Դաշնամուրի բարդ, ռիթմիկ ֆիգուրացիաների (տրիոլ, նովենոլ) վիրտուոզ (վերջում արդեն *Presto*) հնչողությամբ. ուժեղ ու լուսավոր կերպարի հաստատմամբ եզրափակվում է սոնատը:

3-րդ Սոնատը, *op. 45, c-moll*, ստեղծվել է 1887 թ., կոմպոզիտորի ստեղծագործական ծաղկման շրջանում և նվիրված է գերմանացի գեղանկարիչ Ֆ. Լենբախին: Սոնատը Գրիգի երաժշտության ամենագեղեցիկ ու սիրված մուշկներից է: Այն աչքի է ընկնում կերպարների բազմազանությամբ, «ապպասիոնատ»ի և լուսավոր-քնարա-

կան թեմաների հակադրությամբ, դրամատուրգիական մտահղացման ամբողջականությամբ և գունեղությամբ:

1-ին մասը (*Allegro molto ed appassionato*) սկսվում է գլխավոր թեմայով: «Թեմայի բնույթը հիշեցնում է բեթհովենյան «Ճակատագրի» կերպարները, հերոսի կյանք ներխուժող անբացատրելի ուժի ազդեցությունը» (1. էջ 383):

Դաշնամուրի ակկորդային ծայնառության ֆոնի վրա ջութակի նվագաբաժնում հնչում է շեշտված նոտաներով, պունկտիրներով և կարճ տևողությունների համադրությամբ պաթետիկ ու արտահայտիչ թեման: Գլխավոր պարտիայում կա ևս մեկ թեմա՝ մաժորային, հանդիսավոր ու վճռական, կրկին ջութակի նվագաբաժնում, դաշնամուրի կարճատև տևողություններով հարմոնիկ նվագակցությամբ պահելով անհանգիստ զարկերակը: Օժանդակ թեման քնարական է, մաժորային երանգով ու երգային (*cantabile*), սակայն ունի ներքին անհանգստություն և ենթարկվում է տոնայնական ու ինտոնացիոն տարբերակման: Ինքնատիպ է մշակման բաժինը. ջութակի բարձր ռեգիստրում մեղմորեն (*pp*) հնչում է գլխավոր թեմայի սկզբնական մոտիվը՝ ձևափոխված ռիթմիկ մեծացումով, իսկ դաշնամուրը տավղանման նվագակցությամբ եթերային ֆոն է ստեղծում և ամբողջական դարձնում ընդհանուր լուսավոր ու գողտրիկ կերպարը: Խրոմատիկ սեկվենցիոն շարժումը պաթետիկա ու զարգացում է ավելացնում կառուցվածքում: Մշակման բաժնի վերջին հատվածը վերարտադրում է գլխավոր թեման կրկնապատկված հնչյուններով ու այլ տոնայնական պլանով՝ անմիջականորեն նախապատրաստելով ռեպրիզը: Էքսպոզիցիայի թեմաների անցկացումից հետո կոդան վերարտադրում է գլխավոր թեմայի եթերային, ապա և կրկին պաթետիկ հնչողությունը: Գլխավոր տոնայնության՝ *c-moll*-ի տոնիկական հաստատմամբ ավարտվում է 1-ին մասը:

2-րդ մաս (*Allegretto espressivo alla romana*) վառ հակադրություն է ստեղծում ծայրի մասերի հետ: Մաժորային երգային թեման հնչում է դաշնամուրի նվագաբաժնում՝ ակկորդային, երբեմն՝ «տավղային» նվագակցության ֆոնի ներքո: Դաշնամուրին արձագանքում է ջութակը: Միջին մասն ավելի աշխույժ է (*Allegro molto*), շեշտված հնչյուններով, հագեցած կարճատև տևողություններով: Խաղարկային թեման կրկին երկխոսության մեջն է հնչում է ջութակի և դաշնա-

մուրի մոտ՝ զարգացում ստանալով հիմնականում տոնայնական վարիացմամբ: Ռեպրիզում լուսավոր կերպարը ավելի ցայտուն է դառնում. ջութակն ավելի բարձր ռեգիստրում է, դաշնամուրի նվագակցությունն էլ ավելի ակտիվ է, տրիոլային ակկորդների հագեցած հնչողությամբ: **Tr.**-ներով վերընթաց շարժումը գագաթնակետին է հասցնում կերպարի զարգացումը և լուսավոր ու եթերային հնչյունային մթնոլորտով ավարտում մասը:

3-րդ մասում (*Allegro animato*) քնարական հայեցողական կերպարին անմիջապես հակադրվում է անհանգիստ ու սրընթաց կերպարը. դաշնամուրի տրիոլային աշխույժ նվագակցության ֆոնի վրա ջութակի նվագաբաժնում հնչում է շեշտված նոտաներով, կվինտային քայլերով կամային թեման: 2-րդ թեման երգային է (*cantabile*), ավելի մեծ տևողություններով, ինչպես ալեկոծությունից հետո հանդարտ ծփացող ալիքները: 2 թեմաների ևս մեկ անցկացումից հետո ֆինալը եզրափակվում է սրընթաց կոդայով (*Prestissimo*)՝ ջութակի կրկնապատկված նոտաներով, դաշնամուրի շեշտված ակկորդներով ու *ff*-ով հաստատուն ավարտի բերելով:

Դիտարկելով Գրիգի ջութակի և դաշնամուրի սոնատները, կարելի է նկատել կոմպոզիտորի ստեղծագործական մի շարք կարևոր հատկանիշներ, կառուցվածքին, կերպարներին և անսամբլին առնչվող օրինաչափություններ: Այսպես, սոնատներում արտացոլված են սերն ու ուշադրությունը դեպի մորվեգական բնության կերպարները, անդրադարձը ժողովրդական երաժշտամտածողությանը, երաժշտական գործիքների ու ժանրերի ազդեցությունը՝ համեմված անհատական ոճի գծերով (ինտոնացիոն կառուցվածքի ճկունություն, օրնամենտիկա, իմպրովիզայնություն, տրիոլների, սինկոպաների, մեծ սեպտիմաների, սեպտակկորդների, մոնոակկորդների կիրառում, սեկունդային և տերցիային քայլերով խրոմատիկ քայլերով զարգացում, ոչ քառակուսի կառուցվածքով թեմաներ, վարիացիոն մշակում, հարմոնիկ ու պոլիֆոնիկ տարրերի ինքնատիպ համադրություն, սոնատային ցիկլում՝ հակադիր մասերի հաջորդում):

«Գրիգի կամերային անսամբլներում ծնվում է կոնցերտային սոնատի նոր ոճ, որը գունեղ, տեմբրային-կոլորիստական է, հագեցած ինքնատիպ նվագախմբային էֆեկտներով» (1. էջ 377):

Անսամբլի առումով հատկանշական է գործիքների բարդ երկխո-

սուբյուրը՝ մերթ մրցակցող, մերթ հավասարազոր, տեխնիկական և տեմբրային բազմազան հնարավորությունների դրսևորմամբ, ինչը հետևողականություն և ուշադրություն է պահանջում կատարողներից:

Գրիգի ջութակի և դաշնամուրի սոնատները անհրաժեշտ և ուսանելի ստեղծագործություններ են կամերային-ամսամբի ամբիոնի դասարանի նվագագանկում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Левашева О. Е.*, Э. Григ., М.: Музыка, 1974.
2. *Кремлев Ю. А.*, Э. Григ, М.: Госмузиздательство., 1958.
3. *Друскин М. С.*, История зарубежной музыки второй половины 19-ого века., выпуск 4., М.: Госмузиздательство., 1963.

ՔԵԶԻՄԵ

Учебно-методическая статья пианистки, доцента ЕГК Алисы Акановны Арзуманян "О конструктивной и исполнительской интерпретации сонат для скрипки и фортепиано Э. Грига" анализирует 3 сонаты для скрипки и фортепиано Э. Грига, посвященные писателю Бенямину Феддерсону. При исполнении примечателен сложный диалог инструментов, иногда соревнующихся, иногда выражающих равносильные, технические и тембровые возможности, что требует от исполнителей последовательности и пристального внимания. Сонаты для скрипки и фортепиано необходимы в репертуаре студентов кафедры ансамбля.

SUMMARY

Alisa H. Arzumanyan, Docent of YSC, "On Constructive and Performing Interpretations of E. Grig's Sonatas for Piano and Violin".

In the article three sonatas for piano and violin by E. Grig dedicated to writer Benjamin Feddersen are analyzed. While performing, the compound part with piano and violin is like a dialogue between them, sometimes they compete, sometimes they express technical and timbre equality, which requires the performer's succession and much attention. Sonatas for piano and violin are part and parcel of the Chair of Chamber Ensemble.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոնսերվատիվ անվ. պետական կոնսերվատորիայի կամերային անսամբլի ամբիոնի ղեկավար Ալիսա Հակոբի Արզումանյանի «Է. Գրիգի ջութակի եւ դաշնամուրի սոնատների կառուցվածքային և կատարողական մեկնաբանության շուրջ» ուսումնամեթոդական հոդվածը ամբիոնի 2011 թ. նոյեմբերին և դեկտեմբերին դասարանական համերգներից հետո ընթերցվել է ամբիոնում փեդի ունեցած խորհակցության ժամանակ: Ելույթ են ունեցել գրահոսներ՝ ղեկավար Անահիտ Ռաֆայելի Իսրայելյանը և երաժշտության պատմության ամբիոնի դասախոս, արվեստագիտության փեկնածու Օլյա Յուրայի Նուրիջանյանը նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են 28.12.2011 թ. ամբիոնի նկարում երաշխավորել հրապարակման սույն ժողովածուում:

ՀՏԳ 781

ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ 2-ՐԴ ԱՄԲՈՆ
КАФЕДРА СТРУННЫХ ИНСТРУМЕНТОВ N 2
CHAIR OF STRING INSTRUMENTS N 2

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ջութակահարուհի,
Երևանի Կոմիտասի անվան
պեպական կոնսերվատորիայի դասախոս

ԱՆՀԱՅՏ ՀԵՂԻՆԱԿԻ «ՎԱՐԱՆԻՄ Ի ՄԵՂԱՑ» ՏԱՂԻ
ՓՈԽԱԴՐՈՒՄԸ
ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՈՒՐԻ ՀԱՄԱՐ
(Մեկնաբանման խնդիրները)

«Վարանիմ ի մեղաց» տաղի փոխադրումը ջութակի և դաշնամուրի համար համեստ ներդրում է ջութակահարների նվագացանկը հարստացնելու, ընդ որում, ոչ միայն համերգային, այլ նաև ուսումնական ասպարեզում:

Հոգևոր երաժշտությանը դիմելը պայմանավորված է ոչ միայն մեր ժամանակների «ոգու սովով», այլև այն հանգամանքով, որ հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի գործիքային նմուշներ կամ չեն եղել, կամ մեզ չեն հասել: Ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Հայ Առաքելական եկեղեցում երաժշտական գործիքներ չեն կիրառվել: Բացի այդ, հաճախակի ասպատակվող, պետականությունը չունեցող Հայաստանում երաժշտական արվեստի զարգացումը չէր կարող ընթանալ Եվրոպական դասական արվեստի հունով: Ուստի, մեզանում այն ժամանակ չէին կարող ստեղծվել կոմպոզիտորական դպրոցներ, համերգային կազմակերպություններ և այլ կառույցներ: Չէին կարող ստեղծվել Հայնրիխ Բիբերի «15 միստերիաներ Մարիամ Աստվածածնի կյանքից» ջութակի սոնատների պես գործեր, կամ խորալների հիման վրա գրված երգեհոնային պրելյուդներ և այլն:

Տաղը փոխադրելիս, բնականաբար, որևէ նախադեպի հենարա-

նի կարիք էինք զգում թե՛ մեր ժամանակներում, թե՛ անցյալի կատարողական արվեստում: Մանավանդ, որ հայ հոգևոր երաժշտությունը միայն գործիքով կատարելու ավանդույթը երկար պատմություն չունի:

Հայտնի է, մեր եկեղեցում կիրառվող միակ երաժշտական գործիքը երգեհոնն է, այն էլ մուտք է գործել Գևորգ Դ (1813-1882) Կաթողիկոսի օրոք: 1896 թ. Բեռլինում ուսանելիս, Կոմիտասն իր Սաղմոսում («Առ զեսո Բաբելացոց») նվագաբաժին է հատկացրել երգեհոնին:

Այսօր մենք ունենք հոգևոր երաժշտության գործիքային տարբերակների բազում արժեքավոր նմուշներ: Օրինակ, Տիգրան Մանուկյանի «Հալիկ» տաղի մշակումը՝ ալտի և հարվածայինների համար: Մինչ այդ Գրիգոր Նարեկացու նույն «Հալիկ մի պայծառ տեսի» տաղը օգտագործել են Լևոն Աստվածատրյանը («Պրուլոգ»), Սերգեյ Աղաջանյանը («Պոլիմոնոդիա»), Էդգար Հովհաննիսյանը (1-ին Սիմֆոնիա), Երվանդ Երկանյանը (երգեհոնի համար) և ուրիշներ:

Բազմաթիվ այլ տաղերի և շարականների մեղեդիները, հնչեղանգները զարդարում են մեր կոմպոզիտորների գործիքային երաժշտությունը:

Հիշարժան է նաև «Եկայք հաւատացեալք» շարականի փոխադրումը մենամկազ ջութակի համար, հայր Ղևոնդ Դայանի կողմից (1933 թ., Վենետիկ, Մխիթարյան միաբանություն):

«Վարանիմ» տաղի փոխադրումը, որը կատարել ենք կամերային անսամբլին հասցեագրված՝ Դանիել Երաժշտի համանուն տարբերակից, ունի բազում զուգահեռներ, նաև արևմտաեվրոպական արվեստում: Օրինակ, Գլյուկի հայտնի «Մեղեդին»՝ «Օրփեոս» օպերայից, Վիլհելմի փոխադրած Յո. Ս. Բախի «Արիան»՝ ջութակի և դաշնամուրի (երգեհոնի) համար և Շուբերտի ու Բախ-Գուլմոյի «*Ave Maria*»-ները Ժ. Մասնեի «*Meditation*» (Աղոթք) պիեսը...

Այժմ անդրադառնանք «Վարանիմ» տաղին, որը աղոթք է առ Աստվածածնին: Վաղուց ավանդույթ է դարձել ծրագրային բնույթի գործիքային պիեսներին կցել բնաբաններ կամ բանաստեղծություններ, որոնց հիման վրա ստեղծվել են այդ գործերը: Այդպես է Բիբերի հիշյալ միստերիաներում, Ջ. Տարտինիի «Լքված Դիդոն»

ջութակի սոնատում, Յո. Յայդնի «Մեր խաչված Փրկչի 7 խոսքերը» օրատորիայի կվարտետային տարբերակում: Այս ավանդույթին հետևել են Պ. Ի. Չայկովսկին, Ա. Ն. Սկրյաբինը և Մ. Ռավելը:

Կան կատարողներ, ովքեր իրենց նվագաբաժնից զատ մնացած արտահայտչամիջոցները չեն ընկալում կամ անտեսում են: Նման երաժիշտներին անվանի ջութակահար Բորիս Գուտմիկովը անվանում էր «մեկտողանի»: Նկատի ունի, որ ջութակի նվագաբաժինը շարադրվում է մեկ տողի վրա: Հիրավի, կատարողը պետք է պատշաճ կերպով իմանա կատարվելիք ստեղծագործությունը, հեղինակի մտահղացումը, խորհրդաբանությունը, բովանդակությունը, ձևը, ոճը, նվագակցությունը, հարմոնիան, պոլիֆոնիան և ձևակառուցողական այլ բաղադրիչներ: Տեղին է Անտոն Վեբերնի ասույթը. «Ստեղծագործության բովանդակությունը հասկանում են շատերը, ձևը՝ քչերը, իսկ էությունը՝ եզակիները»: Ուստի, ինչպես Վիրգիլիոսն էր Դանթեին առաջնորդում անդրաշխարհում, այնպես էլ կատարողը ունկնդրին պետք է հաղորդակից դարձնի կատարվելիք ստեղծագործությանը: Կատարողը պետք է ինքը կերտի, վերակերտի երկը, այլ ոչ թե կուրորեն տրված բնազդական վայելքին, գնա գայթակղող երաժշտության ետևից: Վիրգիլիոսի դերը պետք է ստանձնի մաև մանկավարժը, վերլուծելով, մեկնաբանելով, անձրմական օրինակով իր սանին տեղափոխի ստեղծագործության աշխարհը, նրա հնչյունային տիեզերքը:

Խնդրո առարկա տաղի պարագայում նախ պետք է ընթերցվի բանաստեղծությունը, մեկնաբանվի նրա խորհուրդը:

*Վարանիմ ի մեղաց,
Դու ազապիչ մեղուցելոյս, ո՛վ Տիրամայր,
Ո՛ հ, ո՛վ փիրամայր,
Ո՛ հ, ցօղեա՛ կաթիլ մի
Կուսական զօրեղ կենաց,
Ո՛ հ, զօրեղ կենաց:*

*Յիմ նախկին վայելմանց
արժանապէս արքաքսեցայ, ո՛վ եղիկելոյս,
Ո՛ հ, ո՛վ եղիկելոյս,
Ո՛ հ, փուշ եւ փափասկ
Բուսոյց երկիր ողորմելոյս,
Ո՛ հ, ողորմելոյս:*

Տաղն ակնարկում է դրախտից արտաքսված Ադամին:

Ծննդոց գրքում Աստված Ադամին ասում է. «Քանի որ ամսացիր քո կնոջ ծայնին եւ կերար այն ծառի պտղից, որից քեզ պատուիրեցի չուտել, թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կեանքի բոլոր օրերին: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը... Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչեւ հող դառնալը, որից ստեղծուեցիր, որովհետեւ հող էիր եւ հող էլ կը դառնաս»: Ելնելով վերը նշվածից, կարող ենք ասել, որ «Վարանիմ ի մեղաց» աղոթքն ունի համամարդկային հրմնչեղություն և վերաբերում է յուրաքանչյուր աղանորդու: Սա ըմբռնելով, կատարողը (և ունկնդիրը) պետք է, որ զգա մեծագույն պատասխանատվություն և ակնածանք, չէ՞ որ աղոթքն ուղղված է Տիրամորը և խոսքը հոգու փրկության մասին է: Ահա թե ինչու, կատարողին հղել ենք *“religiso”* նշագրումը, ինչպես տեսնում ենք Ժյուլ Մասնեի հիշյալ աղոթքում և Բելա Բարտոկի դաշնամուրի և նվագախմբի 3-րդ Կոնցերտի 2-րդ մասում: Բացի այդ, ջութակի նվագաբաժնում զետեղել ենք տաղի խոսքերը: Սրա նախադեպը հանդիպում ենք Բրամսի երգեհոնային խորալային պրեյլուդներում, Ղևոնդ Դայանի հիշյալ շարականի փոխադրումում և այլուր: Ինչ վերաբերում է շտրիխներին և ապիկատուրային, ապա հաշվի առանք արևելյան երաժշտությանը բնորոշ մեծացրած սեկունդա ինտերվալը, առկայությունը և ժողովրդական նվագելաոճը, և չխուսափեցինք բաց լարերի առատ գործածությունից, ինչը տաղի կատարմանը պետք է որ հաղորդի հնամենի երանգ և «բուրմունք»: Հավելել ենք նաև դաշնամուրի փոքրիկ նախանվագը, որը նախատրամադրում է ջութակի մուտքը: Այժմ ուսումնասիրենք, թե ինչպես է «Վարանիմ» տաղի մեղեդին արտացոլում բանաստեղծական տեքստը, ինչպես են խոսքերը կյանքի կոչել այդ մեղեդին:

Տաղի յուրաքանչյուր տունը բաղկացած է 6 տողից, որոնք և կազմում են տաղի մեղեդին: Վերջինս ունի յուրօրինակ կառուցվածք, որի տառային բանաձևը հետևյալն է՝ **AB+CB**

13 10

(Տակտերի քանակը և թվարկումը վերաբերում է միայն ջութակի նվագաբաժնին):

Սա պարզ երկմաս ձև է, եռմասանիության տարրերով հանդերձ:

Որևէ ստեղծագործության ձևը, կառուցվածքը բացահայտելիս, որոշելիս, երաժշտագետների շրջանում հաճախ տարածայնություններ են առաջանում: Դա վկայում է այն մասին, որ գոյություն ունեն այնպիսի կառույցներ, որտեղ զուգակցվում են տարբեր ձևերի հատկանիշներ: Այս մասին դասագրքում գրված է. «...*Այստեղ կարելի է արդեն խոսել երկմաս և եռամաս կառույցների սկզբունքների խառնուրդի մասին: Այսպիսի ձևը մենք անվանում ենք երկ-եռամաս: Օրինակ, Ֆ. Շոպենի թիվ 21 էտյուդում*» (1. էջ 135):

Նման տարածայնությունների բազմաթիվ օրինակներ է բերում Յա. Միլշտեյնը: Յո. Ս. Բախի «Լավ տեմպերացված կլավիրի» 1-ին հատորի թիվ 1 Ֆուգան Դ. Ռիմանը, Բուզոնին, Մորգանը, Պերրակին համարում են եռամաս, իսկ Վերկերը, Բ. Բարտոկը և Չաչկեսը՝ երկմաս: Նույնը և թիվ 2 Ֆուգան:

Դառնալով «Վարանիմ» տաղին, նշենք, որ եռմասանիության տպավորություն է ստեղծում կառուցվածքի լադատոնայնական պլանը՝ մաժոր-մինոր-մաժոր: Բացի այդ, մեղեդու 14-16 տակտերը առանձնանում են իրենց հնչուժով, գազաթնակետով, դրամատիզմով և վեր են խոյանում, «ժայռանում» նախընթաց և հետագա դրվագների միջև, իրենց վրա վերցնելով միջնամասի, ջրբաժանի դերակատարություն: Այս մասին է աղաղակում ալեկոծվող մեղեդին և ալիքի գազաթին խոյացող, ամենալարված դարձվածք՝ փոքրացրած տերցիան (*դո դիեզ-մի բեմոլ*), իր արբանյակ-հնչյուններով: Հենց այս 3 տակտերում են հնչում տաղի առանցքային խոսքերը՝ 1-ին տան մեջ՝ «Ո՛հ, ցողեա՛ կաթիլ մի /Կուսական», իսկ 2-րդ տան մեջ՝ «Ո՛հ, փուշ եւ տատասկ»: Բանաստեղծությունում բաբախում են 2 հուզական ոլորտ, մեկը կապված է դրախտային կյանքի երանության հետ, մյուսը՝ մեղսանկան հետևանքով անմահությունը կորցրած մարդու ողբերգության հետ: Ինչպե՞ս են այս երկու ոլորտները «տեղավորվում» եռամաս ձևի մեջ:

Մտաբերենք ձևակառուցման նման մի դեպք, որի մասին տեղեկանում ենք Կառլ Գեյրիմգերի «Յոհաննես Բրամս» մենագրությունից:

Ֆրիդրիխ Յյոլդեռլինի «Ճակատագրի երգը» բանաստեղծությունում ևս հակադրվում են 2 աշխարհ, 2 ճակատագիր՝ երկնաբնականների կյանքը, երանությունը և տառապյալ մարդու հուսահատու-

թյունը: Ընդ որում, մարդկային տառապանքը նկարագրող հատվածը երկու անգամ կարճ է, քան երկնայիններին «հատկացված» դրվագը: Ձևականուցման նկատառումներով Յո. Բրամսը «տառապանքների» բաժինը կրկնապատկում է և դա հնարավորություն է տալիս կոմպոզիտորին իրագործել 2-րդ, ավելի հզոր գագաթնակետը և «պայթյունը»:

Նման գործերում «Բրամսը՝ միանգամայն Բեթհովենի ոգով, ճեղքում-անցնում է խավարից դեպի լույս, վախից և վշտից՝ դեպի ազատություն և երջանկություն»... «Ճակատագրի երգ»-ի խոսքերը պատկերում են իրադարձությունների ընթացքը» (2. էջ 333):

Այնուամենայնիվ, ստեղծագործությունը լավատեսությամբ ավարտելու նպատակով, Յո. Բրամսը վերջում կրկնում է նվագախմբային լուսաշող նախանվագը, միավորելով և հաշտեցնելով մարդկանց և երկնաբնակներին: Նման բան տեղի է ունենում «Վարանին» տաղում (ճիշտ է, համեմատվող օրինակների չափերը և ժանրը խիստ տարբերվում են, սակայն սկզբունքը նույնն է): Տաղի հեղինակը ևս վերջում կրկնել է լուսավոր դրվագը: Մենք էլ ջութակի փոխադրումներում կրկնում ենք ամբողջ 2-րդ մասը՝ մաժոր դրվագով հանդերձ, առավել հզոր լիցք հաղորդելով 2-րդ գագաթնակետին և ավելի հաստատուն դարձնելով ավարտը: Անշուշտ, բանաստեղծական տեքստի իմաստը և հնչողությունը իրենց լիցքն են հաղորդում, գուժարում տաղի մեղեդուն:

Մինչդեռ, խոսքերից զատված և ջութակին հասցեագրած տաղի մեղեդին առաջ է բերում փոխհատուցման, լրացուցիչ արտահայտչամիջոցների անհրաժեշտություն: Այս նպատակով էլ տաղի 2-րդ մասի սկզբի երեք տակտերը (14-16) կրկնելիս, շարադրել ենք մեկ ութնյակ վերև, որտեղից մեղեդին գահավիժում է և վերադառնում «ի շրջանս յուր»: Այս համգուցալուծումից հետո այն խաղաղվում է լուսավոր վերջնականացմամբ: Բացի այդ, 2-րդ և 3-րդ օկտավայում նրվագելով, ջութակը հնարավորություն է ստանում կիրառել ակկորդներ և զույգ հնչյուններ, որոնք պատկերավոր ասած, «կրակի վրա յուղ են լցնում», զորացնում հնչուժը: Այսպիսով, տաղը վերածվում է փոքրիկ մի ողբերգության, որն ավարտվում է «քավությամբ» և կորսված դրախտի վերագտնումով: Եվ մինորի «փշերը, վերածվում են մաժորի եղեմական «վարդերի», մանավանդ, որ ըստ ավանդույ-

թի, նախքան Ադամի մեղսագործությունը, վարդը փշեր չուներ, և այն Մարիամ Աստվածածնի խորհրդանիշն է...

Ամփոփելով, ասենք, որ վերը նշված տեղեկատվությունը ուսումնասիրելով, ուսանող-ջութակահարը պետք է գիտակցի, որ որևէ ըստեղծագործություն (անկախ չափերից) կատարելուց առաջ անհրաժեշտ է «յոթ անգամ չափել», համակողմանիորեն վերլուծել այն: Միայն այս դեպքում կատարումը կլինի խորքային, ամբողջական և հավաստի:

ՎԱՐԱՆԻՄ Ի ՄԵՂԱՅ ՏԱՂ ԱՍՏՈՒԱՍԽԱՆԱՅ

Անանուն

Փոխադրությունը՝ Գեորգ Դանիելյանի

Վին, կրոնչուն, ազատ:
Maestoso, religioso, rubato

Violino

Վին, կրոնչուն, ազատ:
Maestoso, religioso, rubato

Fiano

5

Վա - լա - ճի - մ ի մե - դաք, Դու՝ ա - զա -

9

սիլ ցն - դա - ցն - լոյս, ո' - լ Տի -

12

բա - ճայ, ո' - - - - - հ'

15

allarg.

ո' - - լ Տի - բա - ճա - - լ'

allarg.

18 *a tempo*

mf n' - - h, go - n'aur' lya - p'it d'it lya -

a tempo
mf

20

lyu - - - - - lya'it' go - - - - - it - it

mf

22

lye - - - - - lya'it' n' - - - - - h

mf

25 *allarg.*

qo - - ri - ti la - - au - - - g

allarg.

28 *a tempo*

a tempo

mf

39 *rit.*

rit.

rit.

a tempo

31

a tempo

32

allarg.

36

The musical score is written for piano and voice. It is in 4/4 time and D major. The score is divided into three systems. The first system (measures 31-32) is marked 'a tempo'. The second system (measures 33-34) is also marked 'a tempo'. The third system (measures 35-36) is marked 'allarg.' (ritardando). The piano part features various rhythmic patterns, including eighth and sixteenth notes, and rests. The voice part features a melodic line with various intervals and rests. The score ends with a double bar line.

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Музыкальная форма., (общ. ред. Ю. Тюлина.), М., 1974.
2. Гейрингер К., Иоганнес Брамс., М., 1965.

РЕЗЮМЕ

Преподаватель ЕГК, скрипачка Гоар Григорьевна Даниелян в своей учебно-методической статье «Переложение для скрипки и фортепиано тага Неизвестного автора «Мучим сомнениями» («Լարանիմ ի մեղաց»): задачи интерпретации» основывалась на обработке Даниеля Ерачизшита для голоса и камерного ансамбля. Данное переложение преследует цель еще одним примерным образом духовной музыки расширить учебную программу, а также концертный репертуар.

SUMMARY

Goar G. Danielyan, Pedagogue at YSC, Violinist, - "Tagh by an Unknown Author "Slaggering from Sins" («Լարանիմ ի մեղաց»): Arrangement for Violin and Piano".

The article is dedicated to the analysis of the arrangement for violin and piano of Tagh "Slaggering from Sins" by an unknown author. The arrangement was based on another one for voice and chamber orchestra done by Daniel Yerazhishit (Daniel the Musician). This arrangement, being an example of sacred music, pursues a goal of the expansion of the teaching program, as well as concert repertoire.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չորակախարտի, Երևանի Կոնսերվատիվ լիցեյի պատկանող Գոար Գրիգորյանի Դանիելյանի «Անհայտ հեղինակի «Լարանիմ ի մեղաց» փառի փոխադրումը չորակի եվ դաշնամուրի համար» (Մեկնարանման խմբիկներ)-ին նվիրված ուսումնամեթոդական հոդված է: Հեղինակը մասնակցել է «Բախ և Նարեկացի» գիտաժողով-միջոցառմանը, որը ցուցի է ունեցել Հայաստանի Ամերիկյան համալսարանում 2000 թ. հոկտեմբերի 10-ին ներկայացրել է իր գեղույցը «Լարանիմ ի մեղաց» փառի փոխադրումը չորակի և դաշնամուրի համար (մեկնարանման խմբիկները), որպես նաև իր կապարումներով «Շարական» անսամբլի հետ ցուցադրել է սույն փոխադրումը, այնուհետև ԵՊՀ մասնագիտական լարային գործիքների 2-րդ ամբիոնի 2011 թ. մայիսի նիստում խորհրդակցության ժամանակ ներկայացրել է սույն գեղույցը, որպես ուսումնամեթոդական հոդված, որը գրախոսել են պրոֆեսոր՝ Ալեքսանդր Սուրենի Կոստեմյանը և երաժշտության փեսայության և կոմպոզիտորական ամբիոնների պրոֆեսոր, կոմպոզիտոր, արվեստագիտության թեկնածու Միրայել Արսյունի Կոկսանը, նշելով նյութի արդիականությունը և հոգևոր զանազանի հիասրանչ շերտերը ներառելու և հարցադրանքներ և մեկ նմուշով հոգևոր երկերի ցանկը և երաժշտագիտական հրապարակության սույն ժողովածուում:

УДК 78.03:781:378

**ՀԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱՌԹՅԱՆ,
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՍԻՐՈՆ
КАФЕДРА ИСТОРИИ, ТЕОРИИ
ИСПОЛНИТЕЛЬСТВА И ПЕДАГОГИКИ
CHAIR OF PERFORMING ARTS HISTORY,
THEORY AND TEACHING METHODS**

ԼԻԼԻՏ ԵՐՎԱՆԴՈՎՆԱ ԳՐԻԳՐՅԱՆ

*Պիանիստկա, кандидат искусствоведения,
профессор Ереванской государственной
консерватории им. Комитаса*

**К ВОПРОСУ ОБ ОСОБЕННОСТЯХ
МУЗЫКАЛЬНО-ИСПОЛНИТЕЛЬСКОГО ИСКУССТВА**

*Музыка — более высокое откровение,
чем любая мудрость и философия.*

Л. ван Бетховен

Музыка — искусство, которое открыло перед человечеством огромные возможности наслаждаться шедеврами, созданными композиторами прошлого и настоящего.

Почему, воздействуя на сердца и умы людей, музыка вызывает определенные чувства, мысли и стремления? На эти и другие подобные вопросы человечество постоянно ищет ответа, хотя и сегодня многое для нас остается пока тайной. И вопрос заключается не только в необычайной сложности содержания данной сферы искусства. Суть в том, что музыка постоянно вбирает в себя культурный и жизненный опыт человечества и перерабатывает его своими средствами.

Д. Д. Шостакович подчеркивал, что и созидательный труд народа, и ужасы войны, и выход человека в космос — ничто не про-

шло бесследно для него как для композитора и нашло отражение в творчестве: *“Жизнь и искусство неотделимы друг от друга. Их взаимосвязь в чем-то сродни природе: одно вытекает из другого. Но главным объектом искусства по-прежнему остается человек, его духовный мир, его идеи, мечты, стремления. Поиск художника в этом направлении не имеет пределов: он может показать миллионам людей то, что делается в душе одного человека, и одному человеку открыть то, чем наполнена душа всего человечества, для искусства это равные величины”* (1. С. 362).

Музыка в силу своей способности непосредственно воспроизводить душевные состояния человека, может не только отражать, но и воспитывать его творческую активность. И композитор, если он хочет конкретизировать восприятие содержания своего сочинения, обращается к программным или к иным формам, в которые все чаще включаются уже привычные слушателю коллажи и тому подобные приемы, помогающие восприятию организовать в нужном направлении. К примеру, прием механического *ostinato*, выработанный Д. Д. Шостаковичем в его Седьмой (Ленинградской) симфонии, олицетворяющий бездушную античеловеческую сущность так силен, что влияние его на *“советскую музыку, посвященную войне, имеет множество наклонов. Композитор, необычайно остро понявший самую суть природы фашизма, сумел выразить ее с потрясающей силой”* (2. С. 2).

Искусство пользуется художественной трансформацией мыслей и чувств. И музыка — не исключение. Она “перерабатывает” жизненное в музыкальное, причем по своим собственным законам. Музыка несет в себе чувства, которые сопровождали создание произведения, были источником вдохновения композитора. В музыкальных образах слиты воедино объективное (в его субъективном преломлении) и субъективное (в его объективизированной форме). Так, при восприятии Прелюдии *A-dur* Ф. Шопена в сознании невольно возникает хрупкий женский образ. В “Болеро” М. Равеля перед слушателем разворачивается картина постепенно приближающегося праздничного шествия. Эти образы несут в себе обобщение, вызывая у слушателей бо-

гатовое поле ассоциаций. Если бы искусство не имело бы этой особенности, оно не смогло бы, например, в образе главного героя оперы выразить характер целого народа, как это сделали М. И. Глинка в “Иване Сусанине”, С. С. Прокофьев в “Повести о настоящем человеке”, А. Т. Тигранян в “Давид-беке”.

Музыка по своей природе искусство исполнительское: вне исполнения, все нового воспроизведения оно не может жить полноценной жизнью. Об этом писал еще Гегель: *“Поскольку звуки не обладают сами по себе длительным объективным существованием как постройки, статуи и картины, а вновь исчезают, мимолетно промелькнув, то музыкальное произведение уже в силу этого моментального существования постоянно нуждается в повторном воспроизведении”* (3. С. 295-296).

На первых этапах развития музыкального искусства эту функцию осуществлял сам композитор. Как известно, позднее исполнительство выделилось в самостоятельный род музыкальной практики. В результате — появились две различные формы музыкальной деятельности, ее разные участники — композитор и исполнитель со своими особенностями дарования, тенденциями и возможностями. Музыка предназначена, как и театр, для многократного исполнения, поэтому она предполагает и интерпретацию. Конечно, музыкальный текст можно читать и глазами, внутренне представляя его звучание. Без сомнения, делать это позволяет очень высокий уровень профессионализма, однако музыкальное представление по своей природе беднее живого восприятия.

Еще в музыке эпохи “барокко” существовала традиция неполной записи текста: многие музыкальные нормы, традиции были закреплены в канонах исполнения и не требовали записи. По мере развития самой музыки, в связи с резким увеличением количества музыкантов произошло некоторое падение исполнительской культуры, при этом тексты начали искажаться.

И. С. Бах одним из первых стал подробно фиксировать в нотах свой замысел, не доверяя искусству инструменталистов. Тем самым, Бах ограничил лишь произвол исполнителя, оставив ему

большие права для интерпретации выдвинул вопрос о качестве исполнения.

В истории музыки есть имена гениальных художников, раздвигающих границы не только исполнительского искусства, но и музыки в целом. Такими новаторами были Н. Паганини, Ф. Лист, А. Рубинштейн, С. Рахманинов.

Им удалось обозначить новые пути развития музыки, создать новые художественные традиции. Музыка в интерпретации творцов-художников обрела новую эстетическую ценность, по-иному раскрыв свои глубинные свойства.

Роль такого музыканта-исполнителя в прогрессивном продвижении музыки огромна. Своим искусством талантливый исполнитель осуществляет не только верное раскрытие творческого замысла автора, но он как бы “дописывает” произведение, акцентирует в нем те стороны, которые ближе ему как художнику. Он — творческий посредник между композитором и слушателем.

Исполнитель выделяет в произведениях, созданных в прошлые эпохи, важное и нужное современнику: он как бы перебирает мост через времена.

В интерпретации современных произведений исполнитель выражает не только то, что волнует композитора, но и себя самого, умножая тем самым воздействие сочинения на слушателя. Так, С. Рихтер, играя Бетховена, не только воспроизвел возвышенно-преподнятый тон высказывания, присущий композитору, масштаб его видения мира и склонность к диалектичности мышления, он подчеркивал и те черты, которые характеризуют историческое значение великого классика: *“Показывая путь от Бетховена к Шостаковичу он наполнял исполняемые произведения дыханием современности. Дар предвидения и дар видения, слышания, ощущения того, чем напоен сам воздух жизни, чем дышит искусство, в высшей степени присущ Рихтеру,* — пишет М. Несетьева. — *Как тонко уловил он и воспринял тенденции, которые движут новую музыку сегодня. Во всяком случае тяга к романтическому в его игре <...> перекликается со стремлением создателей современных произведений к неоромантиз-*

му, склонность к естественному интонированию непосредственных первичных движений человеческой души — передача музыки, которая звучит внутри каждого” (4. С. 91).

Исполнительство родилось одновременно с возникновением самой музыки. Сначала сочинитель и исполнитель объединились в одном лице — это были формы своеобразной импровизации. С течением времени происходило постепенное разделение средств сочинения и исполнения. Развивался музыкальный язык, усложнялись задачи отражения жизни, которые возникали перед музыкой, возрастали требования слушателей, совершенствовались инструменты, накапливалась музыкальная литература. Совмещение функций композитора и исполнителя в одном лице при условии усложнения музыкальных текстов сужало рамки воздействия искусства, так как требовало более разностороннего технического мастерства от артиста, чего не мог уже осуществлять автор по отношению ко всем своим произведениям, тем более участвовать во всех исполнениях.

Относительное разделение композиторского и исполнительского искусства в историческом аспекте произошло сравнительно недавно.

Вплоть до XVIII века функции эти, особенно в инструментальном творчестве, как правило, были объединены. Исключения не составляли ансамбли: такие композиторы, как А. Вивальди, Й. Гайдн, В. А. Моцарт обычно были ведущими в них. Даже в прошлом веке многие из выдающихся композиторов были прекрасными пианистами. Это — С. В. Рахманинов, С. С. Прокофьев, Д. Д. Шостакович, как и К. Шимановский и Б. Барток. Играли свои сочинения на эстраде Д. Б. Кабалевский, Т. Н. Хренников, Р. К. Щедрин. Это говорит о том, что такая связь необходима музыке.

Однако благодаря размежеванию композиторского и исполнительского творчества открылась возможность исполнения огромного количества сложнейших в стилистическом и техническом отнeshениях сочинений разных эпох.

Перед исполнителем возникли и соответствующие задачи прет-

ворения авторского замысла, так как теперь слушатель оказался связанным с композитором главным образом через исполнителя.

В современном исполнительском искусстве выделяются творческие моменты интерпретаторского искусства. Исполнитель становится как бы исследователем: он обращается к черновикам и наброскам, высказываниям композитора о замысле произведения и его содержательных особенностях. Основным для исполнителя становится поиск художественного смысла самого произведения и его прочтения.

Выявление художественно-содержательных связей помогает нахождению исполнительской концепции сочинения. Процесс этот — сложный, порой мучительный, как всякий творческий акт.

На сложность творческого артистического процесса указывал замечательный музыкант, пианист, композитор, педагог — С. Е. Фейнберг: *“Нередко исполнитель так глубоко и полно раскрывает замысел композитора, что произведение звучит как вновь созданное. Творчество исполнителя не только дополняет замысел композитора. Стремления того и другого часто бывают противоречивы, так как каждый до некоторой степени посягает на чужую ему область: исполнитель, когда он меняет замысел произведения, и композитор, ограничивающий свободу толкования педантичной точностью записи. Для композитора может быть обидным, если силой воздействия на слушателя он слишком обязан исполнителю. В свою очередь, последний теряет творческий интерес к произведению, не представляющему достаточной свободы индивидуального толкования. Для того и другого является вопросом художественного такта умение перейти за грань подвластной ему области, будь то излишнее перегружение нотными указаниями или вторжение в мир творческих идей автора”* (5. С. 46).

Вне сомнения, что требование формальной верности авторскому тексту может привести к прямо противоположному результату. Верность “букве” не является верностью замыслу автора. Важнейшим критерием художественной ценности интерпретации

является исполнительская концепция, включающая не только спектр выразительных средств и решений, но и способ постижения и раскрытия содержательно-смысловых особенностей того или иного сочинения.

Музыкант-исполнитель, в силу специфики своего творчества, постоянно связан со слушательской аудиторией. Для того, чтобы отвечать требованиям времени он должен быть не только вдохновенным интерпретатором, одновременно чувствующим время автора и время слушателя. Необходимо осознавать и чувствовать, что труд музыканта-исполнителя обрел сегодня просветительское начало и является, по мнению известного пианиста Н. А. Петрова, счастьем: *“не забывая об изведенной музыке, открывать людям неизвестную им музыку, неведомый мир”* (6.).

վեց, հաստատվեց և կայացավ հայկական դասական ռոմանսը:

Գծագրվեց հայկական ռոմանսի զարգացման երկու հիմնական ուղի. առաջինը Ա. Սպենդիարյանի՝ հիմնված ռուսական ռոմանսի և հայ քաղաքային երաժշտության համաձուլվածքի վրա, երկրորդը Ռ. Մելիքյանի՝ ժողովրդական տարբեր ոճերի ընդհանրացման միջոցով, որտեղ կատարվեց ազգային բյուրեղացում:

Հայ երաժշտության դասական, հայ կոմպոզիտորական դպրոցի լավագույն ներկայացուցիչ Ալեքսանդր Սպենդիարյանը լինելով ռուս մեծ կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովի աշակերտը, մեծ դեր է խաղացել հայկական երաժշտության զարգացման գործում: «Ալմաստ» օպերայի հեղինակը հարստացրեց հայ վոկալ արվեստը (ռոմանս, երգ, խմբերգ):

Իսկ Ռ. Մելիքյանի գործունեությունը անգնահատելի է: Սովորելով Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաներում, ուսանելով Ս. Տանեևին, Մ. Իպոլիտով-Իվանովին, Վ. Կալաֆատիին, նա ստեղծել է ռոմանսների հայտնի «Ձառվառ», «Ձմրուխտի» շարքերը և վերադառնալով Հայաստան զբաղվել է հասարակական մեծ գործունեությամբ, Երևանում 1921 թ. հիմնադրել է երաժշտական ստուդիան, որը 1923 թ. վերաճել է կոնսերվատորիայի: Միաժամանակ հիմնադրել է երգչախումբ և գործում մասնակցություն ունեցել Երևանում օպերային թատրոնի հիմնադրման գործում:

30-ականներին ռոմանսի ժանրում հետաքրքրություն հանդես բերեցին Ա. Գ. Տեր-Ղևոնդյանը, Մ. Ի. Միրզայանը, Կ. Ի. Ջաքարյանը, Հ. Լ. Ստեփանյանը, որոնք ձևավորեցին ինքնատիպ ոճ, հղկեցին երաժշտական լեզուն ու ստեղծեցին բարձրարժեք զեղարվեստական երկեր:

Ռոմանսի զարգացման ճանապարհին խթան հանդիսացավ Ա. Իսահակյանի հիմնալի պոեզիան, ներշնչանքի աղբյուր դարձավ Հ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզայանի և այլոց համար:

Հատկապես Հ. Ստեփանյանի երաժշտական ժառանգության մեջ առանձնակի նշանակություն ունեցան երգն ու ռոմանսը (ավելի քան 120 ստեղծագործություն): Անգնահատելի է նրա «Ալազյազի մանիները» վոկալ շարքը՝ Ա. Իսահակյանի խոսքերով, նաև հինգ օպերաները: Հեղինակն իր «Ալազյազի մանիներ»-ում պոետական կերպարի առավել ամբողջական ձգտումով հաստատեց դաշնամու-

րային նվազակցության որոշակի դերը իր ռոմանսներում:

Իսկ Է. Միրզոյանի, որպես ստեղծագործողի անվան հետ է կապված Խորհրդահայ երաժշտության ամենաառաջնային և հետաքրքիր էջերը: Մեծանուն ռուս կոմպոզիտոր Դ. Շոստակովիչի գնահատմամբ «Է. Միրզոյանի ստեղծագործությունը Խորհրդային ամբողջ մշակույթի նվաճումն է» (2. էջ 329):

Կոմպոզիտորն իր ռոմանսներում հասնում է խոսքի և երաժշտության փոխներթափանցման: Երաժշտության և գրականության անքակտելիությունը նոր՝ որոշակի որակ է բերում ռոմանսի զարգացման ասպարեզում և մի այլ աստիճանի է բարձրացնում դաշնամուրի դերը: Միայն մեծ վարպետը կարող է այսպիսի ուժգնությամբ ըզզալ բանաստեղծական հանգի շեշտադրության իմաստն ու վերակերտել այն խոսքի և երաժշտության միջոցով: Է. Միրզոյանի «Ասում են թե», «Երազ տեսա» ռոմանսները, գրված Ա. Իսահակյանի խոսքերով, դասվում են հայկական ռոմանսի սիրված, հաճախ կատարվող և անմարգոհարների շարքում:

Նշված կոմպոզիտորները երաժշտության ռիթմից, հանգից բացի մեծ նշանակություն տվեցին բառին և, իհարկե, խիստ կարևորվեցին դաշնամուրային նվազակցության հսկայական դերը՝ տալով դրամատիկ սուր լարվածք, զգացումների պոռթկուն արտահայտչականություն և, երբեմն ձայնին համահավասար նշանակություն, որը թարմ շունչ ու նոր հոսանք բերեց ռոմանսի զարգացմանը: Բնական է, որ այս երևույթը մղեց կատարողներին՝ երգիչներին, դաշնակահար-կոմպերտմայստերներին անդրադառնալ հայ կոմպոզիտորների ռոմանսներին:

Կրկին աշխուժացավ անդրադարձը ռոմանսին հետպատերազմյան երկու տասնամյակների ընթացքում, հատկապես կոմպոզիտորներ Վ. Ա. Կոտոյանի, Ս. Խ. Ջրբաշյանի, Ա. Մ. Սաթունցի, Է. Ա. Աբրահամյանի, Գ. Յ. Զթյանի, Վ. Ա. Բալյանի, Ա. Ռ. Տերտերյանի, Տ. Ե. Մանսուրյանի կողմից:

Պահպանելով ռոմանսը որպես քնարական ժանր, կապված ազգային երգ-պարային ավանդույթներին, Տ. Ե. Մանսուրյանը մեղեդիական արտահայտչականությունը մոտեցրել է բանաստեղծական խոսքին: Իսկ կոմպոզիտորի երկերում դաշնամուրային նվագաբաժինը մեղեդու համար ստանում է հոգեբանա-զգացական «ֆոն»:

Այսպես, շատ ռոմանսներ ավարտվում են դաշնամուրային զարգացող պոստյուդիայով և հաճախ նվագակցությունը մոտենում է դաշնամուրային պիեսի ավարտուն կերպարին:

Ընդլայնվեց բանաստեղծների շրջանակը, որոնց դիմում էին կոմպոզիտորները՝ Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան, Դ. Վարուժան, Զ. Շիրազ, անգամ Ե. Չարենց (Գ. Չթչյան, Ա. Խուդոյան) և միջնադարի քերթողներից՝ Ն. Քուչակ (Տ. Մանսուրյան):

Ռոմանսը վոկալ-կամերային արվեստ է, որտեղ տրվում է բանաստեղծական կերպարի ընդհանրացված բնութագիրը, որում մեղեդին արտացոլում է բանաստեղծական տեքստի հույզերն ու տրամադրությունը և կերտում նրբակերտ երաժշտական կերպար:

Իսկ «Ռոմանս» տերմինը ծագել է Իսպանիայում՝ դեռևս միջնադարում և սկզբնապես որպես աշխարհիկ երգ, գրվել ոչ թե լատիներենով, այլ իսպաներենով:

XVI դարում «Ռոմանս» սկսեցին կոչել սիրային, կատակային և երգիծական բովանդակության երգերը, որոնք ունեինգործիքային նվագակցություն: Ռոմանսը որպես երաժշտաբանաստեղծական սինթետիկ ժանր XVIII դարի 2-րդ կեսից զարգացել է Գերմանիայում, Ֆրանսիայում, XIX դարի սկզբին՝ արդեն Ռուսաստանում: Դերանք մեծ մասամբ քնարական-դրամատիկական բնույթի՝ գլխավորապես սիրային բովանդակությամբ փոքրածավալ վոկալ ստեղծագործություններ ենգործիքային (կիթառ, դաշնամուր) նվագակցությամբ:

XIX դարում Ռոմանսը դարձավ ամենատարածված և առաջատար ժանրերից մեկը, որն արտացոլում էր ռոմանտիզմի դարաշրջանին բնորոշ միտումները. այն է՝ մարդու ներաշխարհի և հոգեկան ապրումների արտացոլումը իր բոլոր նրբերանգներով:

Նոր տիպի ռոմանս ձևավորվեց ավստրո-գերմանական դպրոցի հիմնադիր Ֆ. Շուբերտի ստեղծագործական արվեստում: Այս դպրոցի լավագույն ներկայացուցիչներից են Ռ. Շումանը, Յո. Բրամսը, Զ. Վոլֆը և ուրիշներ: Ձևավորվեցին ռոմանսի ազգային դպրոցներ նաև Ռուսաստանում՝ Ա. Լ. Գուրիլյով, Ա. Ա. Ալյաբև, Ա. Ե. Վառլամով, Մ. Ի. Գլինկա, Ա. Ս. Դարգոմիժսկի, Մ. Ա. Բալակիրև, Մ. Պ. Մուսորգլևսկի, Ա. Պ. Բորոդին, Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով, Պ. Ի. Չայկովսկի, Ս. Վ. Ռախմանինով, Ֆրանսիայում՝ Զ. Բեռլիոզ, Շ. Գունո, Ժ. Բիզե,

Ժ. Մասնե: Ռոմանսի ժանրում ստեղծագործողների գործունեությունը զուգորդվում էր բանաստեղծական ուղղությունների զարգացմանը զուգընթաց: Ռոմանսի առաջընթացին մեծապես նպաստեցին Վ. Գյոթեի, Զ. Զայնեի, Ա. Պուշկինի, Յու. Լերմոնտովի, Ա. Ֆետի և այլոց պոեզիան: Սերտ կապի և ստեղծագործական համագործակցության մեջ էին Շուբերտ-Գյոթե, Շուման-Զայնե, Գլինկա-Պուշկին և շատ ու շատ հանճարեղ անուններ:

XIX դարում վոկալ-կամերային դասական ռոմանսի կողքին զարգացում ապրեց կենցաղային ռոմանսը, որը նախատեսված էր սիրողական կատարման համար, ավելի պարզ ու մատչելի էր ու ռճական առումով՝ ավելի մոտ երգին:

Այս նույն ժամանակամիջոցում առաջ եկան ռոմանսները վոկալ շարքերում միավորելու ավանդույթը: Կոմպոզիտորները հաճախ սկսեցին մի քանի ռոմանս ներգրավել մեկ շարքում՝ հիմք ընդունելով կերպարի ու գաղափարի ընդհանրությունը, կամ մի հեղինակի ստեղծագործությունները բազմակողմանի ընդգրկելու միտումով: Ինչպես գրում է վոկալ-երաժշտության մեծ մասնագետ, անվանի երաժշտագետ Վ. Ա. Վասիլև-Գրոսսմանը. «Ռոմանսի ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ շարքին դիմելու ձգտումը միշտ կապված է եղել ռոմանսում ինչ որ նշանակալի ու կարևոր միտք արտահայտելու հետ» (3. էջ 308-309): Վոկալ շարքի առաջին նմուշներից է Լ. վան Բեթհովենի «Հեռավոր սիրուհուս» շարքը՝ գրված 1816 թ.: Հատուկ ուշադրության են արժանի Ռ. Մելիքյանի «Աշնան տողեր», «Ձմրուխտի», «Ջառ-վառ» ռոմանսների շարքերը, որոնք հիմնված են ժողովրդական ակունքների վրա:

Ռոմանսի ժանրում ստեղծագործել են չեխիայի, լեհական, ֆիննական, նորվեգական ազգային դպրոցների ներկայացուցիչները: Երբեմն ռոմանս են անվանում ջութակի, թավջութակի և երաժշտական այլ գործիքների համար գրված երգային բնույթի գործիքային պիեսները:

Ավելի ուշ՝ XX դարում նորովի է ընկալվում երաժշտության ու բառի սինթեզը, ընդունված քառյակային ձևերին փոխարինելու են գալիս ազատ ռճի բանաստեղծությունները և նույնիսկ՝ արձակը, օգտագործվում են վոկալ-դեկլամացիոն նոր միջոցներ (Ա. Շոնբերգ), ժանր են ներթափանցում ժողովրդական երգեցողության մեջ

տարածված երաժշտաարտասանական ձևեր (Ի. Ստրավինսկի):

Ռոմանսը տարբերվում է երգից մեղեդու առավել մանրամասնումով, մշակմամբ և բառերի հետ փոխկապակցվածությամբ, գործիքային նվագակցության դերի մեծացմամբ և ավելի արտահայտչական բնույթ կրելով: Ռոմանսի կառուցվածքը ավելի բարդ է, քան երգինը և այն քառյակային ձևի մեջ չէ, ու ավելի հանգամանորեն մշակված գեղարվեստական երկ է:

Հայկական ռոմանսը թևակոխեց մոր փուլ՝ անհատի խոր հոգեբանական ապրումներին ավելացան հայրենասիրության, հեղափոխության, բաղձանքի իրականացման, խոր մտորումների հետ կապված տառապանքների թեմաներ, խոհափիլիսոփայական դրսևորումներ:

Հայ կոմպոզիտորները մեծ նշանակություն են տալիս ռոմանսում դաշնամուրային նվագակցությանը, որի դերը մեծանում է մինչև անգամ ծայնին հավասարագոր լինելու չափ, այն ընդլայնում, խորացնում և մոր բնույթ է հաղորդում ռոմանսին, շեշտադրելով բառին, խոսքին, բովանդակությանը տրվող գեղարվեստական արտահայտչամիջոցներին: Շատ դեպքերում հայ կոմպոզիտորները դիմում են դաշնամուրային նվագակցության ծավալուն նախամվագների և վերջամվագների, երբեմն էլ՝ միջնամվագների, որն ընդհանրացված ձևով արտահայտում է բանաստեղծական տեքստի հիմնական գաղափարն ու տրամադրությունը:

Անդրադառնալով հայկական ռոմանսին պետք է նշել, որ այն անցել է նշանակալի և արգասաբեր ուղի:

Հայ կոմպոզիտորական դպրոցի համարյա բոլոր ստեղծագործողները՝ ավագ սերնդից մինչև երիտասարդներ, դիմել և դիմում են ռոմանսի ժանրին: Նրանք ամուր կանգնած լինելով ազգային հողի վրա, իրենց քուրայով անցկացնելով մաս XX դարի երաժշտության որոշ նորարարություններ, պահպանում են սեփական՝ վառ ազգային ստեղծագործական դիմանկարը:

Վոկալ ստեղծագործություններում դաշնամուրային նվագակցությունը բավական առաջ մղեց դաշնամուրային զրականության դերը և նշանակությունը: Ռոմանսի դաշնամուրային նվագաբաժինը

հանդիսացավ յուրատեսակ «ստեղծագործական լաբորատորիա», որտեղ նագտավ իր լադահարմոնիկ եղանակը, ձևը և դաշնամուրային ոճավորումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բարսամյան Ա. Ա., Հարությունյան Ս. Գ., Հայ երաժշտության պատմություն, Եր., Լույս, 1968 թ.:
2. Բարսամյան Ա. Ա., Հարությունյան Ս. Գ., Հայ երաժշտության պատմություն, Եր., Նոր դպրոց, 1996 թ.:
3. Васина-Гроссман В. А, Мастера советского романса., М., 1980 г.

РЕЗИОМЕ

Преподаватель ЕГК Зарuhi Давидовна Казарян в своей методической статье "Пройденный путь романса и роль фортепианного аккомпанемента в произведениях армянских композиторов" пишет об исторической роли и возникновении песен и романсов в творчестве армянских композиторов, анализируя эти сочинения, представляет разнообразие и значение партии фортепиано в вокальной музыке армянских авторов. В работе даются также методические указания концертмейстерам.

SUMMARY

Zaruhi D. Ghazaryan, Pianist, Pedagogue of YSC, - "The Covered Path of Romances and the Role of Piano Accompanist in Armenian Composers' Works".

In the article the origin period and the historical role of the songs and romances in Armenian composers' works are viewed. The variety and meanings of the parts for piano in Armenian composers' vocal music are analyzed and some methodological advice is given to accompanists.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կոնցերտմայստրական պարասպրան և մասնագիտական դաշնամուրի 2-րդ ամբիոնների դասաւուս, դաշնակահարուհի Զարուհի Դավթի Հազարյանի «Ռոմանսի անցած ուղին և լաշնամուրի նվագակցության դերը հայ կոմպոզիտորների երկերում» ուսումնաւերոդական հոդվածը ընթերցվել է կոնցերտմայստրական պարասպրան ամիոնի 2012 թ. նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 19-ը կայացած «Չուխաշյան-Ֆեայրայ կոմպոզիտորների արվեստի փառատոնի» (ծննդյան 175-ամյակին էր նվիրված) տպավորություններից հետո, ամբիոնում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ: Ելույթ են ունեցել գրաիտուներ՝ պրոֆեսորներ Մարգարիտա Վաազանի Մելիք-Սյուրբանյանը, Լարիսա Գեորգիի Վարկան: Նշելով աշխատանքի լարերությունը, քննարկել և որոշել են մի շարք հոդվածների թվում 29.11.2012թ. ամբիոնի նիստում երաշխավորել հրատարակման տույն ժողովածոում:

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМ Х. АБОВЯНА**

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KH. ABOVYAN**

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԽՍՐԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՅՆԱԴՐՄԱՆ ԱՄԻՈՆ
ФАКУЛЬТЕТ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ
КАФЕДРА ДИРИЖИРОВАНИЯ И ПОСТАНОВКИ ГОЛОСА
FACULTY OF ART EDUCATION CONDUCTING
AND VOICE TRAINING CHAIR**

ՀՏԴ 616.2:784

ԱՆԱՀԻՏ ՍԱՇԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Խ. Արովյանի անվ. Հայկական
պետական մանկավարժական
համալսարանի դոցենտ*

**ԿԱՆԱՆՑ ԵՐԳՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԱՌՈՂՋԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Երգիչների մասնագիտական գործունեության կայունությունն ու կատարողական երկարակեցությունը ապահովագրվում է կանոնավոր ապրելակերպով և յուրատեսակ կարգապահությամբ: Երգչական ծայնային ապարատի կենսագործունեությունը պայմանավորվում է ներքին օրգանների առողջական վիճակով, նյարդային և էնդոկրին համակարգերի բնականոն գործունեությամբ: Ինչպես նշում է Լ.Բ. Դմիտրիևը, օպերային հզոր ծայնով օժտված են որոշ մեյրո-էնդոկրին կառուցվածքի տեր մարդիկ (2, էջ 430): Հոդվածում պարզաբանում ենք մասնավորապես կանանց բնախոսական յուրա-

հատկությունները և երգչուհիների ապրելակերպի առողջաբանական կանոնները: Այս նպատակով անդրադառնանք բժշկագիտությանը և շոշափենք էնդոկրին համակարգի գործունեության որոշ խնդիրներ:

Մարդու օրգանիզմին կենսաբանորեն անհրաժեշտ գործընթացների կարգավորումը իրականացվում է ինչպես նյարդային, այնպես էլ էնդոկրին համակարգերի միջոցով: Այս համակարգի օրգանների խմբին պատկանում են հիպոֆիզը, էպիֆիզը, վահանագեղձը, մակերիկամները, ենթաստամոքսային գեղձի էնդոկրին մասը (Լանգերհանսի կղզյակներ), կանանց ձվարանները, տղամարդկանց սերմնարանները: Առանձին օրգանների և համակարգերի գործընթացներն իրականացվում են ներզատիչ գեղձերի գործուն մասնակցությամբ: Ներզատիչ գեղձերը չունեն հատուկ ծորան և գեղձերի գոյացությունների ներզատուկը արտազատում են անմիջապես արյան կամ ավշի մեջ: Ներզատիչ գեղձերի գործունեության հետևանքով առաջացած նյութերը կոչվում են հորմոններ (հուն․՝ շարժել, դրդել, ակտիվացնել): Հորմոնների արտազատումը կարևոր ազդեցություն է գործում բոլոր օրգանների վրա: Դրանք ակտիվացնում կամ արգելափակում են բջջի ֆերմենտային (քիմ․ խմորիչ) գործընթացները, փոխում են կենսաքիմիական և բնախոսական միացությունները: Հորմոնների նույնիսկ չնչին քանակը կարող է ընտրողաբար ազդել օրգանիզմում տեղի ունեցող գործընթացների վրա (4, էջ 2):

Էնդոկրին գեղձերն իրենց կազմախոսությամբ առանձնացված են, իսկ գործնականորեն սերտորեն կապված են միմյանց: Օրգանիզմում կապ է նկատվում նաև էնդոկրին և ներվային համակարգերի միջև: Հորմոնը ներզատվելով արյան կամ ավշի մեջ՝ տարածվում է ամբողջ օրգանիզմով: Այս գործընթացը կոչվում է օրգանիզմի էնդոկրին համակարգի հումորալ կարգավորում: Սա մարդու կենսագործունեությունը կարգավորող մեխանիզմներից մեկն է, որը իրականացվում է օրգանիզմի հեղուկ միջավայրի՝ արյան, ավշի և հյուսվածքային հեղուկների միջոցով: Պատահական չէ, որ հումորալ (*humor*) բառը լատիներենից թարգմանվում է որպես հեղուկ: Տարվա բոլոր եղանակներին, հղիության ժամանակ, կանանց լուսնային օրերին, (*menstruatio* – լատ. *menses* – ամիս, *lunaria* – լուսին) նույնիսկ օրվա տարբեր ժամերին հորմոնների արտազատման արա-

գությունը փոփոխվում է, հետևաբար՝ տարբեր պայմաններում ունենալով դրական կամ բացասական ազդեցություն: Ֆիզիկական ծանր աշխատանքներից հորմոնների արտազատումն արագանում է և դրանց ազդեցության հետևանքով բոլոր օրգաններում և օրգանհամակարգերում տեղի են ունենում տարաբնույթ փոփոխություններ: Օրինակ՝ ծանրաբեռնվածության հետևանքով գլխուղեղի շնչառական կենտրոններից մղված ռեֆլեքսների ազդեցության ներքո տեղի է ունենում շնչառության արագացում: Հետևաբար, այս երևույթը բացասական է անդրադառնում երգչական շնչառություն կազմակերպելու գործընթացին: Օրգանիզմում հորմոնալ կարգավորումը ենթարկվում է նյարդային կարգավորման՝ կազմելով միասնական համակարգ: Այսպիսով, օրգանիզմում իրականացվում է երկակի կանոնավորում, որը կոչվում է ներյո-էնդոկրին (4, էջ 3):

Հորմոնային խանգարումները և նրանց տարաբնույթ փոփոխական վիճակներն անմիջապես անդրադառնում են երգիչների ծայնե-րանգին, երգչական շնչառություն կազմակերպելու գործընթացին և ծայնի որակական այլ դրսևորումներին:

Անդրադառնալով կանանց երգչական ծայնի պահպանման, կանոնակարգման խնդիրներին՝ նշենք, որ ուսանողական երգչախմբերում խմբավարները երբեմն լուսնային օրերին պարտադրում են աղջիկներին թեկուզ կիսածայն երգել: Երբեմն էլ մեներգեցողության ուսուցիչները այդ օրերին թույլատրում են ուսանողուհիներին նվազակցողի հետ սովորել հանձնարարված ստեղծագործությունները: Սակայն հարկ է գիտակցել, որ հատկապես լուսնային օրերին երգեցողությամբ զբաղվելը վնասակար է: Սկսմակ երգիչների շրջանում երգեցողության գործընթացն իրագործող մասնագիտացված պայմանական ռեֆլեքսներն ամրապնդված չեն: Ընդհանրապես, դեռևս ոչ բավականաչափ վարժված երգիչները չեն կարողանում մեքենայաբար օգտվել կրծքաստոծանեկան շնչառության գործառույթից դիրքավորված օդային սյան հենակետից:

Ինչպես հայտնի է, լուսնային օրերը կնոջ բնախոսությանը բնորոշ, բնականոն երևույթ է: Ելնելով օրգանիզմի առանձնահատկություններից, կլիմայական ու կենցաղային պայմաններից՝ միջին հաշվով այն սկսվում է 10-14 տարեկան աղջիկների մոտ, կրկնվում 24-28 օրը մեկ՝ 3-5 օր տևողությամբ և շարունակվում է մինչև 45-50

տարեկանը, այնուհետև դադարում ընդմիշտ: Սակայն արդի ժամանակներում նկատվում են տարաբնույթ երևույթների դրսևորումներ, մասնավորապես պատանիների շրջանում, այն է՝ վաղաժամ հասունացումը: Նախկինում ընդունված ախտաբանական համարվող որոշ դրսևորումները ներկայումս բնականոն են համարվում: Այստեղ տեղին է անդրադառնալ որոշ բացահայտումների: Ներկայիս բժշկագիտության տեսանկյունից 8–9 տարեկան աղջիկների շրջանում լուսնային օրերի սկսվելը չի համարվում որպես ախտաբանական դրսևորում: Ձայնափոփոխության գործընթացը սկսվում է մուտացիայի (լատ.՝ *mutatio* - փոխարինում) տարիքում, որը պատանիների սեռական հասունացման՝ արբունքի շրջանն է: Այս ժամանակահատվածում մանկական ծայնը թռիչքաձև որակափոխվում է՝ ձեռք բերելով մեծահասակների ծայնին բնորոշ հնչողություն: Եվրոպական ժողովուրդների շրջանում սեռական հասունացումը սկսվում է ավելի ավագ տարիքում: Հարկ է նշել, որ աղջիկներն ավելի շուտ են հասունանում և, ի տարբերություն տղաների, նրանց ձայնափոփոխությունը ընթանում է ավելի սահուն, մասնավոր դեպքերում՝ քիչ նկատելի: Դա բացատրվում է աղջիկների օրգանիզմի աստիճանաբար, հավասարաչափ աճով և խոչակի կազմախոսական տեղադրվածությամբ: Աղջիկների և տղաների խոչակի աճի զարգացման ժամանակի տևողությունները համընկնում են: Սակայն տղաների շրջանում այս գործընթացը բավականաչափ բարդ է ընթանում: Ձայնափոփոխության շրջանի ավարտից հետո կազմախոսական և բնախոսական փոփոխությունների դրսևորումների արդյունքում փոխվում է նաև խոչակի, արծազանքարանների և շնչառության փոխհամաձայնեցված գործընթացների բնույթը:

Որպես կանոն, լուսնային օրերը բացակայում են մինչև հասունացման տարիքը, հղիության ընթացքում, որոշ դեպքերում կերակրող մայրերի ու հասուն տարիքի կանանց շրջանում: Փորձենք պարզաբանել լուսնային օրերին երգեցողությունը ընդմիջելու անհրաժեշտության կանոնակարգի պատճառները: Գիտական հետազոտությունների արդյունքում հայտնի է դարձել, որ լուսնային օրերին հետազոտված աղջիկների 60–70%-ի շրջանում նկատվում է խոչակի և քթնմպանի տարբեր աստիճանի այտուցներ: Ձայնալարերն առողջ վիճակում մարգարիտ են հիշեցնում: Սակայն լուսնային օրերի ըն-

թացքում հետազոտված աղջիկների մեծամասնության շրջանում նկատվել է ծայրալարերի կարմրություն, լործապատում և այտուցվածություն: Այդ օրերին պնևմոգրաֆիկ հետազոտության ենթարկված աղջիկների մեծամասնության շրջանում դիտարկվել է շնչառական շարժումների կազմալուծում, փոփոխվել է շնչառական շարժումների ամպլիտուդը: Տարբեր ամձանց մոտ այս երևույթները յուրօրինակ ընթացք են ունենում և, որպես կանոն, լուսնային օրերի ավարտից հետո կարգավորվում են:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև երգչուհիների ընդհատված հղիություններին: Մեր ժամանակներում հնարավոր է խուսափել չծրագրված հղիություններից, քանզի հղիության արհեստական ընդհատումը հակաքրիստոնեական արարք է և այն շատ վտանգավոր է կնոջ առողջության համար: Սակայն, երբ երիտասարդ երգչուհիներն ինչ-ինչ պատճառներով թիմում են այդ քայլին, ապա անհրաժեշտ է իրազեկ լինեն, որ ընդհատված հղիությունից հետո մինչև առաջիկա լուսնային օրերի ավարտը երգեցողությամբ զբաղվելը վնասակար է: Խնդիրն այն է, որ հղիության ժամանակ կնոջ օրգանիզմում տեղի են ունենում հորմոնալ փոփոխություններ, որոնք արհեստական ընդհատումից հետո չեն կանոնավորվում մինչև հաջորդ լուսնային օրերի ավարտը: Ինչ վերաբերում է հղիությանը, ապա այն բնախոսական, բնականոն երևույթ է, և եթե կինը զերծ է առողջությանն առնչվող հակացուցումներից, ապա այն բարերար ազդեցություն է թողնում օրգանիզմի վրա: Հղիության ընթացքում ձվարաններում և ընկերքում արտադրվող հորմոնների (պրոգեստերոն, պրոլակտին, էստրոգեններ և այլն) ազդեցությունից կատարվում են մի շարք փոփոխություններ, որոնք ընտրողաբար, դրական կամ բացասական են անդրադառնում երգչական ծայնի որակական հատկանիշներին: Հղիության շրջանում երգեցողությունն ամենևին արգելված չէ, դա պայմանավորվում է երգչուհու ինքնազգացողությամբ, որի ընթացքում հնարավոր է տարաբնույթ դրսևորումներ ի հայտ գան: Պտղի աճի հետ համատեղ զարգանում են արգանդի և որովայնապատի մկանաթելերը, որոնք տարածվում են լայնությամբ և երկայնքով: Արգանդի աճից որովայնի պատը լարվում է և մկանները զարգանալով՝ փոխում են ստոծանու դիրքը, որի հետևանքով լայնանում է նաև կրծքավանդակը: Կրծքավանդակի և

ստոծանու այսպիսի նոր դիրքավորումները երգչական շնչառության գործընթացին դրական են անդրադառնում: Հղիության ժամանակահատվածում երգչուհիները երգեցողությամբ կարող են զբաղվել այնքան, որքան ի վիճակի են ֆիզիկապես հաղթահարել մասնագիտական երգեցողությամբ զբաղվելու գործընթացը՝ բացառությամբ վերջին շաբաթները, երբ մեծամասնության շրջանում մկանների գերլարվածությունից երգչական ձայնն սկսում է երերալ և անհաստատուն է դառնում: Հետծննդյան շրջանը դարձյալ անհատական բնույթ է կրում: Մինչև մասնագիտական գործընթացը վերսկսելը հարկ է այցելել ֆոնիատորին: Մայրացած երգչուհիներից ոմանք առավել ամուր են զգում երգչական շնչառության գործընթացին մասնակցող ճնշամկանների աշխատանքը, իսկ ոմանք էլ կորցնում են այդ զգացողությունը: Վերջիններիս անհրաժեշտ է վերսկսել երգեցողության դասընթացները, որպեսզի վերականգնեն նախկինում ձեռք բերած փորձը:

Շոշափելով կանանց մասնագիտական երգեցողության խնդիրները՝ անհրաժեշտ է անդրադառնալ հասունացած կանանց շրջադարձային՝ կլիմակտերիկ փուլին:

«Կլիմաքս» հունարենից բառացի թարգմանվում է սանդղակի աստիճան: Դա կանանց փոխանցիկ անցումային ժամանակաշրջանն է սեռական հասունությունից դեպի ծերություն, որն ավարտվում է մենոպաուզայով՝ լուսնային օրերի դադարով: Այսպիսով, կանանց ձվարանների գործառույթներն ընդմիջտ մարում են: Այս երևույթները մեծամասնության խրջանում արտահայտվում է կլիմակտերիկ սինդրոմով, որն ընթանում է նյարդավեգետատիվ, սրտանոթային, հորմոնալ խանգարումներով և կլինիկական այլ դրսևորումներով: Այդ ժամանակաշրջանում կանայք ունենում են վախի, տագնապի զգացողություն, անքնություն, նկատվում է հիշողության թուլացում, աշխատունակության նվազում և տարաբնույթ այլ ախտանշաններ: Տարիքն առած կանանց ձայնային արտասանական ապարատում տեղի են ունենում փոփոխություններ, որոնց հետևանքով փոխակերպվում է երգչական ձայնի հնչողությունը և որակը: Պարզորոշ է, որ նմանատիպ փոփոխությունները բացասական են անդրադառնում երգեցողության գործընթացին: Նպատակահարմար է այդ շրջանում պարբերաբար այցելել էնդոկրինոլո-

զին, հոգեբան-թերապևտին և իմաստաբար վերաբերվել մասնագիտական երգեցողությանը: Հմուտ և խելամիտ երգչուհիներն անհրաժեշտության դեպքում վերանայում և փոխում են իրենց երգացանկը:

Ներկայումս մեծ բեմերում բարձր վարձատրվող երգիչները նախնական պայմանագրերը չխախտելու համար անտեսում են երգիչների ապրելակերպին համապատասխան, առանձնահատուկ սահմանված կանոնակարգերը: Երգչական ծայնային ապարատը շատ փխրուն է և այն շահարկող երգիչները վտանգում են ի վերուստ իրենց տրված շնորհը և սահմանափակում երգչական կատարողական գործունեությունը:

Ծանոթանալով մասնագիտական երգեցողության մեթոդագիտական գրականությանը, հայտնի է դառնում, որ դեռևս XVII դարից սկսած, մասնագիտական գրեթե բոլոր աշխատություններում ծայնի կենսագործունեության և առողջագիտության խնդիրները համատեղ են ներկայացված: Երգչական ծայնի զարգացումը, ձևավորումը և հետագա երկարակեցությունը պայմանավորված է ուսուցման մեթոդիկայի ճիշտ մոտեցումից, անհատական ծանրաբեռնվածությունից, մասնագիտական պահպանողական կանոնակարգից և այլ հանգամանքներից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Егоров А.*, Гигиена голоса и его физиологические основы., М.: МУЗГИЗ., 1962.
2. *Дмитриев Л. Б.*, Основы вокальной методики., М.: Музыка., 1968.
3. /Детский голос экспериментальные исследования., (ред. В.Н. Шацкой)., М.: Педагогика., 1970.
4. *Կանանյան Ա. Ս., Քյալյան Գ. Պ., Իսահակյան Ջ. Գ.*, ԵրՊԲՀ անատոմիայի ամբիոն ուս. ձեռնարկ, Երևան, 1991:

РЕЗЮМЕ

Доцент Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, вокалистка **Анаид Сашиковна Гаспарян**, автор учебно-методической статьи **“Особенности и гигиена женского голосового аппарата”** рассматривает вопросы взаимодействия, в частности, жизнедеятельности женского голосового аппарата и эндокринной системы. Освещены проблемы, связанные с особенностями, присутствующими периоду переходного возраста (mutation) девушек и возрастной перестройки (climactericus) женского организма. Затронуты вопросы дисциплины и гигиены женского певческого голоса.

SUMMARY

Anahit S. Gasparyan, Pedagogue of ASPU, Pianist, - “The Peculiarities and Hygiene of Female Vocal Apparatus”.

The article touches upon the issues of the interaction, in particular the vital functions of the female vocal apparatus and the endocrine system. The article highlights the problems connected with the mutation and climactericus of the female organism and considers the issues of the discipline and the hygiene of the female singing voice.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խմբավարության և չալնադրման ամբիոնի դոցենտը՝ **Անահիտ Սաշայի Գասպարյանի** «Կանանց երգչական ապարատի առանձնահատկությունների առողջապահական որոշ խնդիրներ» ուսումնամեթոդական հոդվածը ընթերցվել է հիշյալ ամբիոնի 30.08.2011 թ. 1-ին արշանագրություն, խորհրդակցության ժամանակ՝ ելույթ են ունեցել գրախոսներ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՀ վաստակավոր մանկավարժ **Յուրի Կադարչակի** Յուզբաշյանը, պրոֆեսոր **Հենրիկ Զավենի Սիմոնյանը**։ Բժշկագիտության խնդիրներին վերաբերվող նյութը երաժշտավորել է 12. 11. 2011 թ. Երևանի Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու **Ելենա Սիբայելի Աղաջանովան**։ Նշելով աշխատանքի կարևորությունը, քննարկել և որոշել են երաժշտավորել հրապարակման սույն ժողովածուում:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

CONTENT

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО

CHAIR OF GENERAL PIANO

Դավթյան Ս. Ա. ԴԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ՆՎԱԳԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ
ՍՏԵՂՈՎԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԻ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ 4

Давтян С. А. Развитие творческого начала в процессе обучения игре на фортепиано

Davtyan S. A. The development of creativity during the process of learning to play the piano

Աճաբյան Ս. Մ. РАЗВИТИЕ ХУДОЖЕСТВЕННО-ОБРАЗНОГО МЫШЛЕНИЯ НА МАТЕРИАЛЕ ФОРТЕПИАННОЙ ПЕДАГОГИКИ 17

Աբրահամյան Ն. Մ. Դաշնամուրային մանկավարժության նյութերով զեղարվեստական կերպարային մտածողության զարգացումը

Abrahamyan N. M. The development of the figure thinking by the materials of piano pedagogy

Աճաբյան Ս. Մ. ВОПРОСЫ ТЕОРИИ И МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ В КЛАССЕ ОБЩЕГО ФОРТЕПИАНО В МУЗЫКАЛЬНЫХ ВУЗАХ 27

Աբրահամյան Ն. Մ. Դասավանդման տեսության և մեթոդիկայի հարցերը բարձրագույն երաժշտական հաստատություններում ընդհանուր դաշնամուրի դասարանում

Abrahamyan N. M. The theory of teaching and the issues of the methodology in general piano classes of the higher musical institutions

Մարտիկյան Մ. Է. ԱՆԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈԳԵՇՆՉՎԱԾ ԱՐԿԵՍՏ
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆԸ 37

Мартикян М. Э. Александр Арутюнян: вдохновенное искусство для молодежи

Martikyan M. E. Alexandr Harutyunyan: Inspired Art for the Youth

Մարտիկյան Մ. Է. ՍԿՄՆԱԿ ԵՐԱԺՇՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 47

Мартикян М. Э. Организация самостоятельной работы начинающего музыканта

Martikyan M. E. The Organization of the Beginning Musicians' Individual Work

ԷՍՏՐԱԴՆՈ-ՋԱԶՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА ЭСТРАДНО-ДЖАЗОВОЙ МУЗЫКИ

CHAIR OF JAZZ-POP MUSIC

Հարիֆյան Ս. Կ. ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВОКАЛЬНЫХ ЦИКЛОВ И РОМАНСОВ 55

Հարիֆյան Ն. Կ. Վոկալ շարքերի և ռոմանսների զարգացման հեռանկարները

Zarifyan N. K. The Perspectives of Development of Vocal Cycles and Romances

ԿՈՆՑԵՐՏՈՒՅՈՒՄՆԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԱՏՈՒՐ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА КОНЦЕРТМЕЙСТЕРСКОЙ ПОДГОТОВКИ

CHAIR OF ACCOMPANIST PREPARATION

Մագակյան Ս. Ա. ВОКАЛЬНЫЙ ЦИКЛ В. БАБАЯНА “ОСЕНЬ В ГОРАХ КИСО”	63
Մագակյան Ս. Ա. Վահրամ Բաբայանի «Աշունը Կիսո լեռներում» վոկալ շարքը <i>Maghakyan S. H. Vahan Babayan's Vocal Cycle "The Autumn in Kiso Mountains"</i>	

Մագակյան Ս. Ա. ФОРТЕПИАННЫЕ “ОБРАЗЫ” В МОНООПЕРЕ СОФЫ АЗНАУРЯН “НАДЕЖДА”	74
Մագակյան Ս. Ա. Սոֆա Ազնաուրյանի “Հույս” մոնոօպերայի դաշնամուրային «կերպարները» <i>Maghakyan S. H. The Piano "Images" in Sofa Aznauryan's "Hope" Mono-Opera</i>	

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՐՆ
КАФЕДРА ИСТОРИИ МУЗЫКИ
CHAIR OF MUSIC HISTORY

Վաչագյան Ա. Վ. НЕКОТОРЫЕ ПРИНЦИПЫ ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА “ВСЕОБЩАЯ ИСТОРИЯ МУЗЫКИ” НА ФАКУЛЬТЕТЕ КОМПОЗИЦИИ	83
Վաչագյան Ա. Վ. Ստեղծագործական բաժնում «Համընդհանուր երաժշտության պատմության» դասավանդման որոշ սկզբունքների մասին <i>Khachatryan A. V. On Some Principles of Teaching General History of Music in a Class of Composition</i>	

ԿԱՄԵՐԱԶԵՆ ԿՐԱՍՈՐԻԻ ԿԱՐԵՐՆ
КАФЕДРА КАМЕРНОГО АНСАМБЛЯ
CHAIR OF CHAMBER ENSEMBLE

Մինասյան Վ. Վ. ԿԿԱՏԱՌՈՒԹՅԱՆ ԶՈՒՍ ԵՄԻ ԿԼԱՎԻՐԻ ԵՎ ՖԼԵՅՏԱՅԻ ՍՈՆԱՏՆԵՐԻ ԿԱՏԱՌՈՎԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՇՈՒՐՋ	91
Մինասյան Վ. Վ. Некоторые вопросы исполнения сонат для флейты и кларина И. С. Баха <i>Minasyan V. V. On Some Performing Arts Issues of Sonatas for Flute and</i> Piano by J. S. Bach	

Օսեպյան Մ. Մ. СХОДСТВА И РАЗНОВИДНОСТИ ШТРИХОВ В АНСАМБЛЕВОМ ИСПОЛНЕНИИ	102
Հովսեփյան Մ. Ն. Շտրիխների նմանություններն ու տարանջատումները անսամբլային կատարումներում <i>Hovsepian M. N. The Similarities and Varieties of Strokes in Ensemble Performances</i>	

Օսեպյան Մ. Մ. МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ ФОРТЕПИАННОГО ТРИО ТИГРАНА МАНСУРЯНА “ПЯТЬ БАГАТЕЛЕЙ”	112
Հովսեփյան Մ. Ն. Տրիոյի Մանսուրյանի “Հինգ բագատել” դաշնամուրային տրիոյի մեթոդական վերլուծությունը <i>Hovsepian M. N. The Methodical Analysis of Piano Trio of Tigran Mansurian's "Five Bagatelle"</i>	

Ալաверդյան Դ. Դ. О МУЗЫКЕ И МУЗЫКАЛЬНОМ ВОСПРИЯТИИ	121
Ալաверդյան Դ. Դ. Երաժշտության և երաժշտական ընկալման մասին <i>Alaverdyan T. G. On Music and Music Perception</i>	

Ալաверդյան Դ. Դ. “СТАРЫЕ” И “НОВЫЕ” ПУТИ МУЗЫКАЛЬНОГО	
--	--

ВОСПИТАНИЯ	129
<i>Ալավերդյան Տ. Գ.</i> Երաժշտական դաստիարակման «նոր» և «հին» նոդությունները	
<i>Alaverdyan T. G.</i> "Old" and "New" Ways of Musical Education	

<i>Իսրայելյան Ա. Բ.</i> ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՈՒՐԻ ՍՈՆԱՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	138
<i>Исраелян А. Р.</i> Анализ Сонаты для скрипки и фортепиано К. С. Хачатуряна	
<i>Israelyan A. R.</i> The Analysis of Karen S. Khachaturyan's Sonata for Violin and Piano	

<i>Բաժալյան Ի. Ս.</i> СОНАТНАЯ ФОРМА Л. ВАН БЕТХОВЕНА И ХАРАКТЕР ИСПОЛНЕНИЯ	146
<i>Բադալյան Ի. Ս.</i> Սոնատային ձևը Բեթհովենի ստեղծագործության մեջ և դրա կատարողական առանձնահատկությունները	
<i>Badalyan I. S.</i> The Sonata Form in Beethoven's Composition and Its Performing Peculiarities	

<i>Բաժալյան Ի. Ս.</i> СОНАТЫ Л. ВАН БЕТХОВЕНА ДЛЯ СКРИПКИ И ФОРТЕПИАНО ОП. 23 И ОП. 24: АНАЛИЗ И СТРУКТУРА	157
<i>Բադալյան Ի. Ս.</i> Բեթհովենի սոնատների ջութակի և դաշնամուրի op.23 և op.24 վերլուծությունը և կառուցվածքը	
<i>Badalyan I. S.</i> The Beethoven's op.23 and op.24 Sonatas for Violin and Piano: Analysis and Structure	

ԿՈՆՑԵՐՏԱՆԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ ԿԱԲԵՐՆԸ
КАФЕДРА КОНЦЕРТМЕЙСТЕРСКОЙ ПОДГОТОВКИ
CHAIR OF ACCOMPANIST PREPARATION

<i>Արշումանովա Ա. Վ.</i> ПСИХОЛОГИЯ МУЗЫКАЛЬНОГО ОБУЧЕНИЯ И ВОСПИТАНИЯ	169
<i>Արզումանովա Ա. Վ.</i> Երաժշտական ուսուցման և դաստիարակության հոգեբանություն	
<i>Arzumanova A. V.</i> Psychology of Music Teaching and Education	

<i>Արշումանովա Ա. Վ.</i> МУЗЫКАЛЬНАЯ ПАМЯТЬ	178
<i>Արզումանովա Ա. Վ.</i> Երաժշտական հիշողություն	
<i>Arzumanova A. V.</i> Musical Memory	

ԿԱՄԵՐԱԿԱՆ ԱՆՍԱՄԲԼԻ ԿԱԲԵՐՆԸ
КАФЕДРА КАМЕРНОГО АНСАМБЛЯ
CHAIR OF CHAMBER ENSEMBLE

<i>Լավչյան Ա. Վ.</i> ДВЕ ПОЭМЫ	187
<i>Լավչյան Ա. Վ.</i> Երկու պոեմ	
<i>Lavchyan A. V.</i> Two poems	

<i>Լավչյան Ա. Վ.</i> МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ ФОРТЕПИАННОГО ТРИО ГРИГОРА АХИМЯНА	197
<i>Լավչյան Ա. Վ.</i> Գրիգոր Հախինյանի դաշնամուրային Տրիոյի մերողական վերլուծությունը	

<i>Lavchyan A. V. Methodological analysis of G. Hakhninyan's Trio</i> <i>Օռանեսյան Դ. Ս. АНАЛИЗ ОСОБЕННОСТЕЙ СОНАТ ДЛЯ СКРИПКИ И</i> <i>ФОРТЕПИАНО ДЖ. ЭНЕСКУ</i>	208
<i>Հովհաննիսյան Գ. Ս. Զ. Էնեսկուի ֆորթալի և դաշնամուրի սոնատների</i> <i>առանձնահատկությունների վերլուծությունը</i> <i>Hochannisyan Gayane S. The Peculiarities of G. Enescu's Sonatas</i> <i>for Violin and Piano</i>	

<i>Արզումանյան Ա. Հ. Ա. Ս. ԱՐԵՆՍԿՈՒ ԴԱՇՆԱՍՏՈՒՐԱՅԻՆ ԿՎԻՆՏԵՏԻ</i> <i>ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ</i>	219
<i>Арзуманян А. А. К вопросу интерпретации Фортепианного</i> <i>квинтета А. С. Аренского</i> <i>Arzumanyan A. H. On the Interpretation Issue of A. S. Arensky's Piano Quintet</i>	

<i>Արզումանյան Ա. Հ. Է. ԳՐԻԳԻ ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՏՈՒՐԻ ՍՈՆԱՏՆԵՐԻ</i> <i>ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՍԱՐՈՂԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ</i>	227
<i>Арзуманян А. А. О конструктивной и исполнительской интерпретации</i> <i>сонат для скрипки и фортепиано Э. Грига</i> <i>Arzumanyan A. H. On Constructive and Performing Interpretations of</i> <i>E. Grig's Sonatas for Piano and Violin</i>	

ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶԵՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ
КАФЕДРА СТРУННЫХ ИНСТРУМЕНТОВ N2
CHAIR OF STRING INSTRUMENTS N2

<i>Դանիելյան Գ. Գ. ԱՆՀԱՅՏ ՀԵԴԻՆԱԿԻ «ՎԱՐԱՆԻՄԻ ՄԵՂԱՅ» ՏԱՂԻ</i> <i>ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՍՏՈՒՐԻ ՀԱՍԱՐ</i>	235
<i>Даниелян Г. Г. Переложение для скрипки и фортепиано тага Неизвестного</i> <i>автора "Мучим сомнениями" («Վարացիմ ի մեղաց»): задачи интерпретации</i> <i>Danielyan G. G. Tagh by an Unknown Author 'Staggering from Sins'</i> <i>(«Վարացիմ ի մեղաց») Arrangement for Violin and Piano</i>	

ԿԱՍԱՐՈՂԱԿԱՆ ԱՐԿԵՍԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆԻԿԱ ԵՎ
ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՌԻՈՂ

КАФЕДРА ИСТОРИИ, ТЕОРИИ ИСПОЛНИТЕЛЬСТВА И ПЕДАГОГИКИ
CHAIR OF PERFORMING ARTS HISTORY, THEORY AND
TEACHING METHODS

<i>Գրիգորյան Ա. Ե. К ВОПРОСУ ОБ ОСОБЕННОСТЯХ МУЗЫКАЛЬНО-</i> <i>ИСПОЛНИТЕЛЬСКОГО ИСКУССТВА</i>	247
<i>Գրիգորյան Լ. Ե. Երաժշտական արողականության հարցերի շուրջ</i> <i>Grigoryan L. Y. On Some Music Performing Arts Issues</i>	

<i>Բաղրամյան Դ. Գ. ЗАМЕТКИ О ДЕТСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ</i> <i>ПЕДАГОГИКЕ В АРМЕНИИ.</i>	255
<i>Բաղրամյան Ժ. Գ. Հայաստանում մանկական երաժշտական մանկավարժության</i> <i>մասին նշագրումներ</i> <i>Baghranyan J. G. Notes on Children's Music Education in Armenia</i>	

<i>Դուրյան Լ. Ս. МЕТОДЫ РАБОТЫ НАД АНСАМБЛЕВЫМИ</i> <i>ПРОИЗВЕДЕНИЯМИ В КЛАССЕ ФОРТЕПИАНО</i>	265
--	-----

Թունյան Լ. Ս. Անսամբլային ստեղծագործություններում աշխատանքային մեթոդները ՍԵՂ-ի դաշնամուրի դասարանում
Tunyan L. S. Working methods of the ensemble works in a piano class

Тунян Л. С. НЕКОТОРЫЕ МЕТОДИЧЕСКИЕ УКАЗАНИЯ
 КОНЦЕРТМЕЙСТЕРУ-ПЕДАГОГУ В РАБОТЕ С ВОКАЛИСТАМИ 273

Թունյան Լ. Ս. Սի բանի մեթոդական ցուցումներ կոնցերտմայստեր-դասավանդողին երգիչների հետ աշխատանքում
Tunyan L. S. Some Methodical instructions accompanist and teacher in working with vocalists

ՄԱՐԿԻՍԱԿԱՆ ԴԱՇՆԱՄԻՐԱՅԻՆ 2-ԲԴ ԱՄԲԻՈՆ
КАФЕДРА СПЕЦИАЛЬНОГО ФОРТЕПИАНО N 2
CHAIR OF SPECIAL PIANO N 2

Акопян П. С. О НЕКОТОРЫХ АСПЕКТАХ СТАНОВЛЕНИЯ
 ПЕВЦА-ИСПОЛНИТЕЛЯ 282

Հակոբյան Ն. Ս. Երգիչ-կատարողի կայացման որոշ տեսակետները
Hakobyan N. S. Some Aspects of Soloist's Success

Акопян П. С. А. Н. СКРЯБИН: НАЧАЛО ПУТИ. ПЕРВЫЕ СОНАТЫ 296

Հակոբյան Ն. Ս. Ա. Ն. Սկրյաբինի ստեղծագործական ուղու սկիզբը.
 ստաջին սոնատները
Hakobyan N. S. The Beginning of A. Scriabin's Creative Career:
 the First Sonatas

ՄԱՐԿԻՍԱԿԱՆ ԴԱՇՆԱՄԻՐԱՅԻՆ 2-ԲԴ ԱՄԲԻՈՆ
КАФЕДРА СПЕЦИАЛЬНОГО ФОРТЕПИАНО N 2
CHAIR OF SPECIAL PIANO N 2

Сарգսյան А. В. ФОРТЕПИАННЫЕ УПРАЖНЕНИЯ Л. ВАН БЕТХОВЕНА ... 313

Մարգարյան Ա. Վ. Լ. վ. Բեթհովենի դաշնամուրային վարժությունները
Sargsyan A V. L. van Beethoven's Piano Exercises

ԿՈՆՇԵՐՏՈՒՄԱՅԻՆԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱՆԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
КАФЕДРА КОНЦЕРТМЕЙСТЕРСКОЙ ПОДГОТОВКИ
CHAIR OF ACCOMPANIST PREPARATION

Մկրտչյան Յ. Ի. ЗНАЧЕНИЕ ФОРТЕПИАННОЙ ФАКТУРЫ
 В АНСАМБЛЕВОМ ИСПОЛНИТЕЛЬСТВЕ 326

Մկրտչյան Յ. Ի. Անսամբլային կատարողական արվեստում դաշնամուրային
 ֆակտուրայի նշանակությունը
Mkrtychyan Y. I. The value of piano texture in Ensemble Performance

Հազարյան Յ. Դ. ՌՈՍՄԱՍԻ ԱՆՑԱԾ ՌՌԳԻՆ ԵՎ ԴԱՇՆԱՄԻՐԻ
 ՆՎԱԿԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ 338

Հազարյան Յ. Դ. Прошедший путь романса и роль фортепианного
 аккомпанемента в произведениях армянских композиторов
Ghazaryan Y. D. The Covered Path of Romances and the Role of Piano
 Accompanist in Armenian Composers' Works

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ Х. АБОВЯНА
ФАКУЛЬТЕТ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ**

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KH. ABOVYAN
FACULTY OF ART EDUCATION**

**ԽՈՐԵՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՅՆԱԳՐՈՒՆ ԿԱԹԵԴՐԱ
КАФЕДРА ДИРИЖИРОВАНИЯ И ПОСТАНОВКИ ГОЛОСА
CONDUCTING AND VOICE TRAINING CHAIR**

Գասպարյան Ա. Ս. Կանանց երգչական ապարատի առանձնահատկությունները և ստողչական խնդիրները	345
<i>Gasparjan A. S. Особенности и гигиена женского голосового аппарата</i> <i>Gasparjan A. S. The Peculiarities and Hygiene of Female Vocal Apparatus</i>	
ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ	353
СОДЕРЖАНИЕ	
CONTENT	
ՆՈՐՄԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ	359

ՆՈՐՄԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«ԵՊԿ հրատարակչության» բուհական գիտական հրատարակչության ժողովածուում տպագրությանը ներկայացվող հոդվածներին

1. ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրում, բուհի ժողովածուներում տպագրվող հոդվածները և նույնպիսի ու երաժշտագիտական գրականությունն ընդգրկում են 070 100 «Երաժշտական արվեստ» մասնագիտության ուսումնասիրությունների բոլոր բնագավառները:

Սույն պահանջները սահմանվում են ըստ «ԵՊԿ հրատարակչության» Կանոնակարգի, ՀՀ բոհի որոշումների և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի:

Հրատարակչությունը տեքստի առանձնացման համար օգտագործվում են շեղատառը (*italic*), ընդգծումը (underline) և թավատառը չեն թույլատրվում: Յրիվ շարվածքի համար չի թույլատրվում անջատել տառերը (*space*-ի օգտագործումը):

Հայերեն տեքստերը ընդունվում են KDVin ծրագրի Arial LatArm, Dallak Time, Times LatArm և նմանատիպ այլ տառատեսակներով, միայն ոչ Unicode:

Փակագիծ նշանի համար ընդհանուր առմամբ օգտագործվում է (), մեջբերման դեպքում՝ [] ներսում սովորական՝ () իսկ չակերտների նշանի համար՝ « »:

Ռուսերեն հոդվածներում մեջբերման դեպքում օգտագործվում են չակերտներ «», իսկ մեջբերման ներսում՝ “”:

Ռուսերենում անջատման գիծ՝ “”-ը, նշանի համար օգտագործվում է [Ct+Alt+միմուս] ստեղծների կոմբինացիան, իսկ “կարճ” անջատման գիծ՝ “”-ը, նշանի համար՝ [Ct+միմուս] կոմբինացիան:

Ստեղծագործությունների անվանումները գրվում են սովորական տառատեսակով, մեծատառով (եթե ծրագրային է և չակերտներում), եթե անվանումը և ժանրը համընկնում են նույնպես: Ժանրերի անվանումները գրվում են փոքրատառով: Սիմֆոնիաների, կոնցերտների, սոնատների հերթական համարները գրվում են արաբական թվերով և զծիկով, այնուհետև՝ վերջածանցը (օրինակ՝ 1-ին կամ 2-րդ Սոնատ) կամ բառերով:

Ստեղծագործության *op.* նշելիս՝ այն չի առանձնացվում ստեղծագործության անվանումից ստորակետով (դաշնամուրի *C-dur* 2-րդ Կոնցերտ *op.29*):

Տոնայնությունը գրվում է լատիներեն, սովորական տառատեսակով Times New Roman (*C-dur, g-moll*), հնչյունների անվանումները՝ լատիներեն տառերով, շեղատառով (*h, g*):

Թվականները նշվում են արաբական թվերով և վերջածանցը կամ թվականը և կետ (օրինակ՝ 1998-ին կամ 1998 թ.), տասնամյակները՝ արաբական (90-ականներին), դարերը և հազարամյակները՝ հռոմեական թվերով (XX դար, II հազարամյակ):

Չի թույլատրվում հռոմեական թվերը նշելու համար ռուսերեն “X”, “Y”, “III”, “II” տառերի օգտագործումը:

Տեքստում գրվում է մատենագիտական ցուցակի տվյալ աղբյուրի հերթական համարը: Մատենագիտական ցուցակը տեղադրվում է հոդվածի վերջում այբբենական կարգով, սկզբից ներկայացվում են մայրենի լեզվով գրված հրատարակումները:

Տվյալները անջատվում են ստորակետով՝ հայերենում, կետ և ստորակետով՝ ռուսերենում և այլ լեզուներում:

Գրականությունը արձանագրել հետևյալ հաջորդականությամբ՝ հեղինակը (ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը), աշխատության անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը:

Ժողովածուի դեպքում՝ հեղինակի տվյալները, հոդվածի անվանումը, ժողովածուի պայմանական նշանը / ամսագրի և թերթի դեպքում՝ երկու գծիկ // անվանումը, տարեթիվը, ժողովածուի դեպքում /վերնագիրը, փակագծերում/ կազմողը (կազմող՝ ...), հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը և տվյալ հոդվածի էջերը:

Գրականության վկայակոչումը տեքստում. ներկայացվում են սկզբնաղբյուրի համարը, օգտագործված էջը կամ էջերը փոքրատառով (12, էջ 71-72 կամ 12, էջ 5) մատենագիտական ցուցակում ցույց տվող թվերի օգնությամբ կլոր փակագծերում, հայերենում տարանջատելով ստորակետով, իսկ ռուսերենում՝ (12. С. 71-72) և այլ լեզուներում՝ կետով և գլխատառերով, օրինակ՝ անգլերենում՝ (12. P. 71-72):

Նոտային օրինակները և պատկերագրողները ներկայացվում են առանձին ֆայլերի տեսքով tiff կամ jpg (grayscale – 300 dpi):

Հոդվածի ներսում նոտային օրինակի և պատկերագրողման վկայակոչումը տրվում է փակագծում առանձին պարբերությամբ.

(Օրինակ 1)

(Պատկերագրողում 3)

Ձեռագիրը պետք է համապատասխանի հոդվածների ձևավորման պայմաններին:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԵՊԿ հրատարակչությունը» ընդունում է.

- հոդվածի սկզբում գրվում է վերնագիրը (գլխատառերով),
- հաջորդ տողում՝ հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը (գլխատառերով), նաև անգլերեն տառադարձությամբ,
- հեղինակներին անհրաժեշտ է ներկայացնել.

1. հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը (լրիվ անվանումը և տեղը), պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը (հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ),

3. հակիրճ ինքնակենսագրությունը (մինչև 1000 նիշ) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որը պետք է հրատարակվի,

4. հանգուցային բառեր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,

5. հողվածները կարող են ներկայացվել բնագրերով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ եվրոպական որևէ լեզվով. դրանք պետք է ունենան մյուս երկու լեզուներով ամփոփում (մինչև՝ 600 նիշ հայերեն և ռուսերեն, 1000 նիշ անգլերեն լեզվով):

- հողվածները և աղբյուրները ընդունվում են էլ-փոստով (մեկ ֆայլով նոտային օրինակները և պատկերները յուրաքանչյուրն առանձին ֆայլով (ֆայլի անունը բաղկացած է հեղինակի անունից և ազգանունից և պատկերների համարների անվանումից) կամ էլեկտրոնային կրիչներով, ֆայլը անվանվում է հեղինակի անուն ազգանվամբ:

- ֆորմատ՝ U4,
- տեքստը հանձնել տպած U4 թղթով, առանձին ֆայլով .doc,
- տեքստը հավաքել առանց Tab ստեղծող օգտագործելու և նոր պարբերությամբ,
- տեքստի լուսանցքները. վերև 2.5 սմ, ներքևում 2.5 սմ, աջ կողմում՝ 1.5 սմ, ձախ կողմում՝ 3 սմ, հայերեն, անգլերեն, ռուսերեն,
- հիմնական տեքստի տառաչափը՝ 12,
- միջտողայինը՝ 1.5,
- նկարները՝ մինչև 12.5սմ,
- նոտաները, աղյուսակները և գրաֆիկան՝ սև սպիտակ,
- ծավալուն հողվածները կարող են ընդունվել խմբագրական խորհրդի որոշմամբ,
- տողատակը՝ տեքստի էջում աստղանիշով, առանց ավտոմատ հրահանգի, անմիջապես* հետո հաջորդ տողում՝ 10 տառաչափով:
- աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, փակագծում՝ կազմողը կամ խմբագիրը, հրատարակության վայրը, հրատարակչությունը, տարեթիվը (մամուլի դեպքում նաև համարը, թերթերի դեպքում՝ տողատակում), էջը:
- ծանոթագրությունը վերջում, համարակալումը՝ միջանցիկ:
- հողվածների ծավալը 0.5-1.0 մամուլ (20000-40000 նիշ և հղումները ներառված տեքստի ծավալում):
- առանց տողադարձի, առանց էջում տողատակների,
- հողվածի առանձնահատկություններից ելնելով համաձայնեցնելով խմբագրական խորհրդի հետ հնարավոր է նշված ծավալը ավելացնել:

3. ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԻ ՊԸՀԱՆՋՆԵՐԸ

Ամփոփման գրելաձևը ազատ է: Պետք է արտահայտվեն հետևյալ տեսանկյունները որպես գիտական աշխատանքի բնութագրիչ հիմք.

- գիտական հիմնախնդիրը, հեղինակի լուծումը և նրա գիտական նորությունը,
- հիմնախնդրի արդիականությունը,
- ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը,
- նրա հեռանկարը (արդիականությունը և նշանակությունը դիտարկվող ժամանակաշրջանում),
- հիմնախնդրի շարադրման մակարդակը (ոչ ակնհայտ լուծումները, տեսական փնտրտուքների անհրաժեշտությունը, գործնականում դժվարությունների հաղթահարումը),

• հեղինակի դրույթների և խզումանկաների համաստեղատվության մասին
անհամապատասխանությունը զիտարկվող աշխատանքի տվյալ բնագավառում
գոյություն ունեցող ժամանակակից գիտական շարադրանքին:

• զիտարկվող հիմնախնդրի առնչությամբ առաջարկվող հեղինակային լուծում
ներքին:

• աշխատանքի գնահատականը լեզվի, տրամաբանության, նյութի շարադրանք-
ման, հիմնավորման, ընդհանրացումների և խզումանկան տեսանկյուններից:

4. ՀՈԳՎԱԾԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդվածները կարող են ամսագրի խմբագրությանը հանձնվել հոդվածի հրա-
պարակման թույլտվության միջոցով կամ ուղղման դեպքում, ամբիոնների հրաշխա-
վորմամբ, համապատասխան խորհրդակցությունների կամ գիտաժողովների ար-
դյունքում (ամբիոնի նիստի քաղվածք) և հանձնվում են մասնագետների (2 գրախոս
1-ին գիտական աստիճան ունեցող երաժշտագետ, 2-րդ՝ համապատասխան ամբի-
ոնի պրոֆեսոր կամ դոցենտ) գրախոսության համար:

Գրախոսը որոշում է հոդվածի հրապարակման նպատակահարմարությունը,
հնարավոր է նյութի լրացուցիչ մշակումից և խմբագրումից հետո: Էական փոփո-
սությունների անհրաժեշտության դեպքում հոդվածը հեղինակային լրացուցիչ
մշակումից հետո կրկին ուղարկվում է գրախոսության նույն մասնագետին:

Դասագրքերի և ձեռնարկների դեպքում դիմումը ընկտորին և թույլատրությունը
արտադիր է:

Հոդվածները խմբագրությանը տրվում են անհատույց. ձեռագրերը չեն վերա-
դառնում:

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМЕНИ КОМИТАСА
YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՐԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ
8-9.1/2011-2012

ВЕСТНИК ЕРЕВАНСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ
КОНСЕРВАТОРИИ ИМЕНИ КОМИТАСА

УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ СТАТЬИ
8-9.1/2011-2012

Հիմնադիրներ՝ պրոֆեսոր, հրատարակչական խորհրդի նախագահ Ս. Գ. Սարաջյան,
«ԵՊԿ հրատարակչության» տնօրեն-հրատարակիչ, նրաժշտագետ Գ. Կ. Շազոյան
Կազմող և պատասխանատու զլխավոր խմբագիր, սրբագրիչ՝ Գ. Կ. Շազոյան
Խմբագիրներ՝ Գ. Ն. Մուրադյան, Վ. Խ. Թովմասյան,
Մ. Բ. Կիրակոսյան (ռուս. լեզվով),
Ս. Մ. Ազնաուրյան (ռուս. լեզվով),
Ռ. Լ. Մուսեյան (անգլ. լեզվով)
Համակարգչային շարվածքը՝ Մ. Բ. Կիրակոսյանի (ռուս. լեզվով),
Ս. Մ. Ազնաուրյան (ռուս. լեզվով),
Ռ. Լ. Մուսեյան (անգլ. լեզվով)
Նոտային շարվածքը՝ Մ. Բ. Կիրակոսյանի
Գրքի ձևավորումը և էջադրումը՝ Գ. Վ. Հովհաննիսյանի
Կազմի ձևավորումը՝ Գ. Ս. Երիջանյանի